ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՎՐԱՑ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Ե 381

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ պատմության ֆակուլտետի
գիտական խորհուրդը

Գրախոսներ՝ պ.գ.դ., պրոֆ. Էդիկ Մինասյան
պ.գ.դ., պրոֆ. Արտակ Մովսիսյան

Արման Եղիազարյան
Ե 381 Վրաց Բագրատունիների թագավորության ձևավորման գործընթացը: Ա. Եղիազարյան. - Եր., ԵՊՀ հրատ., 2018, 132 էջ:

Մենագրությունը նվիրված է Հայաստանի և Այսրկովկասի պատմության միջնադարյան շրջանի հենքային հիմնահարցերից մեկին՝ վրաց Բագրատունիների թագավորության ձևավորմանը:

Խնդրո առարկա հիմնահարցը հայ պատմագիտության մեջ առաջին անգամ ենթարկված է ամբողջական ու խորքային ուսումնասիրության, հստակեցված է դրա շուրջ 200-ամյա ընթացքի ժամանակագրությունը, լուսաբանված են բոլոր հիմնական իրադարձությունները:

Հասցեագրված է կովկասագետներին ու հայագետներին, ինչպես նաև միջնադարով հետաքրքրվող ընթերցողներին:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2306-0

© ԵՊՀ հրատ., 2018
© Եղիազարյան Ա., 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԿՂԱՐՋՔՈՒՄ ԵՎ ԿՐՈՆԱԴԱՎԱՆԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՍԿԻԶԲԸ 8
1.1. Բագրատունիների ճյուղի հաստատումը Կղարջքում և նրանց տիրույթները 8
1.2. Կղարջքի բնակչությունը և դավանանքը 14
1.3. Վիրքը 9-րդ դարում (ընդհանուր ակնարկ) 22
1.4. Հայոց թագավորները և Կղարջքի կուրապաղատները 24
1.5. Քաղկեդոնականությունը և վրացական թագավորության պետական գաղափարաբանությունը 28
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՀԱՄԱՎՐԱՑԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ 34
2.1. Արտաքին և ներքին իրադրությունը 9-րդ դարում և Կղարջքի կուրապաղատության տարածքային ընդարձակման միտվածությունը 34
2.2. Կղարջքի հոգևոր իշխանության մասնակի տարածումը Սամցխեում 47
2.3. Ատրներսեի Բագրատունու նկրտումները Այսրկովկասի քաղկեդոնական միջավայրի և հայոց գահի նկատմամբ 50
2.4. Համավրացական թագավորության ստեղծման նախադրյալները 63
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆ ԵՐԿՐԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ 73
3.1. Իրադարձություններն Այսրկովկասում 10-րդ դարի կեսերին և աբխազաց թագավորների՝ քաղկեդոնականներին միավորելու գործունեությունը 73

3.2. Տայքի Դավիթ կուրապաղատը և Այսրկովկասի քաղկեդոնականների միավորման գործընթացը 87
3.3. Աբխազաց թագավոր Բագրատ Գ-ն և Այսրկովկասի քաղկեդոնականների միասնական թագավորության ձևավորումը 99
ՎԵՐՋԱԲԱՆ 117
Summary 120
ՑԱՆԿԵՐ 122

ՆԱԽԱԲԱՆ

Վրաց Բագրատունիների թագավորության ձևավորման գործընթացը պատկանում է Հայաստանի և Այսրկովկասի երկրների պատմության միջնադարյան շրջանի ամենակարևոր և միևնույն ժամանակ ամենահակասական հիմնահարցերի թվին:

9-րդ դարում Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Կղարջք գավառում ձևավորված այսպես կոչված «վրաց» թագավորության ստեղծողները ու հաջողությամբ հզորացնողները արաբական տիրապետության դեմ հայոց 774-775 թթ. ապստամբության պարտությունից հետո այնտեղ հաստատված Բագրատունի իշխաններն էին[1]: Այդուհետ Կղարջքի Բագրատունիները կարողացան տիրել նաև Վիրքին, Աբխազաց (Եգերաց) թագավորությանը և Կախքին՝ ձևավորելով Աբխազավրացական թագավորությունը: Նրանց հիմնած թագավորությունը շատ ավելի երկարատև եղավ, քան գլխավոր՝ Շիրակի ճյուղինը:

Այդ թագավորության ձևավորումը տեղի ունեցավ հայկական և վրացական խառը ազգաբնակչության (առաջինը բացարձակ մեծամասնություն էր), հայադավանության և վրացադավանության (քաղկեդոնականության) զուգահեռ գոյակցության պայմաններում: Հայկական և վրացական մշակույթների «միախառնման» դաշտ դարձած պատմաաշխարհագրական այս ամփոփ միջավայրում ծնվեց վրացա-

---

[1] Վրաց պատմագրության մեջ ընդունված է այն տեսակետը, որ 9-րդ դարի վերջին ձևավորված Բագրատունիների վրացական թագավորությունը սաղմնավորվել է Կղարջքում և իբր թե Տայքում: Ավելին՝ վրացի որոշ գիտնականներ փորձում են բացառել ոչ միայն Կղարջքի Բագրատունիների ազգակցական կապը Շիրակի Բագրատունիների հետ, այլև վերջիններիս դերակատարությունը Վիրքում: Կղարջքի (նաև՝ Տայքի) բնակչությունը դիտարկվում է իբրև գերազանցապես վրացական ազգաբնակչություն: Տե՛ս С. Джанашиа, Об одном примере искажения исторической правды. По поводу книги Н. Токарского “Архитектура древней Армении”, Тб., 1947, с. 9-22: Տե՛ս նաև՝ “Очерки истории Грузии”, т. II, Тб., 1988, гл. VI, §4 և այլն:

կան պետականության գաղափարաբանությունը և նրա կրող քաղաքակրթական միավորը՝ Կղարջքի ազգաբնակչությունը[2]:

Հայտնի է, որ քաղաքակրթության ձևավորումը ենթադրում է սոցիալական համակեցության մի ձև՝ խարսխված որոշակի աշխարհագրական, էթնոժողովրդագրական, պատմական, մշակութային, հոգևոր-կրոնական և այլ հենքերի վրա: Վերջինների հիման վրա քաղաքակրթությունները ձեռք են բերում որոշակի առանձնահատկություններ[3]: Այդ իմաստով Կղարջքն ներկայացնում էր միջնադարյան հայկական քաղաքակրթությունից հոգևոր-մշակութային առումով աստիճանաբար հեռացող և առանձնացող մի համակեցական միջավայր: Ու թեև այստեղ հայերը բացարձակ մեծամասնություն էին կազմում, սակայն արտաքին ազդեցության ներքո Կղարջքում ձևավորվել էին հարևան վրացական մշակութային միջավայրին հատուկ հոգևոր-կրոնական բնութագրիչները: Երկար ժամանակ և նաև խնդրո առարկա շրջանում Կղարջքը շարունակում էր մաս կազմել հայ ժողովրդի միալեզվյան քաղաքակրթությանը, սակայն արժեքային առումով արդեն ստացել էր այլ ձևավորիչ հենք՝ հոգևոր-կրոնականը: Մյուս կողմից՝ Կղարջքն անջրպետված էր նաև վրացական մշակութային միջավայրից այն պատճառով, որ Վիրքը 9-րդ դարում գտնվում էր Տփղիսի արաբական ամիրայության կազմում: Այս իրավիճակը հանգուցալուծվեց, երբ Կղարջքում հաստատված Բագրատունիները, որոնք ամեն գնով փորձում էին ստեղծել սեփական անկախ իշխանապետությունը, հայկական քաղաքակրթությունից հեռացող և վրացական հոգևոր-

---

[2] Վրաց պատմագիտության մեջ խնդրո առարկա շրջանում վանական ու ժողովրդագրական հոսքը Սամցխե և Կղարջք դիտվում է որպես գաղութացման նոր գործընթաց: Տե՛ս Ն. Վաչնաձե, Սերապիոն Զարզմեցու վարքը որպես պատմական աղբյուր, Թբ., 1975, էջ 199 (վրացերեն): Ըստ Կ. Կեկելիձեի՝ այդ գավառներում բնակչության նոսրությունը նախքան վրացական բնակչության ներհոսքը հետևանք էր Բյուզանդիայում տարածված և Կղարջք ներթափանցած խոլերայի: Տե՛ս Կ. Կեկելիձե, Վրացական գրականության պատմություն, Թբ. 1960, էջ 93 (վրացերեն):

[3] Տե՛ս F. Braudel, A history of civilizations, New York, 1995, p. 18:

կրոնական միջավայրում ընդգրկվող, սակայն Վիրքից կտրված Կղարջքում աստիճանաբար կենտրոնացան վրացական թագավորություն՝ վրացադավանների պետություն հիմնելու գաղափարի վրա: Ուստի հայ պատմիչները, լավագույնս տեղյակ լինելով, որ Կղարջքում բնակվում են հիմնականում հայեր, Բագրատունիների հաստատումից սկսած, այդ և հարևան շրջանները կոչում են «վրաց աշխարհ», այսինքն՝ երկրամաս, որտեղ բնակվում են վրացադավաններ՝ անկախ ազգային պատկանելությունից:

Կղարջքում ձևավորվող ինքնուրույն միջավայրն ուներ մի կարևոր յուրահատկություն. այն նպատակամղված էր հարևան վրացադավան երկրամասերին: Վերոհիշյալ թիրախային առանձնահատկությունը բխում էր Կղարջքի մշակութային միջավայրի հիմնական՝ բնակչության հոգևոր-դավանական բնութագրից: Այդ բնութագիրն ամբողջացնելու և ըստ այդմ՝ առանձին քաղաքական ու մշակութային միջավայր ձևավորելու համար Կղարջքի աշխարհիկ և հոգևոր տերերը, ի հակադրություն այդ և հետագա շրջանում Կղարջքի բնակչության հայալեզու լինելու իրողության, որ նրանք այդպես էլ ի զորու չեղան փոփոխելու, աստիճանաբար ձևավորում են սեփական դպրությունը՝ վրացերեն:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԿՂԱՐՋՔՈՒՄ ԵՎ ԿՐՈՆԱԴԱՎԱՆԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՍԿԻԶԲԸ

1.1. Բագրատունիների ճյուղի հաստատումը Կղարջքում և նրանց տիրույթները

Վարդան վարդապետը հաղորդում է, որ 774-775 թթ. ապստամբությունից հետո դրան մասնակցած Բագրատունիները, փախչելով արաբների վրեժխնդրությունից, հեռացան իրենց տիրույթներից և ապաստանեցին Կղարջքում: Ըստ պատմիչի՝ Կղարջք հեռացած Բագրատունին եղել է Վասակը՝ հայոց իշխան Աշոտ Բագրատունու (732-748) որդին[4]: Կղարջքի, այսպես կոչված, «վրաց» Բագրատունիների ծագման մասին կարևոր հիշատակություն է պահպանվել նաև Թովմա Մեծոփեցու երկում. «[Բագրատունիները] թագաւորք եղեն յետ ցեղին Արշակունեաց... եւ ի նեղութենէ անօրինաց փախուցեալ ի տունն Վրաց՝ եղեն ուրացօղք ճշմարտութեանն եւ հաւատովքն քաղկեդոնիկ»[5]:

«Քարթլիի մատյանը» հաղորդում է, որ Վասակի որդի Ատրներսեհը տիրում էր Շավշքին, Կղարջքին, Նիգալին, Ագարին (Էգր կամ Աճարա), Սամցխեին, Ստորին Տայքին և Ասիսփորիին (իմա՛ Արսեաց փոր)[6]: Ըստ Դավթի որդի Սմբատի՝ Ատրներսեհի որդի Աշոտ կուրապաղատը (մահ. 826 թ.), որին Բյուզանդիայի կայսրը կուրապաղատի

---

[4] Տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, ի Սուրբ Ղազար, 1862, էջ 81-82:

[5] Տե՛ս «Թովմա վարդապետի Մեծոբեցւոյ Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց», Փարիզ, 1860, էջ 19-20:

[6] Տե՛ս «Քարթլիի մատյան», Ա, թարգմանությունը և ծանոթագրությունները Վ. Մարտիրոսյանի և Հ. Մկրտումյանի, «Լրաբեր (հաս. գիտ.)», 1989, N 9, էջ 62:

կոչում էր շնորհել[7], իշխում էր միայն «Շավշքում և Կղարջքում»[8]: Այնուհետև հեղինակը տեղեկացնում է, որ Աշոտի տիրույթներն էին Շավշքը, Կղարջքը և Նիգալը[9]: Այն, որ Աշոտ կուրապաղատի իշխանությունը տարածվում էր միայն Կղարջքի և հարևան որոշ շրջանների վրա, ցույց են տալիս նաև Գեորգի Մերչուլի հաղորդումները, ըստ որոնց՝ Կղարջքի հոգևոր առաջնորդ Գրիգոր Խանձթեցու ողջ եկեղեցաշինական գործունեությունը, որը հովանավորվում էր Աշոտ կուրապաղատի կողմից, ամփոփվում էր միայն Կղարջքով[10]: Աբխազաց թագավորին նկարագրելով Կղարջքի կուրապաղատության վանքերն ու եկեղեցիները՝ Գրիգոր Խանձթեցին մասնավորապես պատմում է, որ դրանք մի կողմից սահմանակցում են Աբխազաց թագավորությանը Ղադո լեռներով (Մոսքական լեռների շրջանում), իսկ մյուս կողմից՝ շրջապատված են Շավշքի մեծ գետերով[11]:

Փաստորեն՝ Ատրներսեհից հետո Կղարջքի Բագրատունիների տիրույթները զգալիորեն կրճատվել էին: Մեր կարծիքով, իրադրությունը զարգացել է հետևյալ ձևով: 775 թ., երբ ճնշվեց ապստամբությունը Հայաստանում, Տայքին տիրող Մամիկոնյանները ծանր հարված ստացան և դրանից հետո այլևս ուշքի չեկան: Երբ Վասակ Բագրատունին իր որդի Ատրներսեհի հետ 775 թ. գաղթեց Կղարջք[12], Բագրատունիները դեռևս չէին տիրում Տայքին: Այն գտնվում էր անտերունչ վիճակում: Վասակի և Ատրներսեհի՝ Տայքի հյուսիսարևմտյան

---

[7] Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 77:

[8] Տե՛ս Сумбат Давитис-дзе, История и повествование о Багратионах, пер. М. Лордкипанидзе, Тб., 1979, с. 31:

[9] Տե՛ս Сумбат Давитис-дзе, էջ 31-32:

[10] Տե՛ս Георгий Мерчуле, Житие Св. Григория Хандзтийского, грузинский текст, введение, издание, перевод Н. Марра. “Тексты и разыскания по армяно-грузинской филологии”, т. VII, СПб., 1911, գլ. X, XXVIII, XXVIII, XXXIV և այլն:

[11] Տե՛ս նույն տեղում, գլ. XXII:

[12] Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Ա, Ե., 2006, էջ 485: Ա. Տեր-Ղևոնդյանը կարծիք է հայտնել, թե այդ իրադարձությունը տեղի է ունեցել 775-784 թթ.: Տե՛ս А. Тер-Гевондян, Армения и Арабский халифат, Е., 1977, с. 124:

անմատչելի շրջաններում, այսինքն՝ Պարխարյան լեռներում գտնվող Արսեաց փոր գավառում հաստատվելն այդ առումով հասկանալի է: Բայց երբ հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունին ժառանգական իրավունքով տիրեց Տայքին[13], Վասակը և Ատրներսեհը քաշվեցին Կղարջք: Այդ պատճառով ո՛չ Աշոտ կուրապաղատը, ո՛չ էլ, ինչպես կտեսնենք, նրա որդիները Տայքի որևէ հատվածի չէին տիրում: Ինչ վերաբերում է «Ստորին Տայքին», ապա այն Տայքի ամենահյուսիսային՝ Կղարջքի սահմանին գտնվող Կարնի-Տայս (Տաոս-Կարի) բնակավայրի (թարգմանաբար՝ «Տայքի դուռ») շրջակայքի և Կղարջքի մի մասի (Արտանուջ բերդով) ընդհանրական անվանումն էր[14]: Ըստ Ղևոնդի՝ 774-775 թթ. ապստամբությունից հետո ստեղծված անելանելի իրավիճակից մղված՝ 789 թ. Ամատունիները և որոշ այլ նախարարներ՝ 12 հզ. ժողովրդով, հեռացան իրենց տիրույթներից և հասան «ի սահմանս Վրաց ի գաւառն Կող»[15]: Այս վկայությունը ցույց է տալիս, որ Տայքի հյուսիսային Կող գավառը ոչ մի առնչություն չուներ «վրաց սահմանների» հետ[16]: Եթե Վասակն արդեն հեռացել էր Կղարջքի կողմերը 775-ին կամ դրանից քիչ անց, ապա 789 թ. դրությամբ Կող գավառը, ըստ

---

[13] Տայքը, ինչպես նաև 774-775 թթ. ապստամբությունից հետո Հայաստանի քաղաքական թատերաբեմից հեռացած Մամիկոնյանների և Կամսարականների մյուս տիրույթները, ժառանգական իրավունքով անցել էին Բագրատունիներին, քանի որ հայոց իշխան Աշոտ Մսակերի մայրը Մամիկոնյան էր, իսկ Մամիկոնյաններն ապստամբությունից առաջ տիրում էին Տայքին: Տե՛ս «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», հրատ. Ստ. Մալխասեանց, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 106: Վարդան վարդապետը հաղորդում է. «Աշոտ և Շապուհ... գրաւեցին յինքեանս զՇիրակ և զԱշոցք, և զգաւառն Տայոց»: Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 76:

[14] Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Ե., Ե., 2012, էջ 387:

[15] Տե՛ս «Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 168-169:

[16] Ս. Ջանաշիան փորձում է համոզել, թե Ղևոնդի «հասանէր ի սահմանս Վրաց ի գաւառն Կող» արտահայտությունը ցույց է տալիս, որ Կող գավառը մտնում էր Վիրքի մեջ: Տե՛ս С. Джанашиа, նշվ. աշխ., էջ 14-15: Այդ հիշատակությունը հակառակ իմաստ է արտահայտում, և, բացի այդ, բերված հիշատակության մեջ «Վիրքը» բուն Վիրքից տարբերվող վարչաքաղաքական հասկացություն է:

Ղևոնդի, ինչպես նաև ամբողջ մնացյալ Տայքը, դուրս էին նրա տիրույթներից: Պատմիչի ընկալմամբ «վրաց սահմաններ» հասկացությունը նույնանում էր Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանի Երկրորդ Արմինիա միավորին, որն ընդգրկում էր նաև Գուգարքի մի մասը: Այդ պատճառով էլ Կող գավառից հյուսիս գտնվող Գուգարքի Կղարջք գավառը հիշատակվում էր «վրաց սահմաններում»: Այստեղ, կարծում ենք, կար նաև տվյալ հասկացության երկրորդ և, մեր կարծիքով, գլխավոր ընկալումը՝ վրացադավան բնակչության առկայության փաստի հաշվառումը:

9-րդ դարի սկզբին Կղարջքի Աշոտ կուրապաղատը ակտիվ գործունեություն է ծավալում: Վարդան վարդապետը տեղեկացնում է, որ «...տայր իշխանն Իսմայելի Աշոտի որդւոյ Ատրներսեհի որդւոյ Վասակայ, որդւոյ Աշոտոյ Հայոց իշխանի՝ զերկիրն Վրաց. որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան»[17]: Աշոտը սկզբում «տիրեաց ի Կաղրջաց մինչև ի Տփխիս, լեռնակողմամբն հանդերձ»[18]: Այսինքն՝ Աշոտը տիրում էր Գուգարքի Կղարջք գավառին և այնտեղից էլ սկսեց սկզբում Գուգարքի արևելյան մասի նվաճումը[19]: Ուստիև հստակորեն նշված է՝ «Կղարջքից մինչև Տփղիս»:

Այնուհետև Աշոտ կուրապաղատին հաջողվեց զբաղեցնել Վիրքի՝ մինչև Քսան գետն ընկած հողերը[20]: Սակայն նա բախվեց Տփղիսի ամիրայությանը, պարտություն կրեց ու նահանջեց Կղարջք՝ ամրանալով Արտանուջ բերդում[21]:

Վերևում տեսանք, որ Կղարջքում հաստատված Վասակ Բագրատունու որդի Ատրներսեհը տիրում էր, ի թիվս այլ շրջանների, նաև Սամցխեին, բայց վերջինս դուրս էր մնացել նրա որդի Աշոտ կուրա-

---

[17] Վարդան վարդապետ, էջ 78:
[18] Նույն տեղում:
[19] Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Ե, էջ 389:
[20] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 262:
[21] Տե՛ս Вахушти Багратиони, История царсва Грузинского, пер. Н. Накашидзе, Тб., 1976, с. 187:

պաղատի տիրույթներից: Սակայն Վախուշտ Բագրատիոնը, անդրադառնալով Աշոտի որդիների տիրույթներին, մասնավորապես Սամցխեն հիշատակում է որպես Բագարատի տիրույթ[22]: Հայտնի է, որ Սամցխեում գտնվող երեք բերդ՝ Օձրխեն, Ջվարիսցխեն և Լոմսիանթան, կառուցվել էին Աշոտ կուրապաղատի մյուս որդու՝ Գվարամ Բագրատունու կողմից[23]: Կարելի է բխեցնել, որ Սամցխեի՝ Աբխազաց թագավորությանը հարակից հատվածը՝ վերոհիշյալ երեք բերդերով, մտնում էր Գվարամ Բագրատունու տիրույթների մեջ:

Ուստի կարող ենք արձանագրել, որ.

ա. Տայքը 774-775 թթ. ապստամբությունից քիչ անց կցվել է Աշոտ Մսակերի տիրույթներին,

բ. Կղարջքի Բագրատունիների տիրույթները 8-րդ դարի վերջին ամփոփվել են միայն Կղարջքով և հարևան որոշ շրջաններով,

գ. «Վրաց սահմաններ» արտահայտությունը վերաբերում է Տայքից հյուսիս տեղաբաշխված հայկական, բայց վրացադավան շրջաններին:

Աշոտ կուրապաղատից հետո իրենց տիրույթները սկսեցին ընդարձակել նրա որդիները: Ըստ «Քարթլիի մատյանի»՝ 881 թ. հայ-աբխազական բախումից որոշ ժամանակ առաջ Կղարջքի Աշոտ կուրապաղատի որդի Գվարամը տիրել էր Ջավախքին, Թռեղքին, Տաշիրքին, Աշոցքին և Արտահանին, որից հետո իր տիրույթները բաժանել էր եղբայրների՝ Ատրներսեհի և Բագարատի հետ, իսկ Աշոցքը՝ զիջել Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանի իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն[24]: Վախուշտ Բագրատիոնը տեղեկացնում է, որ Աշոտի որդիներից Բագարատը տիրում էր Քարթլիին և Սամցխեին, Ատրներսեհը՝ Կղարջքին, իսկ Գվարամը՝ Ջավախքին, Թռեղքին ու Աշոցքին և Հայաստանի որոշ հատվածների[25]: Կղարջքի Բագրա-

---

[22] Տե՛ս նույն տեղում, էջ 187:

[23] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 65, Вахушти Багратиони, էջ 187-188:

[24] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 63:

[25] Տե՛ս Вахушти Багратиони, էջ 187:

տունիների այսչափ ընդարձակվելը պատահական չէր: Խնդիրն այն է, որ հայոց թագավոր Աշոտ Ա-ի մի քույրն ամուսնացած էր ապագա «վրաց» թագավոր Ատրներսեհի պապի՝ Բագարատի[26], իսկ մյուսը՝ Գվարամի հետ[27]: Այն իրողությանը, որ վրաց երկու աղբյուրների վերոհիշյալ տեղեկությունների համեմատությունը ցույց է տալիս, որ Արտահանը, Աշոցքը և Տաշիրքը հայ Բագրատունիների տիրույթներ էին, ակնհայտ է: Այստեղ հավելենք, որ քարտեզագրելով Վախուշտ Բագրատիոնի տեղեկության մեջ նշված երեք եղբայրներին պատկանող գավառները՝ տեսնում ենք, որ Ատրներսեհը տիրում էր բուն Կղարջք գավառին, Գվարամը՝ հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք տեղաբաշխված Արտահանին, Ջավախքին, Աշոցքին, Թոեղքին, ինչպես նաև Ջավախքի արևելքում գտնվող Տաշիրքին, իսկ Բագարատի տիրույթը՝ Վերին Քարթլին կամ Սամցխեն, հյուսիսում սահմանակցում էր Աբխազաց թագավորությանը, արևմուտքում՝ Ագարին, հարավում՝ Գվարամի տիրույթներին, իսկ հարավ-արևմուտքում՝ Շավշքին: Ամենայն հավանականությամբ, Բագարատի տիրույթ «Քարթլին» վերաբերում էր Ագարին և Շավշքին, իսկ Բագարատի տիրույթները Տայքից բաժանված էին Գվարամի հողերով: Բացի այդ՝ վրացական աղբյուրներում երեք եղբայրների տիրույթների մեջ Տայքի որևէ հատված հիշատակված չէ: Հավելենք նաև, որ Գվարամի և Նասրի տիրույթները 881 և 888 թթ. հայ-աբխազական բախումներում նրանց կրած պարտությունից հետո, ամենայն հավանականությամբ, անցան իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն[28]: Ըստ Ն. Ադոնցի՝ միայն Սմբատ Ա-ի մահից հետո է, որ Կղարջքի թագավոր Ատրներսեհը կարողացավ մուտք գործել Տայք[29]:

---

[26] Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Ա, էջ 505:

[27] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 63, Вахушти Багратиони, էջ 187:

[28] Տե՛ս Ա. Եղիազարյան, Հայ-ափխազական պատերազմները Թ դ. 80-ական թուականներին եւ Կղարջքի կիւրոպաղատութիւնը, «Բազմավէպ», Վենետիկ, Ս. Ղազար, 2009, էջ 187-192:

[29] Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Ե, էջ 391: Տե՛ս նաև Ա. Եղիազարյան, Տայքի իշխանությունը Հայ Բագրատունիների տերության համակարգում, «Պատմա-բանասիրական հանդես», 2008, N 3, էջ 197-208:

1.2. Կղարջքի բնակչությունը և դավանանքը

Գտնվելով Մեծ Հայքի Գուգարք աշխարհի արևմտյան հատվածում՝ Կղարջքն ի սկզբանե ուներ հայ բնակչություն: Հույն աշխարհագետ Ստրաբոնը, պատմելով այն մասին, որ հայոց Արտաշես Ա թագավորը (189-160) Մեծ Հայքի թագավորությանը միացրեց (իմա՛ վերամիավորեց) մի շարք երկրամասեր, այդ թվում՝ նաև Գուգարքը՝ Կղարջքի հետ միասին, կազմավորվեց մի թագավորություն, որտեղ բոլորը միալեզու էին (իմա՛ խոսում էին հայոց լեզվով)[30]: Ամենայն հավանականությամբ, հենց միևնույն լեզվով խոսող ժողովրդի գաղափարն էլ ընկած էր Մեծ Հայքի թագավորության պետական գաղափարաբանության հիմքում, ուստի պատահական չէ, որ բացի հայ հեղինակներից՝ այդ մասին հիշատակում է նաև ամասիացի աշխարհագետը: Միալեզու Մեծ Հայքի թագավորությունը Փավստոս Բուզանդն անվանում է «երկիրն լեզուին թորգոմական աշխարհին»[31], իսկ Մովսես Խորենացին նրա սահմանները նույնացնում է հայոց լեզվի սահ-

---

[30] Տե՛ս The Geography of Strabo, in three volumes, vol. II, London, 1856, XI, XIV, 5, նույնը՝ Страбон, География, в 17 книгах, перевод, статья и комментарии Г. Стратановского, М., 1964, XI, XIV, 5: Ըստ Ստրաբոնի՝ Արտաշես Ա-ն նվաճել է Գոգարենեն և Խորձենեն: Հ. Մարկվարտն առաջարկում է Խորձենեն կարդալ Կաղարջք (Կղարջք): Տե՛ս «Հայ բդեաշխք», քննական ուսումնասիրութիւն Դր. Յ. Մարկվարտի: Թարգմ. Հ. Թովմաս Կէտիկեան, Վիեննա, 1903, էջ 13:
Հ. Հյուբշմանը Աստրաբոնի Խորձենեն ու Պտղոմեոսի Կատարզենեն նույնացնում է, իսկ Կատարզենեն հենց Կղարջքն է: Տե՛ս Հ. Հիւբշման, Հին Հայոց տեղւոյ անունները, Հայոց աշխարհի պատմական տեղագրության մասին: Թարգմ. Հ. Բ. Պիլէզիկճեան, Վիեննա, 1907, էջ 21, 236: Ս. Երեմյանը կարծում է, որ Խորձենեն համապատասխանում է Կղարջք, Շավշք, Ներքին Ջավախք և Արտահան գավառների ընդհանուր տարածքին: Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 53: Բ. Հարությունյանը կարծում է, որ սկզբնապես «Աշխարհացոյցյան» Գուգարքը բաժանված է եղել երկու մասի՝ արևմտյան (Խորձենե) և արևելյան (Գոգարենե): Արևմտյան հատվածում ընդգրկած էր Կղարջքը՝ շրջակա գավառներով: Տե՛ս Բ. Հարությունյան, Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի», «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, N 2, էջ 176-197:
[31] «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1933, դպր. Գ, գլ. ԻԳ:

մանների հետ («զեզերբ հայկական խօսիցս»)[32]: Մատենագիրների հաղորդումները ցույց են տալիս, որ Կղարջքը ի սկզբանե անտի հայկական և հայալեզու մի երկրամաս է եղել, որը միևնույն ժամանակ նաև Մեծ Հայքի ծայրամասային երկրամասերից էր, գտնվում էր «հայկական խօսիցս»-ի սահմանին՝ շփման մեջ մտնելով վրացադավան, ըստ այդմ՝ նաև վրացական լեզվական միջավայրի հետ:

Կովկասագետ Գ. Ծուլայան, քննության առնելով վաղ ավատատիրական Վիրքում պատմական գործընթացների էթնոմշակութային բաղադրիչը, ի սկզբանե նշում է, որ Բյուզանդիան մեծ ազդեցություն է թողել սահմանակից ժողովուրդների վրա՝ մեծապես «ուղղորդելով» նրանց սոցիալական ու մշակութային զարգացումը[33]: Այդ ազդեցությունը հատկապես զգալի է եղել ընդհանուր առմամբ Վիրքի և մասնավորապես Մեծ Հայքի հյուսիսարևմտյան հատվածների վրա, որտեղ ազգաբնակչությունը դարձել է քաղկեդոնական, ինչի հետևանքով էլ Կղարջքում նոր իրավիճակ ստեղծվեց:

Վրացական աղբյուրների հիման վրա հետազոտելով իրավիճակը Կղարջքում՝ Ն. Մառը եկել է այն համոզման, որ նույնիսկ 10-րդ դարի կեսերին վրացերենը Կղարջքում բնակչության լեզու չէր, այլ գործածվում էր միայն եկեղեցական արարողությունների ժամանակ[34]: Գ. Ծուլայան կարծում է, որ Կղարջքի կուրապաղատության պատմական հեռանկարի հարցում մեծ է եղել «սրբերի» դերը: Ըստ որում՝ հետազոտողը մի կարևոր դիտարկում է կատարում. նա մատնանշում է այն հանգամանքը, որը հատկապես ծանրակշիռ է եղել Կղարջքում վրացադավանության տարածման գործում: Քրիստոնեությունը սկզբնապես եղել է բացառապես գրքային կրոն և տարածվել միսիոներների միջոցով: Հենց դրանով էլ կարելի է բացատրել այն իրողությունը,

---

[32] «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփխիս, 1913, գիրք Բ, գլ. Ը:

[33] Տե՛ս Г. Цулая, Этнокультурный аспект исторического процесса в раннефеодальной Грузии (V-X вв.), “Этнографический сборник, IX век”, М., 1989, с. 38:

[34] Տե՛ս Георгий Мерчуле, գլ. XLIII:

որ վրացերեն հոգևոր գրականության և քաղկեդոնական միսիոներների մուտքը Կղարջք մեծապես կանխորոշեց երկրամասի ապագան: Հետազոտողը նաև գտնում է, որ Կղարջքում բնիկ բնակչության քաղկեդոնացման և վրացացման գործընթացում վրաց հոգևորականությունը պետք է պայքարեր հայ հոգևորականության դեմ, որը նախորդ դարերում երկրամասի բնակչությունը վեր էր ածել սեփական հոտի[35]: Հայ հոգևորականության դեմ պայքարում մեծ տեղ էր հատկացվում հենց վրացերեն հոգևոր գրականության արմատավորմանը՝ տեղի վրացադավան ազգաբնակչության միջավայրում:

Սակայն քաղկեդոնական հայերը, դատելով տարբեր տեղեկություններից, եկեղեցական արարողությունները հաճախ կատարում էին հայերեն: Այդ է փաստում 10-րդ դարի հայերեն ավետարանը՝ գտնված Թորթոմ գետի հովտի Վիհիկ գյուղից[36]: Բացի այդ՝ Նիկոն Սևսարեցու «Տակտիկոն»-ում (11-րդ դար) պահպանվել են փաստաթղթեր, որոնք վերաբերում են հայ քաղկեդոնականներին: Վերջիններս կոչվում են ծաթեր: Ասվում է, որ նրանք եկեղեցական արարողությունները կատարում էին հայերեն[37]:

Ըստ Ն. Մառի՝ Կղարջքի բնակչության լեզուն հայերենն էր[38]: Այնուհետև Ն. Մառը, խորացնելով իր դիտարկումները և հիմնվելով վրացական աղբյուրների վրա, նշում է, որ 9-10-րդ դարերում վրաց հոգևորականները Կղարջքում շրջապատված էին թեև քաղկեդոնա-

---

[35] Տե՛ս նույն տեղում, էջ 63-65:

[36] Տե՛ս Н. Марр, Об армянской иллюстрованной рукописи из халкедонитской среды,- “Кавказский Культурный мир и Армения”, «Հայագիտական մատենադարան», Ե., 1995, էջ 302-306:

[37] Տե՛ս Н. Марр, Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах, Марр Н., Кавказский Культурный мир и Армения, с. 242-244: Տե՛ս նաև Վ. Հարությունովա, Գրիգոր Պակուրյանը (Բակուրյանը) և Պետրիծոնում վանք հիմնելու նրա նպատակները, «Մառը և հայագիտության հարցերը», Ե., 1968, էջ 173:

[38] Տե՛ս Георгий Мерчуле, էջ XVI:

կան դավանանք ունեցող, բայց հայ բնակչությամբ[39]: Բացի այդ, որոշ տվյալների համաձայն, Կղարջքում՝ Արտանուջի անմիջական մոտերքում գտնվող Տանձոտ բնակավայրում, 11-րդ դարի կեսերին (1059 թ.) բնակվում էին լուսավորչական հայեր[40]: Դատելով Գեորգի Մերչուլի հաղորդումներից՝ Կղարջքի այլ հատվածներում էլ կային լուսավորչական հայեր: Հենց նրանց մասին է նա հարցնում Օպիզա վանքի վանահայրը Գրիգոր Խանձթեցուն, թե արդյոք պետք է կնքել հերետիկոսների (իմա՛ հայադավանների) զավակին, եթե վերջինս ցանկանում է դառնալ ուղղափառ: Գրիգոր Խանձթեցին պատասխանում է, որ Պողոս առաքյալն էլ սխալ էր համարում նրանց, ովքեր իրենց կոչում են առաքյալների անուններով (նկատի ունի հայադավանների՝ առաքելական կոչվելը): Հերետիկոսները, ըստ Գրիգոր Խանձթեցու, հեռացել են մայր կաթոլիկ-առաքելական եկեղեցուց, և նրանց զավակներին հարկ է կնքել[41]: Վերոհիշյալը ցույց է տալիս, որ խնդրո առարկա շրջանում նույնիսկ Կղարջքի կուրապաղատությունը չուներ ամբողջությամբ վրացադավան դիմագիծ:

Ըստ Պ. Մուրադյանի՝ շատ հաճախ, երբ տեղի բնակիչներն իրենք իրենց կոչում են կամ այլոց կողմից կոչվում վրացի, վերջինիս տակ հասկանում են վրացադավանությունը[42]: Անդրադառնալով Տայքի և Կղարջքի քաղկեդոնական հայերին՝ Վ. Հարությունովան նշում է, որ լինելով քաղկեդոնականներ՝ նրանք պետք է մտնեին սահմանակից Վիրքի քաղկեդոնական եկեղեցու կազմի մեջ: Կղարջում և Տայքում

---

[39] Տե՛ս Н. Марр, Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах, Марр Н., Кавказский Культурный мир и Армения, с. 228-230:

[40] Տե՛ս Հ. Բարթիկյան, Եվստաթիոս Բոյիլասի կտակը (1059 թ.) որպես Հայաստանի և Վրաստանի պատմության կարևոր սկզբնաղբյուր, «Բանբեր մատենադարանի», 1960, N 5, էջ 411-413:

[41] Տե՛ս Георгий Мерчуле, գլ. LXXV:

[42] Տե՛ս Պ. Մուրադյան, Գրիգոր Բակուրյանի «Սահմանք»-ի հունարեն և վրացերեն խմբագրությունների գնահատման հարցի շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, N 1, էջ 103:

եկեղեցական արարողությունների լեզուն դառնում է վրացերենը, իսկ այդ արարողությունների համար անհրաժեշտ հայերեն գրականությունը՝ թարգմանվում վրացերեն: Աստիճանաբար Կղարջքի հայերը տեղ-տեղ սկսում են խոսել վրացերեն, տեղ-տեղ էլ խառը՝ «վրացահայերեն»: Հայ քաղկեդոնականները սկսում են իրենց անվանել այն ժողովրդի անունով, որից ընդունել էին քաղկեդոնականությունը՝ հույներ կամ վրացիներ: Միևնույն ժամանակ «հայ» բառը սկսում է ընկալվել որպես «միաբնակ» հասկացության հոմանիշ[43]:

Այն, որ վրացի էին կոչվում նաև քաղկեդոնական հայերը, ցույց է տալիս նաև Սամշուլդեի շրջակայքի՝ «Վրաց դաշտ» անվանումը: Ամենայն հավանականությամբ, «Վրաց դաշտը» նույնական էր Կուր գետի միջին հոսանքի՝ Տփղիսից արևմուտք ընկած հովտին: Ըստ Ուխտանեսի՝ Վրաց դաշտը տարածվում էր հայոց և վրաց սահմանին[44], իսկ ըստ «Աշխարհացոյցի»՝ այդ սահմանը Կուր գետն էր (Վիրքը տարածվում է «մինչեւ ցՀայոց սահմանն՝ առ Կուր գետովն»)[45]: Ասողիկը տեղեկացնում է, որ «...Դաւիթ (իմա՛ Անհողին-Ա.Ե.)...ունի զկողմանս Տաշրաց եւ զՎրաց դաշտի զՇամշուլտեայ մեծ քաղաքանիստ դղեակն...»[46], իսկ այնուհետև, որ Հայոց Գագիկ թագավորը «գնաց զօրօք ի Տաշիր, շրջան առեալ ընդ Շամշուլտէ եւ ընդ Վրաց դաշտ»[47]: Այն, որ Վրաց կոչվող դաշտի մաս էր համարվում Տաշիրքի հյուսիսային հատվածը՝ Սամշուլդեով, կարևոր հետևություն է ծնում: Պետք է նշել, որ նույն այս տարածքները վրացիները Սոմխեթ (իմա՛ Հայք) էին կոչում[48]: Ամե-

---

[43] Տե՛ս Վ. Հարությունովա, Գրիգոր Պակուրյանը (Բակուրյանը) և Պետրիծոնում վանք հիմնելու նրա նպատակները, 1968, էջ 170-173:

[44] Տե՛ս Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, «Պատմագրութիւն», գիրք Բ., Ե., 2011, էջ 532:

[45] «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց», հրատ. Ա. Սուքրեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1881, էջ 28:

[46] Ասողիկ, էջ 256:

[47] Տե՛ս նույն տեղում, էջ 279:

[48] Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 90:

նայն հավանականությամբ, հայերը այն Վրաց դաշտ էին կոչում այնտեղ բնակվող հայերի մի մասի՝ վրացադավան լինելու պատճառով[49], իսկ վրացիները, քանի որ նրանք հայ էին, երկրամասն անվանում էին Սոմխեթ:

Այս առումով հետաքրքրական է նաև վրաց պատմաբանների տեսակետը: Հետազոտելով Դավիթի որդի Սմբատի երկը՝ Ի. Աբուլաձեն եզրակացրել է, որ «Սոմխեթ» անվանումը պատմիչը բոլոր դեպքերում էլ տալիս է Հայաստանին և միայն մեկ անգամ Հայաստանին հարևան Հարավային Վիրքի մի մասին: Ըստ նրա՝ 18-րդ դարից սկսած՝ իբր արդեն Սոմխեթ անվանումը տրվում է Հայաստանին, իսկ Սոմխիթը՝ Հարավային Վիրքի (Քվեմո (Ստորին) Վիրք) մի հատվածին: Մ. Լորդկիպանիձեն պատահական չի համարում այն, որ Ե. Թաղայշվիլին, թարգմանելով Դավիթի որդի Սմբատի աշխատությունը, Սոմխեթ անվանումը, բացի վերոհիշյալ հատվածի, թարգմանել է Հայաստան, իսկ այդ դեպքում պարզապես չի թարգմանել[50]: Կարծում ենք, որ այստեղ իր ազդեցությունն է թողել այն իրողությունը, որ այդ Սոմխեթը վրացի հեղինակները համարում են Վիրքի մաս, ուստի այն Հայաստան կոչելուց, հետևաբար նաև որևէ բացատրություն տալուց խուսափում են՝ ընթերցողին ներկայացնելով այնպես, ինչպես պատմիչի աշխատության բնագրում է՝ Սոմխեթ:

Պետք է նշել, որ սկզբնաղբյուրներում պահպանված որոշ հիշատակություններ հիմք են տալիս ենթադրելու, որ Կղարջքի Բագրա-

---

[49] Հնարավոր է նաև, որ այս շրջանը Վրաց դաշտ կոչվեր այն պատճառով, որ ժամանակին Սասանյանների կողմից մտցվել էր Վրաց մարզպանության կազմի մեջ:

[50] Տե՛ս Ի. Աբուլաձե, Հակոբ Ցուրտավեցի, Շուշանիկի վկայաբանությունը, Թբ., 1938, էջ 52-53 (վրացերեն): Տե՛ս նաև "Жизнь и известия о Багратидах, царях нашых грузинских, откуда они явились в эту страну, или с какого времени владеют они царством Грузинским, которое написал Сумбат, сын Давида", пер. Е. Такайшвили, տե՛ս "Сборник материалов для описания местностей и племен Кавказа", вып. XXVIII, Тифлис, 1900, с. 122, Сумбат Давитис-дзе, пер. М. Лордкипанидзе, ծանոթ. 26, 101, Ս. Կաուխչիշվիլի, Քարթլիս ցխովրեբա, IV, 1973, էջ 1063-1068 (վրացերեն):

տունիները (կամ նրանց մի մասը) 9-րդ դարի ընթացքում դեռևս քաղկեդոնական չէին: Ստեփանոս և Ներսես Մեծոփեցիների անունով մեզ հասած մի ձեռագրի տեղեկությունների համաձայն՝ Կղարջքի Բագրատունիները Հայաստանից «գնացին ի մէջ Վրաց և եղեն նոցա թագաւոր և **յետոյ եղեն քաղկեդոնիկ** (ընդգծումն իմն է – Ա. Ե.)»[51]:

Հայկական իրականության մեջ քաղկեդոնական հայերի գոյությունն այնքան ցավոտ խնդիր էր, որ պատմիչը հարկ է համարել հիշատակել Կղարջքի Բագրատունիների՝ քաղկեդոնական դառնալու իրողությունը, ըստ որում՝ ճշգրտելով, թե հատկապես երբ է դա տեղի ունեցել: Պատմիչը ներկայացնում է իրար հաջորդող երեք իրողություն.

ա. Բագրատունիները Վիրք (իմա՛ Կղարջք) են տեղափոխվել Հայաստանից,

բ. այդ ճյուղի ներկայացուցիչները դարձել են վրաց թագավորներ,

գ. դրանից հետո միայն դարձել են քաղկեդոնական:

Կղարջքի Բագրատունիների՝ սկզբում «վրաց» թագավոր և միայն հետո քաղկեդոնական դառնալու մասին տեղեկությունը կարևոր հետևություններ է ծնում, որովհետև հայտնի է, որ Աշոտ կուրապաղատի թույլատվությամբ և աջակցությամբ քաղկեդոնական եկեղեցիների շինարարությունը Կղարջքում 9-րդ դարի առաջին կեսին մեծ չափեր էր ընդունել[52]: Հայտնի է նաև, որ Աշոտ կուրապաղատի որդիներից Գվարամը ընդդիմանում էր եղբոր՝ Բագարատի կողմից հովանավորվող քաղկեդոնական Գրիգոր Խանձթեցու հոգևոր իշխանությանը[53]: Պետք է նշել, որ Աշոտ կուրապաղատի կողմից քաղկեդոնական եկեղեցիների շինարարությունը հովանավորելը միանշանակորեն չի ցու-

---

[51] Լ. Խաչիկյան, Հայ պատմագրության անհայտ էջերից, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, N 4, էջ 239:

[52] Տե՛ս Георгий Мерчуле, գլ. X, XXVIII, XXVIII և այլն:

[53] Տե՛ս նույն տեղում, գլ. XLII:

ցանում նրա քաղկեդոնական լինելը[54]: Խնդիրն այն է, որ իրենց տիրույթներից հեռացած Բագրատունիները Կղարջքում հայտնվել էին գերազանցապես քաղկեդոնական միջավայրում, որի հետևանքով կամա թե ակամա պետք է թույլատրեին, իսկ հետո նաև հովանավորեին քաղկեդոնական եկեղեցիների շինարարությունը: Սակայն այդ միջավայրն աստիճանաբար կլանել է նրանց, որը, եթե հավաստի է Ստեփանոս և Ներսես Մեծոփեցիների հիշատակությունը, տեղի է ունեցել Սմբատ Ա-ի կողմից Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհին թագավոր հռչակվելուց (899 թ.) հետո, երբ, մասնավորապես 908 թվականից սկսած, Կղարջքի Բագրատունիները հետզհետե սկսեցին անկախանալ[55]:

Այսպիսով՝ Կղարջքի կուրապաղատների՝ «իշխան/թագավոր Վրաց» կոչումն ամենևին էլ Վիրքին չէր վերաբերում, այլ պայմանավորված էր նրանց հայկական ու հայաբնակ, բայց վրացադավան երկրամասերում իշխելու իրողությամբ:

---

[54] Ս. Երեմյանը կարծում է, որ Կղարջքի Բագրատունիներն ընդունել են քաղկեդոնականությունը 9-րդ դարի սկզբից: Տե՛ս Երեմյան Ս., Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, «Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ», Ե., Երևանի պետական համալսարանի հրատարակություն, 1947, N 2, էջ 108:

[55] Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Ե, էջ 391:

1.3. Վիրքը 9-րդ դարում (ընդհանուր ակնարկ)

Վիրքը 9-րդ դարի սկզբին գտնվում էր Տփղիսի ամիրայության գերիշխանության ներքո և սահմանային շրջան էր[56]: Աշոտ կուրապաղատի օրոք, ինչպես տեսանք, Կղարջքի կուրապաղատության զորքը կարճ ժամանակով զբաղեցրեց Վիրքի՝ մինչև Քսան գետն ընկած հողերը:

Աշոտ կուրապաղատից հետո Վիրքին տիրելու փորձ կատարեց նրա որդին՝ Կղարջքի կուրապաղատ Բագարատը (826-876): Արմինիայի ոստիկան Մուհամմադ իբն Խալիդը (838-839) Տփղիսի ամիրա Իսհակի (833-853) դեմ պայքարում օգնություն ցուցաբերելու դիմաց նրան խոստացել էր Վիրքը[57]: Տիրելով Ուփլիսցխեին՝ ոստիկանի և կուրապաղատի զորքերը շարժվեցին դեպի Տփղիս: Նրանց դեմ դուրս եկան Տփղիսի ամիրայության և Ծանարաց քորեպիսկոպոսության միացյալ զորքերը[58]: Գոյություն ունեցող իրավիճակը պահպանվեց[59]:

Ըստ Մասուդիի՝ այդ իրավիճակը շարունակվել է մինչև Մութավաքիլի խալիֆայության տարիները (846-861): Այդ ժամանակ Տփղիսի ամիրա Իսհակի իշխանության տակ էր գտնվում Վիրքի մի զգալի մասը: Սակայն, 850-ական թթ. սկզբին՝ Բուղայի արշավանքի շրջանում, Տփղիսի ամիրայությունը ջախջախվեց, որի հետևանքով Վիրքում նրա դիրքերը խիստ թուլացան, իսկ ամիրայության սահմանները կրճատվեցին[60]:

Բուղայի արշավանքից հետո ակտիվանում է պայքարն Աբխազաց թագավորության, Ծանարաց քորեպիսկոպոսության և Կղարջքի կուրապաղատության միջև՝ անտերունչ վիճակում հայտնված Վիրքին

---

[56] Տե՛ս Al-Masʿūdī, Murūj al-dhahab wa maʿādin al-jawāhir, ğ. 1, al-Kahira, 1948, էջ 203-204:

[57] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 63:

[58] Տե՛ս նույն տեղում:

[59] Տե՛ս նույն տեղում:

[60] Տե՛ս Al-Masʿūdī, I, էջ 203-204:

տիրելու համար: Այդ պայքարին շուտով խառնվում է նաև իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին, որն ակնհայտորեն սպասում էր պատեհ առիթի: Առիթը շուտով ներկայացավ այն բանից հետո, երբ աբխազաց Գիորգի Ա թագավորը (861-868) նվաճեց Վիրքը և որոշ ժամանակով այն ենթարկեց իր գերիշխանությանը[61]: Կղարջքի կուրապաղատները Աբխազաց թագավորությանը դիմակայելու համար անհրաժեշտաբար սկսեցին հույսը դնել իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու վրա, որն էլ միջամտեց Վիրքի համար մղվող պայքարին: 881 թ. հայ-աբխազական բախման արդյունքում Այսրկովկասում՝ ընդհանրապես, Վիրքում՝ մասնավորապես, հաստատվեց հայկական գերիշխանությունը[62]:

Ավելին՝ Գ. Ծուլայան, անդրադառնալով «Քարթլի» և «քարթլիացի/վրացի» հասկացություններին, մի հույժ կարևոր իրողություն է արձանագրում: Մինչև 8-րդ դարը Քարթլին աշխարհագրական հասկացություն էր, և «վրացական տոհմ» ու «վրացական ազգ» տերմինները գրեթե չէին կիրառվում: «Քարթլին» էթնիկական իմաստով ավելի շատ չեզոք ընկալում ուներ, և միայն դրանից հետո է, որ այնտեղ ծավալվում է վրացական էթնոինքնության հաստատման գործընթացը, և «սրբերի վարք»-երում «վրացի» հասկացությունն առավել արմատական է դառնում[63]: Հետազոտողը, անդրադառնալով 9-րդ դարի կեսի դեպքերին, գրում է, որ այդ շրջանի «Վարք»-երում թերևս առաջին անգամ է, որ «Քարթլի» հասկացությունը սկսում է ստանալ այն լայն բովանդակությունը, որը գոյություն ուներ 10-րդ դարում՝ ներառելով նաև Կղարջքը[64]: Ըստ որում, ինչպես կտեսնենք ստորև, այդ հարցում մեծ ազդեցություն ունեցավ նաև Շիրակի Բագրատունիների որոշակի աջակցությունը:

---

[61] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 64:

[62] Տե՛ս Ա. Եղիազարյան, Հայ-ափխազական պատերազմները Թ դ. 80-ական թուականներին եւ Կղարջքի կիւրոպաղատութիւնը, էջ 187-190:

[63] Տե՛ս Г. Цулая, նշվ. աշխ., էջ 49:

[64] Տե՛ս նույն տեղում, էջ 61:

1.4. Հայոց թագավորները և Կղարջքի կուրապաղատները

Վարդան վարդապետը հաղորդում է, որ հայոց թագավոր Աշոտ Ա-ն «դնէ իշխան Վրաց զքեռորդի իւր, և ինքն կատարի ի Քրիստոս»[65]: «Իշխան Վրաց» արտահայտությունը, անկասկած, վերաբերում է Կղարջքի Բագրատունիներին: Հենց այդ ժամանակ է, որ հայ Բագրատունիները Կղարջքի Բագրատունիներին հռչակում են որպես «իշխան Վրաց»: Ըստ որում՝ «իշխան Վրաց» կոչումը նրանց տրվել է հայոց արքայի կողմից դեռևս այն ժամանակ, երբ նրանք տիրում էին միայն Կղարջքին և շրջակա որոշ շրջանների[66]: Ըստ Ս. Երեմյանի՝ Աշոտ Ա-ն և Սմբատ Ա-ն աջակցում էին Կղարջքի իրենց ազգակիցներին՝ տիրելու Վիրքին[67]:

Երբ Աշոտ Ա-ն 888 թ. արշավանքի ելավ աբխազների, ալանների և Նասր Բագրատունու կազմած դաշինքի դեմ, նրա հետ էր Կղարջքի Դավիթ իշխանի որդի Ատրներսեհը[68]: Փաստորեն՝ Կղարջքի իշխանն Աշոտ Ա-ի վերջին տարիներին արդեն Ատրներսեհն էր, ուստի սխալ է Ն. Ադոնցի այն կարծիքը, թե Աշոտ Ա-ն մահվանից առաջ «Վրաց իշխան» է կարգել Դավթին[69]: Ն. Ադոնցի կարծիքին հակասում է նաև իր իսկ կողմից Դավթի մահվան թվագրումը 881 թվականով[70]: Այդ ժամանակ Աշոտ Ա-ն դեռ պաշտոնապես թագավոր չէր ճանաչվել Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության կողմից, իսկ, ինչպես տեսանք, Կղարջքի Բագրատունի իշխանին Աշոտ Ա-ն «վրաց իշխան» է կարգել մահվանից առաջ: Վերոհիշյալ ճշգրտումը ցույց է

---

[65] Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 86:

[66] Տե՛ս Յ. Մարկուարտ, Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, ծանօթութիւններով, գրեց պրոֆ. դկտ. Յ. Մարկուարտ, գերմաներէնէ թարգմանեց Հ. Մ. Հապոզեան, Վիեննա, 1913, էջ 138, Ադոնց Ն., Երկեր, հ. Ա, էջ 504:

[67] Երեմյան Ս., Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, էջ 108:

[68] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 64:

[69] Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Ա, էջ 505:

[70] Տե՛ս նույն տեղում, էջ 504-505:

տալիս, որ Աշոտ Ա-ն «վրաց իշխան» է կարգել Ատրներսեհ Բագրատունուն: Ըստ որում՝ «վրաց իշխան» արտահայտությունը Վիրքին վերաբերել չէր կարող, քանի որ այն ոչ միայն Կղարջքի կուրապաղատին ենթակա չէր, այլ նույնիսկ կուրապաղատության հետ ընդհանուր սահման չուներ: Ուստի կարող ենք նշել, որ այդ արտահայտության ներքո պետք է հասկանալ Ատրներսեհի՝ վրացադավան բնակչությամբ երկրամասերում իշխելու իրողությունը:

Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ 899 թ. Սմբատ Ա-ն Ատրներսեհին «կացուցանէ …թագաւոր Վրաց աշխարհին և երկրորդ իւրոյ տէրութեանն … հաստատէ»[71]: Մ. Լորդկիպանիձեն նշում է, որ թեև Ե. Թաղայշվիլին Ատրներսեհի թագադրությանը վերաբերող նախադասությունը Դավթի որդի Սմբատի երկում թարգմանել է «/Ատրներսեհը/ վրացիների կողմից թագավոր կարգվեց»[72], առավել ճիշտ կլիներ այդ հատվածի ներքո հասկանալ նրա՝ հենց վրաց թա-

---

[71] «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմություն Հայոց», «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 471:
Ատրներսեհ Բագրատունու թագադրության թվականի վերաբերյալ տե՛ս Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, h. Բ, Ե., 1985, էջ 727; M. Brosset, Histoire de la Georgie, I, St.-Petersbourg, Imprimerie de L'Academie Imperiale des science, 1849, էջ 273-279; Յ. Մարկուարտ, Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, էջ 148 (ներդիր); Ն. Ադոնց, Երկեր, h. Ա, էջ 501; Ի. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմություն, II, Թբ., 1965, էջ III (վրացերեն); Մ. Ճանաշեան, Դաւիթ կիւրապաղատ (պատմական ուսումնասիրութիւն), Վենետիկ-Ս. Ղազար, 1972, էջ 13-14; C. Toumanoff, The Bagratids of Iberia from the eight to the eleventh Century.-"Le Museon", LXXIV, Idem. Studies, Louvain, 1961, էջ 21-25, С. Еремян, Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, «Լրաբեր (հաս. գիտ.)», 1971, N 3, էջ 5, ծանոթ. 7; "Очерки Истории Грузии", т. II, Тб., 1988, էջ 310; «Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությունները Վրաստանի մասին», հայերեն տեքստը վրացերեն թարգմանությամբ, ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով հրատ. Ե. Ցագարեիշվիլին, Թբ., 1965, էջ 0121-0122 (վրացերեն); Ա. Եղիազարյան, Հայոց Սմբատ Ա թագավորի կողմից Աղվանից և Կղարջքի իշխանների թագադրության հարցի շուրջ, «ԲԵՀ», «Հայագիտություն», 2011, N 135.1, էջ 16-25:

[72] "Жизнь и известия о Багратидах...", пер. Е. Такайшвили, էջ 146:

գավոր հռչակվելը[73]: Այսինքն՝ վրացի հետազոտողը լավ է հասկանում, որ, ճիշտ է, Ատրներսեհը հռչակվել է «վրաց թագավոր», բայց ոչ վրացիների կողմից:

Այս շրջանում Ատրներսեհի՝ «վրաց իշխան» հռչակվելու ժամանակի հետ համեմատ, Կղարջքի կուրապաղատության սահմանների առումով ոչինչ չէր փոխվել: Պետք է եզրակացնել, որ նրա իշխանությունը տարածվում էր Տայքի, Գուգարքի կենտրոնական գավառների, Աբխազաց թագավորության և Սամցխեի միջև: Դրանից բխում է, որ «Վրաց» թագավոր Ատրներսեհ Բագրատունին այդ ժամանակ տիրում էր միայն …Կղարջքին, Շավշքին, Ագարին (Էգր) և Նիգալին:

906 թ. Սմբատ Ա-ն գերի վերցրեց աբխազաց Կոստանդին Գ թագավորին (893-922), սակայն հետո ազատ արձակեց: Դրա պատճառով Կղարջքի Ատրներսեհ թագավորը դավադրություն կազմակերպեց հայոց թագավորի դեմ[74]: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ երբ Կղարջքի Ատրներսեհ իշխանը մահափորձ կազմակերպեց Սմբատ Ա-ի դեմ, բայց անհաջողության մատնվեց, ամրացավ Կղարջքում[75]: Շուտով Սմբատ Ա-ն արշավեց Կղարջք և նվաճեց այն[76]: Ատրներսեհը ներում խնդրեց: Սմբատ Ա-ն ներեց նրան, բայց նրա որդուն պատանդ պահեց իր մոտ՝ որպես Ատրներսեհի հավատարմության գրավական[77]: Ատրպատականի ամիրայի հաջորդ արշավանքի ժամանակ արդեն պատմիչը վկայում է, որ ամիրան հետապնդեց նահանջող Սմբատ Ա-ին, որը նահանջեց «մինչև յաշխարհ Վրաց…մինչև անկանէր մերձ յանմատչելի յամուրսն Կղարջաց»[78]:

---

[73] Տե՛ս Сумбат Давитис-дзе, пер. М. Лордкипанидзе, ծանոթ. 101:
[74] Տե՛ս Ասողիկ, էջ 163-164:
[75] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 485-486:
[76] Տե՛ս նույն տեղում:
[77] Տե՛ս նույն տեղում:
[78] Նույն տեղում, էջ 490: Ս. Ջանաշիան, անդրադառնալով Հովհաննես Դրասխանակերտցու «մինչև յաշխարհ Վրաց…մինչև անկանէր մերձ յանմատչելի յամուրսն Կղար-

Այսինքն՝ «աշխարհ Վրացը» սկսվում էր Կղարջքից, որը Մեծ Հայքի Գուգարք աշխարհի գավառներից էր և, միանշանակ է, որ «Վրաց աշխարհի» մաս էր համարվում բնակչության դավանանքի պատճառով: Մինչդեռ, ըստ Գ. Ծուլայայի, Տայք-Կղարջքի իբր թե բնիկ մենգրելա-ճանական (լազական) բնակչությունը, որը նախապես հայացվել էր, 9-րդ դարի սկզբից կրկին սկսել էր վրացականացվել, որի հետևանքով արդեն հաջորդ դարի սկզբին հանդես եկավ որպես վրացական բնակչություն[79]: Կարծում ենք, որ նման հարցադրման «լրջությունը» նույնիսկ մեկնաբանության կարիք չի զգում:

ջաց» հաղորդմանը, բխեցնում է, թե իբր ինչպես Կղարջքը, այնպես էլ Տայքն անվիճելիորեն պատկանում էին վրացիներին: Տե՛ս С. Джанашиа, նշվ. աշխ., էջ 21-22:

[79] Տե՛ս Г. Цулая, նշվ. աշխ., էջ 63-65:

1.5. Քաղկեդոնականությունը և վրացական թագավորության պետական գաղափարաբանությունը

Աշխարհագրական փոքրիկ միջավայրում՝ Կղարջքում իշխող Բագրատունիները մեծ նկրտումներ ունեին: Այդ ամենն առավել ակնհայտ դարձավ, երբ Ատրներսեհը թագավորական թագ ստացավ սկզբում Սմբատ Ա-ից, իսկ հետո, ամենայն հավանականությամբ Ատրպատականի Յուսուֆ ամիրայից[80]: Կղարջքի Բագրատունիների նկրտումների հիմնական թիրախ դարձան հարևան վրացադավան երկրամասերը և Վիրքը:

Հայտնվելով Կղարջքի գերազանցապես քաղկեդոնական միջավայրում՝ Բագրատունիները, հասկանալի է, անհրաժեշտաբար պետք է ինտեգրվեին այդ միջավայրին, ուստի նրանք վրացադավան էին դարձել: Քանի որ միջնադարում անկախությունը երբեմն կարող էր կապված լինել սեփական եկեղեցու անկախության հետ, ապա Կղարջքի Բագրատունիները, որոնց՝ ռազմական կամ քաղաքական ճանապարհով Վիրքին տիրելու նպատակները տապալվել էին, սկսել էին ամեն կերպ աջակցել վրացադավան եկեղեցուն: 9-րդ դարի առաջին կեսին՝ Աշոտ կուրապաղատի իշխանության շրջանից սկսած, լայն ծավալներ էր ընդունել եկեղեցաշինությունը Կղարջքի կուրապաղատությունում, որի սկզբնավորողն այնուհետև Կղարջքի կուրապաղատության հոգևոր առաջնորդի դերը ստանձնած Գրիգոր Խանձթեցին էր (759-861): Դատելով Գեորգի Մերչուլի հաղորդումներից՝ Գրիգոր Խանձթեցու կողմից Կղարջքի կուրապաղատությունում կառուցվել կամ վերակառուցվել են տասնյակ եկեղեցիներ[81]: Այն պահին, երբ Գրիգոր Խանձթեցին եկավ Կղարջք, այստեղ, բացի Օպիզայից, որևէ

---

[80] Տե՛ս Ա. Եղիազարյան, Հայոց Սմբատ Ա թագավորի կողմից Աղվանից և Կղարջքի իշխանների թագադրության հարցի շուրջ, էջ 19-23:

[81] Տե՛ս Георгий Мерчуле, գլ. V, IX:

այլ գործող եկեղեցի չկար[82]: Աշոտ կուրապաղատը Գրիգոր Խանձթեցու մասին տեղեկացավ իր իշխանների միջոցով[83]: Կուրապաղատն իր մոտ հրավիրեց նրան և նվիրեց բարեբեր վայրեր, այդ թվում՝ Շատբերդի շրջանը[84]:

Շուտով փորձ կատարվեց Կղարջքի հոգևոր իշխանությունը տարածելու հարևան վրացադավան երկրամասերում, սակայն վերջիններիս բնակչությունը հակադրվեց դրան: Խանձթա վանքի կառուցումից հետո Կղարջքի Անչայի վանքի շրջանում գտնվող գյուղերի բնակիչները հարձակվեցին վանքի և նրա հարակից գյուղերի վրա՝ թալանելու և ավերելու նպատակով[85]: Թեև փորձ է կատարվել այդ իրադարձությունը վերագրել միջավատատիրական հարաբերությունների սրմանը[86], սակայն վերոհիշյալ փաստը, մեր կարծիքով, ցույց է տալիս, որ Կղարջքի որոշ շրջաններում, այդ թվում՝ Անչա վանքի շրջակայքում, չէին ընդունում Գրիգոր Խանձթեցու հոգևոր իշխանությունը: Ուստի այն բանից հետո, երբ Գրիգոր Խանձթեցին ցանկացել է այնտեղ տարածել իր հոգևոր իշխանությունը, ստացել է նման հակահարված: Այդ հակահարվածը, հասկանալով Կղարջքի Բագրատունիների նկրտումները, իրականացրել է Տփղիսի Իսհակ (Սահակ) ամիրան՝ պաշտպանելով Անչայի վանքի և թեմի հատուկ կարգավիճակը վրաց եկեղեցու համակարգում: Վերջինիս օգնությամբ Անչայի եպիսկոպոս դարձավ ոմն Ցկիր, որը հավաքեց Անչայի ժողովրդին և ուղարկեց քանդելու Խանձթա վանքը: Ձեռնարկն անհաջողության մատնվեց միայն Ցկիրի մահվան պատճառով[87]:

---

[82] Տե՛ս Георгий Мерчуле, գլ. VII:
[83] Տե՛ս նույն տեղում, գլ. X:
[84] Տե՛ս նույն տեղում, գլ. XI:
[85] Տե՛ս նույն տեղում, գլ. LXVIII-LXX:
[86] Տե՛ս "Очерки истории Грузии", т. II, էջ 244-245:
[87] Տե՛ս Георгий Мерчуле, գլ. LXVIII-LXX:

Խանձթայի հոգևոր իշխանությանն ընդդիմանում էր նաև Գվարամ Բագրատունին, ըստ որում՝ արդյունավետ կերպով[88]: Խնդիրն այն է, որ Կղարջքում ծավալված եկեղեցաշինական աշխատանքներից հետո Կղարջքի հոգևորականները փորձ կատարեցին իրենց հոգևոր իշխանությունը տարածելու հարևան Սամցխեում, որի մի հատվածը, ինչպես տեսանք, պատկանում էր Գվարամ Բագրատունուն: Այնտեղ հատուկ այդ նպատակով ուղարկվեց Սերապիոն Զարզմեցին, որը լայն գործունեություն ծավալեց 860-ական թթ.՝ Բագարատ կուրապաղատի օրոք (826-876)[89]:

Ըստ Վասիլ Զարզմեցու՝ Սամցխեի տարբեր շրջաններում Կղարջքի հոգևորականներին թշնամաբար էին ընդունում և արտաքսում իրենց երկրամասերից: Երբ նրանք նոր էին մտել Սամցխե և կառուցել առաջին վանքը, տեղի իշխանը չցանկացավ նրանց տեսնել իր տիրույթներում և վտարեց[90]: Սակայն, Սամցխեի մյուս իշխաններից Գեորգի Չորչանեցին (Չորչան բնակավայրն այսօր էլ գոյություն ունի և գտնվում է ներկայիս Ախալցխա քաղաքից արևմուտք՝ Կուր գետի Մոսքական լեռներից սկիզբ առնող վտակի ափին), նրանց հրավիրեց իր մոտ և իր իշխանության մեջ գործունեության ազատություն տվեց[91]: Գլխավոր վանքը, որ Կղարջքի հոգևորականները կառուցեցին Սամցխեում, Զարզմայի վանքն էր[92]: Սակայն, երբ Գեորգի Չորչանեցու մահից հետո նրա իշխանության ներսում երկպառակություններ սկսվեցին, իրավիճակը կարողացավ շտկել միայն Սամցխեի Աձղուրի վան-

---

[88] Տե՛ս Ա. Եղիազարյան, Կղարջքի և Սամցխեի IX դարի պատմության որոշ խնդիրների շուրջ (ըստ վրացական սրբերի «Վարքերի»), «ԲԵՀ», «Հայագիտություն», 2011, N 134.1, էջ 8:

[89] Տե՛ս "Очерки истории Грузии", т. II, էջ 316-317:

[90] Տե՛ս Василий Зарзмели, Житие Серапиона Зарзмели.“Древнегрузинская литература (V-XVIII вв.)”, тексты, сост. Л. Менабде, пер. с груз., Тб., 1987, գլ. V:

[91] Տե՛ս նույն տեղում, գլ. VI-VII:

[92] Տե՛ս նույն տեղում, գլ. VIII-XIII:

քի հոգևոր առաջնորդ Գեորգին, որին դրանից հետո հաջողվեց իր ձեռքը վերցնել Սամցխեի հոգևոր ղեկավարությունը[93]:

Աձղուրի վանքը Սամցխեի եպիսկոպոսանիստ վանքն էր, որը խնդրո առարկա շրջանում դուրս էր Կղարջքի հոգևոր իշխանությունից, ավելին՝ հակադրվում էր նրան: Դատելով Գեորգի Մերչուլի հաղորդումներից՝ Սամցխեի հոգևորականների կարծիքը կարևոր նշանակություն ուներ նույնիսկ վրաց կաթողիկոսի ընտրության հարցում[94]: Սամցխեն՝ Աձղուրի վանքի գլխավորությամբ, հակառակվում էր Խանձթայի հոգևոր իշխանությանը, մասնավորապես, երբ քննարկվում էր Վիրքի կաթողիկոս դարձած Արսենի խնդիրը: Կղարջքի Բագրատունիներից Գվարամը դժգոհ էր նրա՝ կաթողիկոս դառնալու փաստից: Միևնույն ժամանակ, սակայն, նրան կողմ էր Գրիգոր Խանձթեցին[95]:

Կղարջքի Բագրատունիների՝ վրացադավան բնակչության շրջանում տարածվելու և իշխելու նկրտումները շուտով բանաձևվեցին մի արտահայտությամբ, որը խիստ կարևոր էր: Ներկայացնելով նրանց քաղաքականության թե՛ էությունը և թե՛ նպատակակետը՝ միևնույն ժամանակ այն ըստ հարկի չի լուսաբանվել, չնայած որ հիմք է դարձել Բագրատունիների վրացական թագավորության ստեղծման համար: Այն բարբառում է, որ «Վիրք է համարվում [այն] ընդարձակ երկիրը, որտեղ **եկեղեցական ծառայությունն իրականացվում և բոլոր աղոթքները կատարվում են վրացերեն լեզվով** (ընդգծումն իմն է - Ա. Ե.)»[96]: Հեղինակը Կղարջքի վրացադավաններն էին, ստեղծման ժամանակը՝ 9-րդ դարի առաջին կեսը: Փաստորեն՝ Կղարջքի կուրապաղատների պատկերացրած «Վրաստանը» չէր ստեղծվելու էթնիկ հիմքով, քանի որ թե՛ ստեղծել ցանկացողները և թե՛ տվյալ պահին վերջիններիս

---

[93] Տե՛ս Василий Зарзмели, գլ. XVIII:
[94] Տե՛ս Георгий Мерчуле, գլ. XLII:
[95] Տե՛ս նույն տեղում:
[96] Նույն տեղում, գլ. XLIII:

տիրապետած տարածքների բնակչությունը վրացական չէր: Ուստի նրանց թագավորությունը էթնիկ հիմքով ստեղծված թագավորություն չէր լինելու, այլ իր սահմաններում ընդգրկելու էր վրացադավան շրջանները: Կղարջքի Բագրատունիները լավ էին հասկանում, որ սեփական իշխանությունը (հետագայում՝ թագավորություն) իրենց ազգակից Շիրակի ճյուղի իշխանությունից պետք է տարբերվեր իր բովանդակությամբ: Վերջինս սկզբում բնույթով ազգային իշխանություն էր, իսկ 885 թ. սկսած՝ հանդես եկավ որպես տերություն՝ ընդգրկելով այլ երկրներ, որտեղ գերիշխում էին այլ դավանանքներ:

Պետք է նշել, որ Կղարջքի կուրապաղատների նպատակների իրականացման ճանապարհին կանգնած էր ևս մեկ քաղկեդոնական թագավորություն՝ Վիրքին տիրելու նկրտումներով: Խոսքն Աբխազաց թագավորության մասին է, որը 906 թ. փորձ էր արել տիրելու Վիրքին, սակայն ջախջախվել էր Սմբատ Ա-ի զորքերից: Չորս ամիս աբխազաց Կոստանդին Գ թագավորը գերի պահվեց, ինչը Ատրներսեհին հույս ներշնչեց, որ ազատվել է գլխավոր հակառակորդից: Երբ Սմբատ Ա-ն Կոստանդին Գ-ին ազատ արձակեց և, ավելին, օգնական զորքով առաքեց իր թագավորություն՝ գահին վերատիրելու, Ատրներսեհը սկզբում դավաճանեց իր տիրակալ հայոց թագավորին, իսկ այնուհետև հպատակություն հայտնեց նրա թշնամի Ատրպատականի Յուսուֆ ամիրային, որից էլ թագ ստացավ[97]:

Հենց աբխազաց թագավորի՝ Վիրքին տիրելու նկրտումներն էլ հաշվի առնելով՝ Գ. Մելիքիշվիլին համաձայն չէ այն հետազոտողների հետ, որոնք հակված են գերագնահատելու Կղարջքի կուրապաղատության դերը 9-10-րդ դարերում Վիրքի միավորման գործընթացում, քանի որ նրանք հաշվի չեն առնում տարբեր էթնոքաղաքական շրջան-

[97] Տե՛ս Ա. Եղիազարյան, Հայոց Սմբատ Ա թագավորի կողմից Աղվանից և Կղարջքի իշխանների թագադրության հարցի շուրջ, էջ 22-24:

ների սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը[98]: Ըստ նրա՝ միավորման գործընթացը բխում էր ոչ թե Կղարջքից, այլ ընթանում էր աբխազաց թագավորների ծրագրերին համապատասխան[99]: Սակայն, առնվազն մեր հետազոտության մեջ քննության առնված ժամանակաշրջանում Աբխազաց թագավորությունը, թեև Վիրքին տիրելու փորձեր կատարել է, անհաջողության է մատնվել, ուստի հայոց թագավորի հովանավորությունը վայելող Կղարջքի կուրապաղատները Վիրքի միավորման հարցում հայտնվել են առաջին պլանում:

Հռչակվելով «վրաց թագավոր»՝ Ատրներսեհը և նրա հետնորդներն անշեղորեն սկսեցին ծավալվել դեպի Վիրք՝ աստիճանաբար կյանքի կոչելով դավանանքի իմաստով համավրացական թագավորությունը: Հենց այս իրողությունն էլ հաշվի առնելով՝ Ն. Մառն այն կարծիքն է հայտնել, թե Կղարջքի կուրապաղատությունում է վերջնականապես ձևավորվել «Սաքարթվելո» (Վրաստան) հասկացությունը, որն ընդգրկում էր Վիրքը՝ ազգային-մշակութային իմաստով՝ հենված ազգաբնակչության հոգևոր ընդհանրության վրա[100]:

---

[98] Տե՛ս Գ. Մելիքիշվիլի, Ավատատիրական Վրաստանի քաղաքական միավորումը և Վրաստանում ավատատիրական հարաբերությունների զարգացման մի քանի հարցեր, Թբ., 1973, էջ 12 (վրացերեն): Տե՛ս նաև А. Новосельцев. Генезис феодализма в странах Закавказья (Опыт сравнительно-исторического исследования), М., 1980, էջ 201:

[99] Տե՛ս Գ. Մելիքիշվիլի, նշվ. աշխ., էջ 50-51, 54-56:

[100] Տե՛ս Н. Марр, История Грузии. Культурно-исторический набросок (По поводу слова протоиерея И. Восторгова о грузинском народе), СПб., 1906, с. 59. Նույնը տե՛ս “Летопись Картли”, перевод, введение и примечания Г. Цулая, Тб., 1982, նախաբան:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՄԱՎՐԱՑԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ

2.1. Արտաքին և ներքին իրադրությունը 9-րդ դարում և Կղարջքի կուրապաղատության տարածքային ընդարձակման միտվածությունը

9-րդ դարից սկսած՝ Մեծ Հայքի որոշ սահմանամերձ գավառներում այլ քաղաքակրթությունների հետ շփումները որակական այնպիսի փոփոխություններ էին առաջացրել, որ այդ միջավայրերը ժամանակակիցների ընկալման մեջ արդեն դարձել էին ոչ հայկական: Դրանց տարածքներում հիմնվում էին իշխանություններ, որոնք, զգալիորեն ամրապնդվելով, առաջ էին բերում քաղաքակրթական լուրջ տեղաշարժեր: Նման միջավայրերից էր Կղարջքը, որը Մեծ Հայքի մաս էր, նրա բնակչությունը գերազանցապես հայկական էր և այնտեղ իշխում էր հայկական իշխանատոհմը:

Հայտնի է, որ մարդկային հասարակությունների ձևավորումը սկզբնապես տեղի է ունեցել տարածքային սկզբունքով («տարածքային սոցիալիզացիա»), երբ գիտակցաբար կամ ենթագիտակցաբար մարդիկ աստիճանաբար կապվել են բնակության տարածքին, ստեղծել ավանդույթներ, կենցաղ և մշակույթ: Աստիճանաբար ձևավորվել է նաև հայրենիքի գիտակցությունը[101]: Նման իրավիճակ էր Կղարջքում 9-րդ դարի սկզբին, երբ աշխարհագրական այդ ինքնամփոփ միջավայրում սկսվեց նոր հասարակության ձևավորումը: Դրան զուգահեռ՝ պատմական հեռանկարի առումով այնտեղ ձևավորվեց սեփական՝ անկախ ապագայի գիտակցությունը, որը մեծապես կանխորոշում էր

[101] Տե՛ս I. Duchecik, Comparative federalism. The territorial dimension of politics, Lanham et. al., 1987, p. 62:

գալիք իրադարձությունները և տվյալ միավորի աշխարհագրական տարածման ուղղությունները:

Ընդհանրապես յուրաքանչյուր քաղաքակրթության կամ քաղաքակրթական լոկալ միջավայրի համար խիստ կարևորվում է պատմության և դրա յուրովի գիտակցման անհրաժեշտությունը: Սեփական անցալի անկրկնելիության գիտակցումն է ծնում ինքնուրույն հանրային-ազգային ինքնագիտակցություն, պատմությամբ են բացատրվում ազգային ինքնուրույնությունն ու յուրահատկությունը՝ քաղաքակրթության գլխավոր բաղադրիչներից երկուսը: Այդ առումով երբեմն առանձին վերցված երկրամասի ազգաբնակչության «պատմական անհատականությունը» սկսում է նույնանալ ազգային ինքնությանը[102], ինչը և տեղի ունեցավ Կղարջքում:

Պատմության հիմքով յուրաքանչյուր հանրույթի ներկա վիճակի արժևորման համար «Ես իմ անցյալն եմ» գաղափարը բանաձևի նշանակություն ունի[103]: Սակայն պատմության գիտակցությունը տարբեր պատճառներով երբեմն սկսում է տեղի տալ՝ զանազան փոխակերպումների տեսքով: Այս առումով անցյալի կամ պատմության գիտակցությունը Կղարջքի ազգաբնակչության շրջանում զգալի փոխակերպումներ էր կրել: Ի սկզբանե լինելով Մեծ Հայքի մաս՝ դրանից բխող քաղաքակրթական-արժեհամակարգային առանձնահատկություններով, որոնցից ամբողջապես հեռանալը գործնականում անհնար էր («Պատմությունը շրջանցող ճանապարհ չկա. ճանապարհն անցնում է միայն պատմության միջով» (Կ. Յասպերս)[104]), միևնույն ժամանակ Կղարջքում ծնվել էր Մեծ Հայքից առանձին, յուրովի զարգացման անհրաժեշտության գիտակցությունը, որը կապված էր, մի կողմից, հունական ու վրացական միջավայրերի հետ սերտ շփումների և դավա-

---

[102] Տե՛ս Г. Люббе, Историческая идентичность, “Вопросы философии”, 1994, N 4, с. 109-113.

[103] Տե՛ս J. Sartre, L'etre et le neant. Essai d'ontologie phenomenologique, Paris, 1943, p. 9:

[104] Տե՛ս K. Jaspers, The origin and goal of history, trans. H. Bullock, London, 1953, p. 279:

նանքային հարազատության, իսկ մյուս կողմից՝ այն իրողության հետ, որ հայկական առաքելական դավանանքային միջավայրը օտարել է Կղարջքի հայ քաղկեդոնական բնակչությանը՝ նրան համարելով վրացի, այսինքն՝ առաջին պլանում նկատի ունենալով ոչ թե էթնիկական, այլ դավանանքային սկզբունքը։ Այդ իսկ պատճառով՝ օտարված ազգաբնակչությունն իր ապագայի տեսլականի առումով փորձելու էր ստեղծել ու ամրապնդել սեփական միջավայրը, որին ինքնուրույն քաղաքակրթական բովանդակություն հաղորդելու հրամայականը ստիպում էր, մի կողմից, անկախանալ Բագրատունյաց թագավորությունից, իսկ մյուս կողմից՝ սեփական ապագան կապել վրացական միջավայրի հետ։ Նման իրականության մեջ Կղարջքի Բագրատունիները սկզբում փորձ են կատարում տիրելու հայկական գահին, սակայն տապալվելով՝ հանգում են սեփական գերիշխանությամբ վրացական թագավորությունը վերականգնելու գաղափարին։

9-րդ դարում իրավիճակն Այսրկովկասում մեծապես տարբերվում էր նախորդ դարում տիրող իրականությունից։ Արաբական տիրապետությունն անկում էր ապրում, իսկ Այսրկովկասում աստիճանաբար հզորանում էին տեղական իշխանությունները։ Դրանց մեջ իրենց հնարավորություններով և տիրապետած ռեսուրսներով հատկապես աչքի էին ընկնում Բագրատունիները, որոնք վայելում էին Խալիֆայության բարեհաճությունը։ Հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունին (802-826[105]) մեծապես ընդարձակեց իր տիրույթները։ Նա շրջահայաց քաղաքական գործիչ էր և բացահայտորեն Խալիֆայության դեմ դուրս գալու փոխարեն խելամտորեն իր տիրույթներին կցեց տարբեր նախարարական տոհմերին պատկանող տարածքները։ Խնդիրն այն է, որ 774-775 թթ. արաբական տիրապետության դեմ

---

[105] Կ. Յուզբաշյանի ճշգրտման համաձայն՝ Աշոտ Մսակերի իշխանության շրջանը սկիզբ է առնում ոչ թե 804 թ., ինչպես ընդունված էր նախկինում (տե՛ս А. Тер-Гевондян, Армения и Арабский Халифат, Е., 1977, с.126), այլ 802 թ. (տե՛ս К. Юзбашян, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., 1988, с. 54)։

հայոց ապստամբությունից հետո քաղաքական ասպարեզից հեռացել էին Կամսարականները, իսկ Մամիկոնյանները կորցրել էին իրենց նախկին կշիռը: Աշոտ Բագրատունին կարողացավ տիրել այդ տոհմերին պատկանող Տարոնին, Տայքին, Շիրակին, Աշոցքին[106], ինչպես նաև գնեց Կամսարականներին պատկանող Արշարունիք գավառը, որից հետո իր նստավայրը Դարյունք բերդից տեղափոխեց այնտեղ[107]: Արաբ հեղինակները 9-րդ դարի առումով մեկ կապակցության մեջ են հիշատակում Շիրակն ու Տայքը (Սիրաջ-Թայր)[108], որը պայմանավորված էր դրանց՝ Բագրատունիներին պատկանելու իրողությամբ: Բագրատունիները դարձան ինչպես Հայաստանի, այնպես էլ Այսրկովկասի խոշոր ագույն հողատերերը[109]:

Իսկ ահա Կղարջքի Աշոտ կուրապաղատի մահից (826 թ.) հետո արաբները գրավեցին նրա տիրույթները[110]: Հետագայում նրա որդիները տիրույթներ էին ձեռք բերել Գուգարքի կենտրոնական հատվածում: Ավելին՝ ձևավորելով սեփական իշխանությունները՝ նրանք սկսել էին իշխել միմյանցից անկախ[111]: Միևնույն ժամանակ Կղարջքի Բագրատունիները մտածում էին սեփական իշխանությունների ընդարձակման մասին: Սակայն նման հնարավորությունն արդեն խիստ սահմանափակ էր, քանի որ հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին սկսել էր բուռն գործունեություն ծավալել՝ սեփական տիրույթ-

---

[106] Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 83-84, Ասողիկ, էջ 106:

[107] Տե՛ս Ասողիկ, էջ 106:

[108] Տե՛ս Ibn Khordâdbeh, Kitâb al-masâlik wa'l-mamâlik.-BGA, p. VI, Lugd. Bat., 1967, p. 122, Ibn al-Fakih al-Hamadhani, Kitâb al-boldân.-BGA, p. V, Lugd. Bat., 1967, pp. 290-291, "Kitâb al-a'lâk an-nafîsa auctore Abû-Ali Ahmad-ibn-Omar ibn Rosteh et Kitâb al-Boldân auctore Ahmed ibn Abî Jakûb ibn Wâdhih al-Kâtib Al-Jakûbî".-BGA, p. VII, Lugd. Bat., 1967, p. 364 և այլն: Տե՛ս նաև Ա. Տեր-Գևոնդյան, նշվ. աշխ., էջ 42:

[109] Տե՛ս Ա. Տեր-Գևոնդյան, նշվ. աշխ., էջ 182:

[110] Տե՛ս նույն տեղում, էջ 32:

[111] Տե՛ս Վ. Կոպալիանի, Բյուզանդիայի և Վրաստանի փոխհարաբերությունների պատմությունից, «Թբիլիսիի պետական համալսարանի աշխատություններ», պատմություն, հնագիտություն, արվեստագիտություն, ազգագրություն, 61, 1956, էջ 114:

ները ընդարձակելու համար: Կղարջքի համար դեպի Տայք տանող ճանապարհը փակ էր Աշոտ Մսակերի ժամանակներից սկսած, շուտով փակվեց նաև ճանապարհը դեպի Գուգարք: Դեռևս Կղարջքի Աշոտ կուրապաղատն էր ցանկացել տիրել Գուգարքի կենտրոնական գավառներին և հասնել Տփղիս[112], սակայն ի վերջո ծանր պարտություն էր կրել[113]: Իսկ 881 և 888 թթ. հայ-աբխազական բախումների արդյունքում իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին իր տիրույթներին կցեց Գուգարքի կենտրոնական գավառները[114]:

Այս կապակցությամբ Զ. Անչաբաձեն կարծիք է հայտնել, թե այդ բախումների մասնակից Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհի գլխավոր հակառակորդների՝ Նասրի փախուստից և նրա հայր Գվարամի մահից (882 թ.) հետո նրանց տիրույթները՝ Զավախքը, Արտահանը և Տաշիրքը, անցան Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհին, քանի որ հենց նա ստանձնեց գլխավոր դերակատարությունը Կղարջքի կուրապաղատությունում[115]: Նման պնդումը քննություն չի բռնում, քանի որ նրանց հողերը մեծավ մասամբ անցել էին իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն, որը վրացական աղբյուրներում արդեն հիշատակված էր որպես թագավոր[116]:

Ս. Երեմյանը թեականորեն հավանական է համարում, որ Ատրներսեհին էին անցել Արտահանն ու Զավախքը[117], սակայն նրա

---

[112] Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 83:

[113] Տե՛ս Сумбат Давитис-дзе, с. 32.

[114] Տե՛ս Ա. Եղիազարեան, Հայ-ափխազական պատերազմները Թ դ. 80-ական թուականներին եւ Կղարջքի կիւրոպաղատութիւնը, «Բազմավէպ», Վենետիկ, 2009, էջ 182-192:

[115] Տե՛ս З. Анчабадзе, Из истории средневековой Абхазии (VI-XVIIвв.), Сухуми, 1959, с. 124-125.

[116] Տե՛ս Քարթլիի մատյան, մաս Ա, թարգմ. Վ. Մարտիրոսյանի և Հ. Մկրտումյանի, «Լրաբեր (հաս. գիտ.)», 1989, N 9, էջ 63, Вахушти Багратиони, История царсва Грузинского, перевод Н. Накашидзе, Тб., 1976, с. 187 :

[117] Տե՛ս Ս. Երեմյան, Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, «Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ», Ե., 1947, N 2, էջ 110:

կասկածը տեղին է: Դավիթի որդի Սմբատը պահպանել է մի տեղեկություն, որը հստակ կերպով ցույց է տալիս, որ Նասրի մահից հետո նրա տիրույթները չեն անցել Ատրներսեհին: Պատմիչը հաղորդում է բառացիորեն հետևյալը. «...Սպանվեց Նասրը, իսկ Նասրի տիրույթները խլեցին այլ իշխաններ»[118]:

Զ. Անչաբաձեն կարծում է նաև, որ Աշոտ Բագրատունին տիրել է Վիրքին, որի պատճառով վրացական աղբյուրում հիշատակվում է որպես «հայոց և վրաց իշխանաց իշխան»[119]: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ իր թագավորության շրջանում Աշոտ Ա-ն «զաղխատրոյզ բնակիչսն Գուգարաց...առհասարակ ընդ ձեռամբ նուաճէր՝ ի բաց ի նոցանէ հերքելով զաւազակութիւն մարդադաւութեան, և իբրև օրինաւորս և հլուս զամենեսեան կազմէր, և առաջնորդս և իշխանս նոցա կացուցանէր»[120]: Այս հաղորդումը ցույց է տալիս, որ Գուգարքի մեծ մասը միացվել էր Աշոտ Ա-ի արքունի տիրույթներին: Դատելով Վախուշտ Բագրատիոնի և «Քարթլիի մատյանի» տեղեկություններից՝ իր տիրույթների մեծ մասը Գվարամը նախկինում ստացել էր իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուց, քանի որ ամուսնացած էր նրա քրոջ հետ[121]: Պարզից էլ պարզ է, որ Գվարամի և Նասրի մահից հետո Աշոտը տիրելու էր նրանց հողերին: Գուգարքի կենտրոնական գավառների վրայով Կղարջքի կուրապաղատության՝ դեպի Տփղիս ընդարձակվելն այդուհետ դարձավ անհնարին: Այսուհետ դեպի Վիրք ճանապարհն «անցնում էր» միմիայն Սամցխեով, որի վրա էլ շուտով, ինչպես կտեսնենք, կենտրոնացավ Կղարջքի կուրապաղատների ուշադրությունը: Ըստ «Քարթլիի մատյանի»՝ 876 թ. Գուգարքի Թռեղք գավառում հաստատվել էր Լիպարիտ Բաղվաշ իշխանը: Նա վայելում էր Աշոտ Ա-ի հովանավորությունը, որի ապացույցն է այն, որ նա մասնակ-

---

[118] Сумбат Давитис-дзе, с. 33-34.
[119] Տե՛ս Ց. Анчабадзе, նշվ. աշխ., с.125.
[120] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 444:
[121] Տե՛ս Вахушти Багратиони, с. 187, Քարթլիի մատյան, Ա, էջ 63:

ցեց 9-րդ դարի 80-ական թվականներին տեղի ունեցած հայ-աբխազական պատերազմներին՝ Աշոտ Ա-ի կողմում[122]:

Հայտնի է, որ Կղարջքի Աշոտ կուրապաղատի որդի Ատրներսեհի որդի Գուրգենը 881 թ. մարտնչում էր Կղարջքի Ատրներսեհ կուրապաղատի և նրա հովանավոր իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու դեմ՝ միանալով Կղարջքի Բագրատունիներից Գվարամ ու Նասր Բագրատունիների և աբխազաց թագավորի դաշինքին[123]: Նմանատիպ երկրորդ հակամարտության ժամանակ, որը տեղի ունեցավ 888 թ.՝ արդեն Աշոտ Ա-ի գահակալության շրջանում, Գուրգենը միացավ հակառակորդ դաշինքին[124]: Ըստ Դավիթի որդի Սմբատի՝ Գուրգենը Տայքի Կալմախ ամրոցից տեղափոխվել էր Շավշք և Արտահան: Գուրգենը թշնամացավ Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհի հետ և ճակատամարտեց նրա դեմ, սակայն 891 թ. Արտահանում նա պարտվեց և սպանվեց[125]: Բայց վերջինիս ժառանգները, ինչպես ցույց կտանք ստորև, ընդարձակ գործունեություն էին ծավալում՝ կարևոր դերակատարություն ստանձնելով վրացական թագավորության ձևավորման գործընթացում:

Ստեղծված իրավիճակում Կղարջքի կուրապաղատությունում անհրաժեշտաբար պետք է սկսեր ձևավորվել սեփական ապագայի տեսլականը, քանի որ վերջինս աստիճանաբար այնքան էր զատվել հայկական իրականությունից, որ ձգտում էր անկախության: Սկզբում Կղարջքի կուրապաղատների նկրտումները գերազանցում էին սեփական հնարավորությունները: Խնդիրն այն է, որ նրանք գերիշխանության էին ձգտում Այսրկովկասի քաղկեդոնականների միջավայրում: Ապագայում հաջողության հասնելու համար նախապես Կղարջքում անհրաժեշտ էր ձևավորել միանգամայն ինքնուրույն միջավայր, որն էլ

---

[122] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 63-66:
[123] Տե՛ս նույն տեղում, էջ 64:
[124] Տե՛ս նույն տեղում, էջ 65:
[125] Տե՛ս նույն տեղում, էջ 64-65: Տե՛ս նաև Сумбат Давитис-дзе, с. 34:

իրականացվեց քաղկեդոնական եկեղեցաշինությանը զարկ տալու ճանապարհով: Աշոտ կուրապաղատի իշխանության շրջանից սկսած (8-րդ դ. վերջ-826)՝ լայն ծավալներ է ընդունում եկեղեցիների և վանքերի շինարարությունը, որի սկզբնավորողն այնուհետև տեղի հոգևոր առաջնորդի դերը ստանձնած Գրիգոր Խանձթեցին էր (759-861): Աշոտ կուրապաղատն իր իշխաններից մեկի միջոցով իմացավ Գրիգոր Խանձթեցու մասին[126], իր մոտ հրավիրեց նրան, զրուցեց, որից հետո խորությամբ ըմբռնեց նրա դերակատարությունը Կղարջքի կուրապաղատության ապագայի տեսլականի հարցում: Գրիգոր Խանձթեցին ստացավ բարեբեր վայրեր, այդ թվում՝ Շատբերդի շրջանը[127]: Այնուհետև Կղարջքի կուրապաղատը սկսեց հովանավորել Գրիգոր Խանձթեցու կողմից սկսված եկեղեցաշինությունը[128], որը վրացական պատմագիտության մեջ կոչվում է եկեղեցական գաղութացում[129]: Ավելին՝ կարծիք է հայտնվել, որ եկեղեցաշինությունը Կղարջքում ուներ ոչ միայն տեղական, այլև համավրացական նշանակություն[130]: Եկեղեցին, ամրապնդելով սեփական իշխանությունը, փորձ է կատարում խլելու աշխարհիկ իշխանությունը և զգալի հաջողություններ է արձանագրում[131]:

Կղարջքի Բագրատունիները քաղկեդոնական բուռն եկեղեցաշինության հնարավորություն ստացան այն պատճառով, որ 9-րդ դարում Շիրակի Բագրատունիներն այնքան էլ ուշադրություն չէին դարձնում դավանանքային հարցերին: Թեև Տայքը կցված էր Բագրատունյաց տիրույթներին, այնտեղ քաղկեդոնականները հնարավորություն

---

[126] Տե՛ս Георгий Мерчуле, гл. X:
[127] Տե՛ս նույն տեղում, գլ. XI:
[128] Տե՛ս նույն տեղում, գլ. X:
[129] Տե՛ս Ն. Վաչնաձե, Սերապիոն Զարզմեցու վարքը՝ որպես պատմական սկզբնաղբյուր, Թբ., 1975, էջ 199 (վրացերեն): Տե՛ս նաև “Очерки истории Грузии”, т. II, гл. VI, § 4.
[130] Տե՛ս Ս. Երեմյան, Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, էջ 108:
[131] Տե՛ս Մ. Լորդկիպանիձե, Ավատատիրական Վրաստանի քաղաքական միավորումները (IX-Xդդ.), Թբ., 1963, էջ 262-268 (վրացերեն):

էին ստացել գործելու ազատորեն: Վարդան վարդապետը հաղորդում է, որ «Սահակ Մռուտն կոչեցեալ, որ եպիսկոպոս էր Տայոց ի յԱշունքն, և հալածեալ անտի վասն հաւատոց (իմա՛ դավանանքի – Ա. Ե.), եկն ի Հայս առ Աշոտ (իմա՛ Աշոտ իշխանաց իշխան – Ա. Ե.)[132]: Դա տեղի էր ունեցել 876 թ. ոչ շատ առաջ, երբ Աշոտ Բագրատունին վաղուց արդեն Խալիֆայության կողմից ճանաչվել էր որպես Հայաստանի և այսրկովկասյան երկրների իշխանաց իշխան[133]: Պետք է եզրակացնել, որ այդ ժամանակ Տայքում քաղկեդոնականներն այնքան էին զորեղացել, որ դավանանքի պատճառով այնտեղից կարողացել էին հալածել Աշունքի (Օշկ) եպիսկոպոսին: Թերևս այդ ժամանակներից էլ սկսվել էր Աշունքի վանքի քաղկեդոնականացման գործընթացը: Բագրատունյաց հզորացման շրջանում այս գործընթացը դադարել էր, և մինչև Սմբատ Ա-ի մահը քաղկեդոնականները Տայքում ակտիվություն չէին ցուցաբերում: 10-րդ դարի կեսերին միայն Բագրատունիներն այնտեղ սկսում են լայն եկեղեցաշինական աշխատանքներ իրականացնել[134]: Նույն պատճառով Գրիգոր Խանձթեցու գործունեության շրջանում քաղկեդոնիկ եկեղեցու կողմից ձեռնարկվել է նաև հայոց իշխան Աշոտ Մսակերին քաղկեդոնական դավանանքի հետևորդ դարձնելու փորձ: Նրա միջոցով հնարավոր էր լինելու քաղկեդոնականությունը տարածել ողջ Հայաստանում: Դատելով Մխիթար Այրիվանեցու և Վարդան վարդապետի տեղեկություններից՝ քաղկեդոնականներն իրենց նպատակների մեջ որոշ հաջողության հասել էին, սակայն Միջագետքից ժամանած մի միաբնակ վանական դավանաբանական վեճում հաղթեց քաղկեդոնիկ հոգևորականին: Դրանից հետո Աշոտ Մսակերը վերջինիս վտարեց երկրից[135]:

---

[132] Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 91:

[133] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 136:

[134] Տե՛ս Сумбат Давитис-дзе, с. 33 և այդուհետ:

[135] Տե՛ս «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 53, Վարդան վարդապետ, էջ 84:

Գրիգոր Խանձթեցու ղեկավարությամբ Կղարջքի կուրապաղատությունում կառուցվել ու վերակառուցվել են տասնյակ վանքեր ու եկեղեցիներ[136]: Ըստ որում, երբ Գրիգոր Խանձթեցին եկավ Կղարջք, այնտեղ միակ գործող եկեղեցին Օպիզան էր[137]: Դատելով նրա ղեկավարությամբ հիմնված վանքերի և եկեղեցիների աշխարհագրությունից՝ վերջինս ընդգրկում էր միայն Կղարջքը: Այդ իսկ պատճառով նրան ուզում էին կարգել միայն Կղարջքի վանքերի և եկեղեցիների (Խանձթա, Շատբերդ, Միջնաձոր և այլն) հոգևոր առաջնորդ: Վիճակն այդպիսին էր նաև Բագարատ կուրապաղատի (826-876) որդու՝ Դավիթի օրոք (876-881), երբ կառուցվեց Խանձթայի քարե եկեղեցին[138]: Այդ ժամանակ գտնվելով Աբխազաց թագավորությունում և թագավորին նկարագրելով Կղարջքի վանքերն ու եկեղեցիները՝ Գրիգոր Խանձթեցին մասնավորապես պատմում է, որ դրանք մի կողմից սահմանակցում են Աբխազաց թագավորությանը՝ Մոսքական լեռների շրջանում ձգվող Ղադո լեռնապարով, իսկ մյուս կողմից շրջապատված են Շավշքի գետերով: Ընդհանրապես, Գեորգի Մերչուլի կողմից Գրիգոր Խնձթեցու կառուցած կամ վերակառուցված վանքերին ու եկեղեցիներին տրված «Կղարջքի մենաստաններ» անվանումն արդեն իսկ խոսում է այն բանի օգտին, որ դրանք բոլորը գտնվում էին Կղարջքում[139]: Հարկ է նշել, որ Գրիգոր Խանձթեցու հոգևոր իշխանության սահմանները պետք է նույնական լինեին Կղարջքի կուրապաղատության սահմաններին, քանի որ նրան գործունեության հնարավորություն էր տրվել Կղարջքի Աշոտ կուրապաղատի կողմից: Դատելով վրաց պատմիչ Դավթի որդի Սմբատի տեղեկություններից, Կղարջքի Աշոտ կուրապաղատի իշխանությունն ընդգրկում էր Կղարջքը, Շավշքը և Նիգալը[140]: Ուսումնասիրողներն արդեն ցույց են տրվել, որ Աշոտ կու-

---

[136] Տե՛ս Георгий Мерчуле, гл. V, IX:
[137] Տե՛ս նույն տեղում, գլ. VII:
[138] Տե՛ս նույն տեղում, գլ. XXVIII:
[139] Տե՛ս նույն տեղում, գլ. XXII:
[140] Տե՛ս Сумбат Давитис-дзе, с. 31-32:

բապաղատի իշխանությունը տարածվում էր միայն, այսպես կոչված, «մեծ» Կղարջքում[141]: Մինչդեռ վրաց պատմաբաններից ոմանք, չնայած վրացական աղբյուրի վերոհիշյալ տեղեկություններին, փորձում են ապացուցել, որ Աշոտ կուրապաղատի տիրույթների մեջ էին մտնում Շավշքը, Կղարջքը, Նիգալը, Ագարը (Աճարա), Տայքը, Սամցխեն, Ջավախքը և Արտահանը[142]: Մյուս կողմից, արձանագրելով, որ Աշոտ կուրապաղատի մահից հետո նրա տիրույթները գրավվեցին արաբների կողմից[143], այնուհետ կարծիք են հայտնում, որ դրանք բաժանվել են երկու մասի՝ Կղարջք և Տայք[144]: Ի դեպ, Հովհաննես Դրասխանակերտցու աշխատության թարգմանիչ Ե. Ցագարեիշվիլին կարծիք է հայտնել, որ Ատրներսեհն իշխում էր ոչ թե Կղարջքում, այլ Տայքում[145]: Հետևաբար ստացվում է, որ թագի է արժանացել Բագրատունիների ոչ թե Կղարջքի, այլ Տայքի ճյուղը[146]: Սակայն վերոհիշյալ տեսակետերը չեն հիմնավորվում հատկապես՝ վրացական աղբյուրների տեղեկություններով: Գրիգոր Խանձթեցու և նրա մերձավորների կողմից կառուցված կամ վերակառուցված եկեղեցիների թվում բացառություն էր կազմում միայն Իշխանի եկեղեցին, որը գտնվում էր Տայքում: Ըստ Գեորգի Մերչուլի՝ այն վերակառուցել է Գրիգոր Խանձթեցու շրջապա-

---

141 Տե՛ս Յ. Մարկուարտ, Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, ծանօթութիւններով, գրեց պրոֆ. դկտ. Յ. Մարկուարտ, գերմաներէնէ թարգմանեց Հ. Մ. Հապոզեան, Վիեննա, 1913, էջ 138, Ն. Ադոնց, Երկեր, հ. Ա, Ե., 2006, էջ 504:

142 Տե՛ս Դ. Մուսխելիշվիլի, Վրաստանի պատմական աշխարհագրության հիմնական հարցերը, գիրք 1, Թբ., 1977, գլ. II, § 6 (վրացերեն):

143 Տե՛ս Очерки истории Грузии, т. II, гл. VI, § 4.

144 Տե՛ս Ի. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմություն, հ. II, Թբ., 1965, էջ 111 (վրացերեն):

145 Տե՛ս «Հովհաննես Դրասխանակերտցու տեղեկությունները Վրաստանի մասին», հայերեն տեքստը վրացերեն թարգմանությամբ, ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով հրատ. Ե. Ցագարեիշվիլին, Թբ., 1965, էջ 0121-0123: Նույնը Տե՛ս Շ. Բադրիձե, «Քարթվելական թագավորության» քաղաքական համակարգի պատմությունից, «Թբիլիսիի պետական համալսարանի աշխատություններ», պատմություն, հնագիտություն, արվեստագիտություն, ազգագրություն, 113, Թբ., 1965, էջ 223-224 (վրացերեն):

146 Տե՛ս Փ. Ինղորոկվա, Գեորգի Մերչուլե, Թբ., 1954, էջ 127 (վրացերեն), Դ. Մուսխելիշվիլի, նշվ. աշխ., էջ 174:

տի հոգևորականներից Սաբանի կողմից[147]: Վերջինս, հաստատվելով Իշխանի եկեղեցում, դադարեց ենթարկվել Կղարջքի կուրապաղատին: Երբ Բագարատ կուրապաղատն իր մոտ հրավիրեց Սաբանին, նա չգնաց, իսկ երբ գնաց Գրիգոր Խանձթեցու հրավերով, կուրապաղատի հարցին, թե ինչու չընդունեց իր հրավերը, պատասխանեց, որ ենթարկվում է միայն Հիսուս Քրիստոսին[148]: Վերոհիշյալից պարզ է, որ Իշխանի եկեղեցու ընդգրկած տարածքը ենթակա չէր Կղարջքի կուրապաղատին, և, չնայած Սաբանն ի սկզբանե դուրս էր եկել Կղարջքից, հայտնվելով Տայքում, դադարեց ենթարկվել Կղարջքի կուրապաղատին: Ինչ վերաբերում է Գրիգոր Խանձթեցու հրավերին արձագանքելուն, ապա դա հետևանք էր այն բանի, որ Սաբանը շարունակում էր ընդունել վերջինիս հոգևոր ավագությունը: Այդ դեպքից հետո Բագրատ կուրապաղատը Գրիգորի և Սաբանի հետ ինքն այցելեց Իշխան: Հետագայում Սաբանը դարձավ Իշխանի եպիսկոպոս[149]: Պատճառն այն իրողությունն էր, որ Տայքը մտնում էր Շիրակի Բագրատունիների տիրույթների մեջ, ուստի Իշխանի եկեղեցում հաստատված Սաբանը ենթարկվում էր նրանց, սակայն լինելով քաղկեդոնական՝ ընդունում էր Գրիգոր Խանձթեցու հոգևոր իշխանությունը:

Պետք է նշել, որ դատելով Գեորգի Մերչուլի հաղորդումներից՝ Գրիգոր Խանձթեցին սկզբնապես իրավասու էր համարվում միայն այն վանքերի և եկեղեցիների նկատմամբ, որոնք կառուցվել կամ վերակառուցվել էին իր հովվապետության օրոք: Այսպես՝ նա Օպիզայի վանքն ու նրա քահանային համարում էր իրեն ոչ ենթակա[150]: Այդ իրողությունը թերևս բխում էր նրանից, որ Աշոտ կուրապաղատից հետո, երբ նրա երեք որդիները ստեղծեցին իրենց սեփական իշխանությունները[151], վերջիններից Գվարամ Բագրատունին, որը տիրում էր այդ

---

[147] Տե՛ս Георгий Мерчуле, гл. V.
[148] Տե՛ս նույն տեղում, գլ. XIV, XXVI:
[149] Տե՛ս նույն տեղում, գլ. XXVI:
[150] Տե՛ս նույն տեղում, գլ. XXXIV:
[151] Տե՛ս Вахушти Багратиони, с. 187:

վանքի շրջակա տարածքներին, հաշվի չէր նստում Կղարջքի հոգևորականների հետ[152]:

Կղարջքի կուրապաղատությունը Գրիգոր Խանձթեցու միջոցով շուտով փորձ կատարեց տարածելու սեփական եկեղեցու հոգևոր իշխանությունը Աբխազաց թագավորությունում: Այդ նպատակով աբխազաց թագավորի մոտ ուղարկվեց Գրիգոր Խանձթեցին: Աբխազաց թագավորը ընդունեց Գրիգոր Խանձթեցուն, որը նույնիսկ եկեղեցի հիմնեց այնտեղ[153]: Սակայն 881 և 888 թթ. բախումների ընթացքում ձևավորված այդ բարենպաստ իրավիճակը փոխվեց:

Եթե ընդհանրացնենք Կղարջքի կուրոպաղատության ընդարձակման միտումները 9-րդ դարում, կարող ենք արձանագրել, որ հստակորեն ընդգծվում է տարածման տեսլականը դեպի Վիրք, միևնույն ժամանակ փորձ է կատարվում ազդեցություն ձեռք բերելու նույն դավանանքն ունեցող Աբխազաց թագավորությունում: Սակայն 9-րդ դարի երկրորդ կեսին Վիրքին տիրելու համար պայքար է սկսվում Շիրակի Բագրատունիների և Աբխազաց թագավորության միջև, որի ընթացքում Կղարջքի Բագրատունիները բաժանվում են երկու ճամբարների: Աբխազաց թագավորին են միանում Գվարամ և Նասր Բագրատունիները, իսկ բուն Կղարջքի տերերը հայտնվում են իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու ճամբարում: Այդ իսկ պատճառով Գրիգոր Խանձթեցու այցելությունից հետո Աբխազաց թագավորությունում ստեղծված բարենպաստ իրավիճակը փոխվում է: 888 թ. բախման ժամանակ Աշոտ Ա թագավորը ջախջախիչ հարված է հասցնում Աբխազաց թագավորությանը, որն ընդունում է հայոց թագավորի գերիշխանությունը: Կղարջքի Բագրատունիների միջավայրում հաղթանակի է հասնում Ատրներսեհ Բագրատունին, որն այդուհետ հակադրվում է աբխազաց թագավորին Վիրքին տիրելու պայքարում:

---

[152] Տե՛ս Георгий Мерчуле, гл. XLII:
[153] Տե՛ս նույն տեղում, գլ. XIX-XXII:

2.2. Կղարջքի հոգևոր իշխանության մասնակի տարածումը Սամցխեում

Կղարջքում ծավալված եկեղեցաշինական աշխատանքներից հետո տեղի հոգևորականները, ոչ առանց աշխարհիկ իշխանության համաձայնության, սկսում են իրենց հոգևոր իշխանությունը տարածել հարևան Սամցխեում: Այնտեղ 860-ական թթ. հատուկ այդ նպատակով ուղարկվում է Սերապիոն Զարզմեցին՝ հոգևորականների մեծ խմբով:

Սկզբնաղբյուրներից հայտնի է, որ հայոց 774-775 թթ. ապստամբությունից հետո Կղարջքում հաստատված Վասակ Բագրատունու որդի Ատրներսեհը տիրում էր, ի թիվս այլ շրջանների, նաև Սամցխեին[154], բայց վերջինս դուրս էր մնացել նրա որդի Աշոտ կուրապաղատի տիրույթներից[155]: Սակայն Վախուշտ Բագրատիոնը, անդրադառնալով նրա որդիների տիրույթներին, մասնավորապես Սամցխեն հիշատակում է որպես Բագարատի տիրույթ[156]: Մյուս կողմից, հայտնի է, որ Սամցխեում գտնվող երեք բերդ, որոնք սահմանակից էին Աբխազաց թագավորությանը, կառուցվել էին Գվարամ Բագրատունու կողմից[157]: Կարելի է բխեցնել, որ Սամցխեի՝ Աբխազաց թագավորությանը հարևան մի հատվածը վերոհիշյալ երեք բերդերով, մտնում էր Գվարամ Բագրատունու տիրույթների մեջ: Դա այն ժամանակաշրջանն է, երբ Կղարջքի Բագրատունիների շրջանում հասունանում էին այնպիսի անլուծելի խնդիրներ, որոնք ի վերջո հանգեցրին բախման: Այդ իսկ պատճառով, երբ Գվարամը Ջավախքում եկեղեցական ժողով գումարեց՝ քննարկելու Վիրքի կաթողիկոս դարձած Արսենի խնդիրը, Կղարջքից որևէ հոգևորական չհրավիրեց: Միևնույն ժամանակ ժողովին հրավիրվել էին Սամցխեի հոգևորականները, որոնք նույնպես

---

[154] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 62:
[155] Տե՛ս Сумбат Давитис-дзе, с. 31:
[156] Տե՛ս Вахушти Багратиони, с.187:
[157] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 65, Вахушти Багратиони, с. 187-188:

դժգոհ էին Արսենի կաթողիկոս դառնալու փաստից[158]: Պետք է նշել նաև, որ, երբ Գվարամի որդի Նասրը 888 թ. աբխազների օգնությամբ եկավ Սամցխե, այնտեղ մեծ զորք հավաքեց[159]: Տվյալ իրողության մեջ, անկասկած, մեծ դեր էր խաղացել այն, որ Սամցխեի մի հատվածը պատկանել էր Գվարամին: Ավելին, եթե քննության առնենք Սամցխե մտած Կղարջքի հոգևորականների խիստ զգուշավորությունը, կարող ենք արձանագրել, որ Սամցխեում աստիճանաբար հաստատվել էր Գվարամի գերիշխանությունը:

Ըստ Վասիլ Զարզմեցու՝ Սամցխեի տարբեր շրջաններում Կղարջքի հոգևորականներին թշնամաբար էին ընդունում և արտաքսում իրենց երկրամասերից[160]: Սակայն Սամցխեի իշխաններից Գեորգի Չորչանեցին նրանց իր իշխանության մեջ ազատ գործելու հնարավորություն տվեց[161]:

Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ Սամցխեն ամբողջությամբ Բագարատի տիրույթների մեջ չէր մտնում: Գեորգի Չորչանեցու իշխանությունը, դատելով վերոասացյալից, ընդհանրապես Կղարջքի կուրապաղատներից և ոչ մեկին ենթակա չէր: Խնդիրն այն է, որ, եթե այդ իշխանությունը ենթակա լիներ Բագարատ Բագրատունուն, ապա նա պարզապես տեղի բնակչությանը կպարտադրեր Կղարջքի հոգևոր իշխանությունը: Իսկ եթե ենթակա լիներ Գվարամ Բագրատունուն, ապա այնտեղ Կղարջքի հոգևորականներին պարզապես չէին ընդունի: Մինչդեռ, Գեորգի Չորչանեցին, տեղեկանալով Կղարջքի հոգևորականների Սամցխեում գտնվելու մասին, ինքը նրանց հրավիրեց իր մոտ: Նա այդ արեց զուտ հոգևոր իմաստով և ոչ թե ընդունելով Կղարջքի Բագրատունիների իշխանությունը: Ինչպես տեսանք, Գվարամ Բագրատունին, որը տիրում էր Սամցխեի որոշ հատվածների,

---

[158] Տե՛ս Георгий Мерчуле, гл. XLII:

[159] Տե՛ս Сумбат Давитис-дзе, с. 33:

[160] Տե՛ս Василий Зарзмели, Житие Серапиона Зарзмели, “Древнегрузинская литература (V-XVIII вв.)”, тексты, сост. Л. Менабде, пер. с груз., Тб., 1987, гл. V:

[161] Տե՛ս նույն տեղում, գլ. VI-VII:

հակադրվում էր Գրիգոր Խանձթեցու հոգևոր իշխանությանը: Կարծում ենք, որ Սամցխեում գտնվող այն իշխանությունը ևս, որտեղից վտարեցին Սերապիոն Զարզմեցուն, կա՛մ անկախ իշխանություն էր և կա՛մ էլ ենթակա էր Գվարամ Բագրատունուն: Այսպիսով՝ Կղարջքի կուրապաղատության հոգևոր իշխանության հաստատումը Սամցխեում ամբողջական չեղավ:

Երբ քաղաքական թատերաբեմից հեռացան Գվարամ Բագրատունին և նրա որդի Նասրը, Սամցխեում նրանց տիրույթները, ամենայն հավանականությամբ, անցան կամ Կղարջքի Ատրներսեհ Բագրատունի իշխանին և կամ Սամցխեի մյուս իշխանություններին: Առավել հավանական է երկրորդ հնարավորությունը, քանի որ Սամցխեի իշխանությունները պահպանեցին իրենց ինքնուրույնությունը նաև հետագայում: 10-րդ դարի 40-ական թթ.՝ հայոց Աբաս թագավորի օրոք, Սամցխեն հանդես է գալիս որպես առանձին թագավորություն: Արաբ աշխարհագրագետ Մասուդին, որ եղել է Հայաստանում, մասնավորապես տեղեկացնում է. «Ջուրզանների (իմա՛ վրաց – Ա. Ե.) թագավորության կողքին գտնվում է Սամսախի (իմա՛ Սամցխե – Ա. Ե.) կոչվող թագավորությունը: Բնակչությունը խառն է՝ քրիստոնյա և հեթանոս»[162]: Հեղինակը Սամցխեի թագավորությունը հիշատակում է Կղարջքի թագավորությունից առանձին, իսկ ինչ վերաբերում է բնակչության՝ քրիստոնյա և հեթանոս լինելու իրողությանը, ապա այն կարելի է հասկանալ ինչպես բառի բուն իմաստով, այնպես էլ որպես հայադավան և քաղկեդոնական բնակչության առկայության վկայություն, քանի որ վերջիններս միմյանց հաճախ պարզապես կոչում էին «հերետիկոս», «անհավատ» և այլն:

---

[162] Al-Masʿūdī, I, էջ 204: Հայերեն թարգմանությունը տե՛ս «Աբու ալ-Հասան Ալի իբն ալ-Հուսայն իբն Ալի ալ-Մասուդի, Ոսկու մարգագետիններ և գոհարների հանքեր («Մուրուջ ազ-զահաբ վա մաադին ալ-ջավահիր»), Ցուցումների և դիտարկումների գիրք («Քիթաբ ատ-տանբիհ վալ-իշրաֆ»), Հատվածներ Հայաստանի, Կովկասյան լեռների և հարևան երկրների մասին, արաբերեն բնագրերից թարգմանությունը, Մասուդիի կենսագրությունը և ծանոթագրությունները Ա. Ս. Եղիազարյանի, Ե., 2007, էջ 32:

2.3. Ատրներսեհ Բագրատունու նկրտումները Այսրկովկասի քաղկեդոնական միջավայրի և հայոց գահի նկատմամբ

881 թ. Կղարջքի կուրապաղատ էր դարձել Ատրներսեհ Բագրատունին, որը վայելում էր իշխանաց իշխան Աշոտի հովանավորությունը: Նրա հիմնական թիրախը Այսրկովկասի քաղկեդոնականների մեջ գերիշխանության հասնելն էր այն հեռանկարով, որ դրանք պետք է միավորվեին մի թագավորության մեջ՝ Բագրատունիների գլխավորությամբ: Հարկ է նշել, որ նման նկրտումներ նրանց ներշնչել էին հայոց արքաները՝ նրան հռչակելով մի կողմից «վրաց իշխան» և այնուհետև «վրաց թագավոր», իսկ մյուս կողմից՝ վերապահելով հայոց թագավորության աստիճանակարգում երկրորդ տեղը: Էական է նաև այն, որ չնայած վերոհիշյալին՝ Սմբատ Ա-ն իր արքայական տիտղոսաշարքում, բացի «հայոց թագավոր» ու «Տիեզերակալ» տիտղոսների, իրեն էր վերապահում նաև «թագավոր վրաց» տիտղոսը, որը հավանական կասկած էր առաջացնում առ այն, որ Ատրներսեհին տրված «թագավոր վրաց» կոչումը ոչ միայն ժառանգական չէ, այլև աշխարհագրական ընդգրկման առումով չէր կարող վերաբերել Այսրկովկասի ողջ քաղկեդոնական միջավայրին: Ինչ վերաբերում է հայոց թագավորության աստիճանակարգում ստացած երկրորդ տեղին, ապա պետք է նշել, որ Ատրներսեհը Սմբատի թագադրման շրջանում իրականացրել էր Բագրատունիների հինավուրց թագադիր ասպետի գործառույթը, որով էլ թերևս պայմանավորում էր նրա տեղը հայոց թագավորության մեջ: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, երբ վախճանվեց Աշոտ Ա-ն, Սմբատը ներկա չգտնվեց թաղմանը, քանի որ գտնվում էր Գուգարքում[163]: Իմանալով այդ մասին՝ Սմբատը գալիս է Երազգավորս, որտեղ նրան այցելում է վրաց (իմա՛ Կղարջքի) մեծ իշխան Ատրներսեհը[164]:

---

[163] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 446:
[164] Տե՛ս նույն տեղում:

Վանանդի կողմերում իշխում էր Աշոտի եղբայր Աբասը, որ ձգտում էր թագավոր դառնալ: Աբասը ձերբակալում է Ատրներսեհին և պահանջում. «Տացէ ինձ այսրէն Ատրներսեհ զերկու ամրոցսն, զոր յափշտակեալ իսկ է ի ձեռաց Գուրգենայ քեռառն իմոյ, և զԴաւիթ զորդի իւր գրաւական ինձ յայսմհետէ»[165], բայց ստանալով պահանջածը՝ չի կատարում իր խոստումը: Սակայն Սմբատը հարձակվում է նրա վրա և ազատում Ատրներսեհին, իսկ ոստիկան Աֆշինը Սմբատին է մատուցում թագը՝ Ատրներսեհի միջոցով[166]: Սմբատ Ա-ին հնազանդվում են թե՛ Ատրներսեհ կուրոպաղատը և թե՛ նրա համախոհները, իսկ ով չի հնազանդվում, նվաճվում է զենքի ուժով: Այնուհետև Հովհաննես Դրասխանակերտցին Կղարջքը ներկայացնում է Սմբատ Ա-ի թագավորության կազմում[167]:

Երկար ժամանակ, չնայած Սմբատ Ա-ի կրած դժվարություններին Ատրպատականի ամիրայության դեմ մղվող պայքարում, Ատրներսեհը հավատարիմ էր մնացել նրան, որի համար Սմբատը նրան կարգում է վրաց թագավոր[168]: Հովհաննես Դրասխանակերտցին հաղոր-

---

[165] Նույն տեղում, էջ 446-447:

[166] Տե՛ս նույն տեղում, էջ 448:

[167] Տե՛ս նույն տեղում, էջ 457:

[168] Տե՛ս նույն տեղում, էջ 471: Մ. Բրոսսեն, Ս. Երեմյանը, Ի. Ջավախիշվիլին և Կ. Թումանովն Ատրներսեհի՝ թագավոր դառնալը թվագրում են 888 թ.: Տե՛ս M. Brosset, Histoire de la Georgie, I, St.-Petersbourg, 1849, pp. 273-279, С. Еремян, Присоединение северо-западных областей Армении к Византии в XI веке, «Լրաբեր (հաս. գիտ.)», 1971, N 3, с. 5, ծանոթ. 7, Ի. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմություն, II, Թբ., 1965, էջ 111 (վրացերեն), C. Toumanoff, The Bagratids of Iberia from the eight to the eleventh Century. “Le Museon", LXXIV, Louvain, 1961, pp. 21-25), իսկ Մ. Չամչյանցը, Հ. Մարկվարտը, Ն. Ադոնցը, Ե. Թաղայշվիլին, Ե. Ցացարեիշվիլին և Մ. Ճանաշյանը կարծում են, որ Ատրներսեհի թագադրությունը տեղի է ունեցել 899 թ.: Տե՛ս Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հ. Բ., Վենետիկ, 1785, էջ 727, Յ. Մարկուարտ, նշվ. աշխ., էջ 148 (ներդիր), Ն. Ադոնց, Երկեր, հ. Ա, էջ 501, “Жизнь и известия о Багратионианахх, царях нашых грузинских, откуда они явились в эту страну, или с какого времени владеют они царством Грузинским, которое написал Сумбат, сын Давида”, пер. Е. Такайшвили, տե՛ս "Сборник материалов для описания местностей и племен Кавказа", вып. XXVIII, Тифлис, 1900, с. 83, «Հովհաննես

դում է, որ Սմբատ Ա-ն «կացուցանէ զնա (իմա՝ Ատրներսեհին – Ա. Ե.) թագաւոր Վրաց աշխարհին (իմա՛ Կողարջքի – Ա. Ե.) և երկրորդ իւրոյ տէրութեանն զնա հաստատէ»[169]: Վրաց պատմիչ Դավթի որդի Սմբատը տեղեկացնում է, որ Դավիթ կուրապաղատի որդի Ատրներսեհին վրաց թագավոր կարգեցին 888 թ. տեղի ունեցած դեպքերից հետո[170]: Ստեփաննոս Օրբելյանը հավաստում է, որ երբ հայոց թագավորության մասնատման համար դուռ բացեցին Արծրունիները և թագ ստացան Ատրպատականի ամիրայից[171], թագավոր դարձավ նաև Ատրներսեհ Բագրատունի իշխանը, որից հետո «թագ կապեաց և Աղուանին Համամ»[172]:

Վրացական պատմագիտության մեջ զարգացվել է այն միտքը, որ Կողարջքի կուրապաղատները հանդիսացել են Բյուզանդիայի վասալները: Ատրներսեհի թագավոր դառնալն էլ, քանի որ նա միաժամանակ և՛ թագավոր էր, և՛ կուրապաղատ, բխեցվում է այդ իրողությունից[173]: Ն. Գուրգենիձեն, անդրադառնալով Ատրներսեհ Բագրատունու թագադրության հարցին, կարծիք է հայտնել, որ 888 թ. նա հռչակվել է որ-

---

Դրասխանակերտցու տեղեկությունները Վրաստանի մասին», հայերեն տեքստը վրացերեն թարգմանությամբ, ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով հրատ. Ե. Ցագարեիշվիլին, Թբ., 1965, էջ 0121-0122 (վրացերեն), Մ. Ճանաշեան, Դաւիթ կիւրապաղատ (պատմական ուսումնասիրութիւն), Վենետիկ, 1972, էջ 13-14): Ատրներսեհի թագադրությունը մոտավորապես տեղադրվել է նաև 906-908 թթ. միջև: Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, Ե., 1976, էջ 31-32):

[169] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 471:

[170] Տե՛ս Сумбат Давитис-дзе, с. 34:

[171] Սյունյաց պատմիչը Յուսուֆի փոխարեն նշում է Աֆշինի անունը, որը սխալ է: Այդ պատճառով փորձ է կատարվել նշված իրադարձությունը տեղադրելու 890-ական թթ. առաջին կեսին, ավելի ճշգրիտ՝ Սմբատ Ա-ի թագադրության շրջանում: Տե՛ս Հ. Ուլուբաբյան, Սյունիքը IX-X դարերում, Ե., 1958, էջ 92-93: Սակայն պետք է հիշել, որ խոսքն այն ժամանակաշրջանի մասին է, երբ թագ ստացավ Վասպուրականի Գագիկ իշխանը, այսինքն՝ այդ իրադարձությունը պետք է տեղի ունեցած լիներ 908 թ.:

[172] «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 299:

[173] Տե՛ս "Очерки истории Грузии", т. II, гл. VI, § 4:

պես Կղարջքի, իսկ 897 թ.՝ վրաց թագավոր։ Դրանք երկու տարբեր կարգավիճակներ էին։ Առաջինը տեղական թագավորի կարգավիճակ էր, ինչպես աբխազաց թագավորինը, իսկ երկրորդը՝ վրացական թագավորի և թագավորության «դե յուրե» ճանաչում էր[174]։

Վրաց թագավորության ստեղծման թվականը ճշգրտելու համար հիմք ենք ընդունում Հովհաննես Դրասխանակերտցու երկում նկարագրված՝ 890-ական թթ. իրադարձությունների ժամանակագրական հերթականությունը։ 897 թ. Հայաստան ներխուժեց Աֆշինը[175]։ Նույն տարվա վերջին (ձմռանը) մահացավ Գևորգ կաթողիկոսը (877-897)[176]։ Հաջորդ կաթողիկոսը՝ Մաշտոցը (898), մահացավ յոթ ամիս գահակալելուց հետո[177]։ Քանի որ Գևորգ կաթողիկոսը մահացել էր 897 թ. վերջին, իսկ Մաշտոցը կաթողիկոս է դարձել 898 թ. գարնանը[178], ուստի Մաշտոցի գահակալությունը պետք է ավարտված լինի 898 թ. վերջին, որից հետո կաթողիկոս դարձավ Հովհաննես Դրասխանակերտցին (898-929)։ Այդ տարի կառուցվեց արքայանիստ Երազգավորսի եկեղեցին։ Արդեն 899 թվականին է վերաբերում Հովհաննես Դրասխանակերտցու այն վկայությունը, որ Սմբատ Ա-ն, գնահատելով Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհի հավատարմությունը, նրան թագադրում է[179]։ Ըստ որում՝ հայոց արքան նրան հռչակում է «թագաւոր Վրաց աշխարհին»[180], թեև նա միայն Կղարջքի իշխանն էր և Վիրքին դեռ չէր

---

[174] Տե՛ս Ն. Գուրգենիձե, Հովհաննես Դրասխանակերտցու մի տեղեկության շուրջ, «Թբիլիսիի պետական համալսարանի աշխատություններ», պատմություն, հնագիտություն, արվեստագիտություն, ազգագրություն, 1999, էջ 249-258 (վրացերեն)։

[175] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 467։ Ըստ Մովսես Դասխուրանցու՝ արշավանքը տեղի է ունեցել 897 թ.։ Տե՛ս Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Ադուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Ե., 1983, էջ 337։ Ըստ պատմիչի՝ նույն թվականին վախճանվեց Գևորգ կաթողիկոսը (անդ)։

[176] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 469։

[177] Տե՛ս նույն տեղում, էջ 470։

[178] Տե՛ս նույն տեղում։

[179] Տե՛ս նույն տեղում, էջ 471։

[180] Տե՛ս նույն տեղում։

տիրում[181]: Կարևոր է այն, որ հաղորդելով Ատրներսեհի թագադրության մասին, որին հետևում է Աֆշինի արշավանքը, թերևս, 900 թ., պատմիչը նրան դարձյալ կուրապաղատ է կոչում[182]:

Սմբատ Ա-ի կողմից Ատրներսեհին տրված թագը, ընդհանուր առմամբ, վերջինիս համար նշանակում էր միայն հայոց թագավորության աստիճանակարգում երկրորդ տեղի ամրագրում: Այդ իսկ պատճառով Հովհաննես Դրասխանակերտցին Ատրներսեհին շարունակում է կոչել կուրապաղատ: Հ. Բարթիկյանը ցույց է տվել, որ հայոց թագավորին Բյուզանդիայի կայսրը կոչում էր «որդի», որով արտահայտվում էին նրանց միջև գոյություն ունեցող հարաբերությունները: Ինչ վերաբերում է հայոց թագավորությանը, ապա նույն կերպ հայոց թագավորի համար որդի էին հանդիսանում վրաց (իմա՝ Կղարջքի) իշխանը (հետագայում՝ թագավորը) և աբխազաց թագավորը[183]: Գոյություն ուներ, սակայն, էական տարբերություն: Ի տարբերություն հայոց թագավորի՝ Բյուզանդիայի կայսեր նկատմամբ խորհրդանշական «որդիության»՝ հայոց թագավորի «որդիների» իշխանությունները, ինչպես տեսանք, հայոց թագավորության մաս էին կազմում, իսկ այդ իշխանները, բացի «որդի» լինելուց, նաև հպատակ և «ծառա» էին հայոց թագավորի համար[184]: Ուստի և զարմանալի չէ, որ եթե բյուզանդացիները այսրկովկասյան իշխաններին կոչվում էին իշխան, կուրապաղատ կամ մագիստրոս, ապա հայոց իշխանին (հետագայում՝ հայոց թագավորին)՝ իշխանաց իշխան (արքոնտների արքոնտ)[185]:

---

[181] Տե՛ս Յ. Մարկուարտ, նշվ. աշխ., էջ 138, Ն. Ադոնց, Երկեր, հ. Ա, էջ 504, Ա. Եղիազարյան, Կղարջքի կյուրոպաղատությունը և Վիրքը հայ Բագրատունիների տերության կազմում, «Պատմամշակութային ժառանգության մատենաշար», «Հուշարձան տարեգիրք», Զ, 2010, էջ 209-216:

[182] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 472:

[183] Տե՛ս Հ. Բարթիկյան, Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ., «Լրաբեր (հաս. գիտ.)», 1996, N 2, էջ 27-28:

[184] Տե՛ս Ասողիկ, էջ 169-170:

[185] Տե՛ս Հ. Բարթիկյան, Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ., էջ 27-28:

906 թ. տեղի ունեցած հայ-աբխազական բախումը Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհին մեծ հույսեր ներշնչեց։ Խնդիրն այն է, որ նախորդ բախումներից (881 և 888 թթ.) Ատրներսեհը կարողացել էր հնարավորինս արդյունքներ քաղել՝ դառնալով Կղարջքի միահեծան տերը։ Այժմ արդեն, երբ Կղարջքի կուրապաղատության ապագան սերտորեն սկսում էր փոխկապակցվել Այսրկովկասի քաղկեդոնականների հետ, նման բախումը կարող էր հնարավորություն տալ նրան գերիշխանության հասնելու նրանց միջավայրում։ Ազգակցական կապի հաստատումը՝ դստերն աբխազաց թագավորին կնության տալու միջոցով[186], հաջողություն չէր բերել, ուստի հույսը հայոց թագավոր Սմբատ Ա-ն էր, որը Ատրներսեհին իր հետ վերցրած արշավանքի դուրս եկավ աբխազաց թագավոր Կոստանդին Գ-ի (893-922) դեմ։

Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ 906 թ.[187] աբխազաց թագավոր Կոստանդին Գ-ն հավաքեց իր զորքը և արշավեց դեպի Ալանաց Դրունք՝ նվաճելու այն և նրա շրջակա ցեղերին։ Աբխազական զորքի մի մասն էլ ներխուժեց Գուգարք։ Ատրներսեհը հորդորեց նրան՝ հետ կանգնելու նման սխալ քայլից և «իրենից ավելի վեհերին (իմա՛ Սմբատ Ա – Ա. Ե.) չհակառակվել», բայց անարդյունք։ Սմբատ Ա-ն անմիջապես անցավ հակահարձակման։ Կոստանդին Գ-ն, ի զորու չլինելով պատերազմել Սմբատ Ա-ի բանակի դեմ, հաշտության բանակցություններ է սկսում, սակայն ձերբակալվում է։ Հովհաննես Դրասխանակերտցին Սմբատ Ա-ի արշավանքի ընթացքում հիշատակում է Գուրիայի (Վուրի աշխարհ) գրավման մասին[188]։

---

[186] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 482։

[187] Տե՛ս Ա. Եղիազարյան, Հայոց Սմբատ Ա թագավորի աբխազական արշավանքը, «Լրաբեր (հաս. գիտ.)», 2010, N 1-2, էջ 119-130։

[188] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 482։ Վուրի աշխարհ-Գուրիա նույնականությանն անդրադարձել է Պ. Մուրադյանը։ Տե՛ս «Կովկասեան մշակութային աշխարհը և Հայաստանը», պրակ Ա, Ե., 2008, էջ 249։

Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդմանը մի շարք կարևոր մանրամասներ է ավելացնում Անանուն Զրուցագրի հաղորդած տեղեկությունը: Ըստ պատմիչի՝ Սմբատ Ա-ն աբխազաց թագավորի դստերը կնության է բերում իր որդի Մուշեղին և դրանից հետո որոշում ազատագրել աբխազական զորքի կողմից գրավված Կանգարք, Գոգշեն, Ձայլցեղ, Կող և Արտահան գավառները, որը և իրականացվում է: Դրա պատճառով աբխազաց թագավորը ձերբակալում է Մուշեղին, իսկ Սմբատ Ա-ի զորքերը դիմում են հակահարձակման և հասնում Գորի քաղաքին, որտեղ գտնվում էր աբխազաց թագավորը Մուշեղի հետ: Աբխազաց թագավորը բանակցությունների ժամանակ գերվում է, ազատում Մուշեղին և Սմբատ Ա-ին զիջում Կանգարքը, Գոգշենն ու Կողը: Հայկական զորքերը ներխուժում են Աբխազաց թագավորություն: Ի հավելումն Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդման, ըստ որի՝ հայկական զորքերի կողմից գրավվել էր Գուրիան (Վուրի աշխարհ), Անանուն Զրուցագիրը հիշատակում է նաև բուն Աբխազքի գրավումը (Նավհանաց աշխարհ)[189]: Մյուս կողմից, ի տարբերություն Հովհաննես Դրասխանակերտցու, ըստ որի՝ աբխազաց թագավորին գերել է Կղարջքի թագավոր Ատրներսեհը, Անանուն Զրուցագիրը տեղեկացնում է, որ այդ արել է Վասպուրականի Գուրգեն իշխանը[190]:

Խնդրո առարկա իրադարձությունների վերաբերյալ կարևոր տեղեկություններ է հաղորդում նաև «Քարթլիի մատյանը», ըստ որի՝ Կոստանդինն արշավում է Վիրք և նվաճում այն: Սմբատ Տիեզերակալն արշավանքի է ելնում, ետ նվաճում Վիրքը, պաշարում կարևոր նշանակություն ունեցող ամրոց Ուփլիսցխեն ու գրավում գրոհով:

---

[189] «Նավհանաց աշխարհ» անվանումը ցույց է տալիս, որ խոսքը Աբխազաց թագավորության ծովափնյա շրջանների մասին է, որտեղ գտնվող հայտնի նավահանգիստները ծովային առևտրական ուղիներով կապված էին սևծովյան այլ նավահանգիստների հետ:

[190] Տե՛ս «Պատմութիւն Անանուն Զրուցագրի» (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Ե., 1971, էջ 189-193:

Դրանից հետո երկու թագավորները հաշտվում են, և Կոստանդինն ընդունում է Սմբատ Ա-ի գերիշխանությունը և նրանից ստանում Վիրքը[191]:

Խոսելով այն իրողության մասին, որ 906 թ. Սմբատ Ա-ին Աբխազաց թագավորության դեմ պայքարում աջակցում էր Կղարջքի կուրապաղատ Ատրներսեհը, Ի. Ջավախիշվիլին գտնում է, որ Կղարջքի կուրապաղատները սովորաբար հենց այդպես էլ վարվում էին, որպեսզի ինչ-որ կերպ խոչընդոտեն Աբխազաց թագավորության հզորացմանը[192]:

Աբխազաց թագավորությունում շուտով՝ Կոստանդին Գ-ի ձերբակալվելուց հետո, սկսում են մտածել նոր թագավորի մասին, ուստի Սմբատ Ա-ն թագավորական ոսկե խույր է դնում Կոստանդին Գ-ի գլխին, արքայական հագուստներ հագցնում նրան և օգնական զորքով ուղարկում իր թագավորություն: Այնուհետև «ի բազում հնազանդութիւն և մտերմական ծառայութիւն համախոհութեան զինքն (իմա՛ Կոստանդին Գ – Ա. Ե.) արքային Սմբատայ բերէր սակս հայրաբուն նախախնամութեան նորա առ նա»[193]: Սմբատ Ա-ն, փաստորեն, առավել նպատակահարմար է գտնում աբխազաց թագավորին տեսնել Այսրկովկասի քաղկեդոնականների առաջնորդի դերում:

Ատրներսեհն արագ գնահատեց իրավիճակը: Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու՝ նա չարացավ՝ կարծելով, որ դա ի հակադրություն իրեն է արվել և սկսեց դավադրություն ծրագրել: Բայց Սմբատ Ա-ն սկզբում լուրջ չէր վերաբերվում Ատրներսեհի դժգոհությանը, մինչև որ չպարզվեց, որ հայ ազդեցիկ իշխաններից մեկը՝ Հասանը, որը ծրագրում էր սպանել նրան, դավադրության մեջ է ներքաշել Ատրներսեհին: Վերջինիս խոստացվել էր հայոց գահը[194]: Նրանց է

---

[191] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 66:
[192] Տե՛ս Ի. Ջավախիշվիլի, նշվ. աշխ., էջ 101:
[193] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 483:
[194] Տե՛ս նույն տեղում, էջ 484-485:

միանում նաև Հավնունի իշխանը։ Դավադիրների զորքը գալիս է Անի, որը հանձնվում է Ատրներսեհին, իսկ այնտեղից՝ մայրաքաղաք Երազգավորս և տեղավորվում արքունական ապարանքում։ Սմբատ Ա-ն, որ գտնվում էր Տաշիրքում, տեղեկանում է այդ ամենի մասին և արշավում նրանց դեմ։ Ատրներսեհն ու Հասանը, թալանելով Անին, հեռանում ու ապաստանում են Տայքում։ Դավադրության լուրը միավորում է բոլորին, որոնք զորքով հավաքվում են Սմբատ Ա-ի շուրջը։ Հայոց բանակը ներխուժում է Ատրներսեհի տիրույթներ, սակայն թագավորը հրամայում է անմեղներին չվնասել։ Ատրներսեհը գալիս է Սմբատ Ա-ի մոտ և ներում հայցում։ Սմբատ Ա-ն ներում է նրան, սակայն նրա ավագ որդուն պատանդ է վերցնում՝ որպես հավատարմության գրավական։ Այդուհետ Սմբատ Ա-ն Ատրներսեհի կողմնակից իշխաններին, որոնք, դատելով պատմիչի տեղեկություններից, Ատրներսեհի տիրույթներից էին («զնախարարսն զիւր առհասարակ ի նմանէ ի ձեռն առեալ»), կուրացնել է տալիս և մի մասին ուղարկում Բյուզանդիայի կայսերը, իսկ մյուս մասին՝ աբխազաց թագավորին[195]։

Ամենայն հավանականությամբ, դավադիրները Ատրպատականի Յուսուֆ ամիրայի հետ գործակցել էին, քանի որ Հովհաննես Դրասխանակերտցին հաղորդում է, որ դավադրությունը ծագել էր այն բանից հետո, երբ լարվել էին Սմբատ Ա-ի ու Յուսուֆի հարաբերությունները, որը Հասանին և յուրայիններին վախ էր ներշնչել ապագայի վերաբերյալ[196]։ Այդ իսկ պատճառով նա կուրացված դավադիրների մի մասին ուղարկեց կայսերը, քանի որ նրանք, փաստորեն, Խալիֆայության կողմնակիցներն էին դարձել։ Իսկ ո՞րն էր նրանց մի մասին աբխազաց թագավորին ուղարկելու պատճառը։ Կարծում ենք, որ Սմբատ Ա-ն, թեև Ատրներսեհին նախկինում դարձրել էր իր տերության երկրորդ մարդը, սակայն աբխազաց թագավորին էր դիտարկում Այսրկովկասի քաղկեդոնականների առաջնորդի դերում։ Ի զուր չէ, որ

---

[195] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 486-487։

[196] Տե՛ս նույն տեղում, էջ 485։

Ատրներսեհը Կոստանդին Գ-ի ազատ արձակումը և թագադրումը համարեց իրեն ի հակադրություն կատարված քայլ: Քաղկեդոնականների շրջանում Աբխազաց թագավորության և Կղարջքի կուրապաղատության միջև առաջնության համար մղվող պայքարի պատճառով էլ Սմբատ Ա-ն ցուցադրաբար նրան ուղարկեց կուրացված դավադիրներին՝ ի նշան այն գերադասության, որ Կոստանդին Գ-ին տալիս էր հայոց արքունիքը:

Փաստորեն՝ Ատրներսեհ Բագրատունին հասկացավ, որ տվյալ շրջանում, երբ Սմբատ Ա-ն քաղկեդոնականների միջավայրում առաջնությունը տալիս է աբխազաց թագավորին, սեփական իշխանության սահմաններն ընդարձակել չի կարող, ավելին՝ ստիպված է լինելու համակերպվել փոքրիկ իշխանություն ունենալու մտքին: Ի դեպ, Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդումն այն մասին, որ Ատրներսեհի կարծիքով, Սմբատ Ա-ն, Կոստանդին Գ-ին թագադրելով և օգնական զորքով ուղարկելով Աբխազաց թագավորություն, նրան հակադրել է իրեն, խոսում է այն բանի օգտին, որ հայոց թագավորն այլևս այնքան էլ չէր վստահում իր թագավորության մեջ երկրորդ իշխանին՝ ամենայն հավանականությամբ հասկանալով նրա նկրտումները: Սմբատ Ա-ի կասկածները, ինչպես տեսանք, շուտով արդարացան:

Ատրներսեհը շուտով նոր քայլեր ձեռնարկեց: Ըստ Ստեփաննոս Օրբելյանի՝ Աղվանից և Կղարջքի իշխանների թագադրությունը տեղի է ունեցել 908 թ.՝ Վասպուրականի թագավորության ստեղծումից հետո: Կարծիք է հայտնվել, որ Աֆշինի 900 թ. արշավանքը Հայաստան տեղի է ունեցել Սմբատ Ա-ի կողմից Ատրներսեհի թագադրության պատճառով, քանի որ թագադրության իրավունք ուներ միայն խալիֆան[197]: Եթե հիմք ընդունենք Աֆշինի արշավանքի այդ միանգամայն հնարավոր դրդապատճառը, ապա կարող ենք առանց երկմտելու կարևոր եզրակացության հանգել: Աֆշինից Սմբատ Ա-ի կրած պար-

[197] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 32:

տությունից հետո Ատրներսեհի, ինչպես նաև Համամի թագադրությունները, անկասկած, ի չիք էին դարձել:

Ստեփաննոս Օրբելյանի հիշատակությունն ունի մի կարևոր նշանակություն: Վասպուրականի թագավորության ստեղծումը նա դիտարկում է որպես հայոց թագավորության մասնատման գործընթացի սկիզբ, որին հաջորդեց «Վրաց» և Աղվանից թագավորությունների ստեղծումը: Եթե հիմնվենք պատմիչի հաղորդման վրա, կարող ենք կատարել կարևոր եզրակացություններ: 908 թ. Յուսուֆը լուրջ քայլեր է կատարում հայոց թագավորությունը մասնատելու և թուլացնելու ուղղությամբ: Այդ նպատակով նա թագադրում է Գագիկ Արծրունուն[198]: Սյունյաց իշխանը Յուսուֆի առաջարկած թագից հրաժարվում է: Հույժ կարևոր տեղեկություն է պահպանել Ասողիկը, որը, խոսելով 908 թ. իրադարձությունների մասին, տեղեկացնում է, որ Յուսուֆ ամիրայի մոտ «երթեալ Արտներսեհ Վրաց թագաւոր և Գագիկ իշխան Վասպուրականի» ու այլ հայ իշխաններ[199]: Փաստորեն, ի տարբերություն Հովհաննես Դրասխանակերտցու, համաձայն որի՝ Աֆշինի մոտ գնացել է Գագիկ Արծրունին և թագ ստացել[200], Ասողիկը հաղորդում է, որ Յուսուֆի մոտ է գնացել նաև Ատրներսեհ Բագրատունին: Կարծում ենք, որ Յուսուֆին հարած Ատրներսեհ Բագրատունուն հնարավոր էր բավարարել միայն թագավորական թագով, քանի որ նա արդեն այդպիսի թագ ստացել էր 899 թ., սակայն Աֆշինի 900 թ. արշավանքը և Ատրներսեհին «վրաց թագավոր» հռչակած Սմբատ Ա-ի պարտությունն ի չիք էին դարձրել այդ թագը: Նշենք նաև այն իրողությունը, որ Յուսուֆի 909 թ. արշավանքի ժամանակ, դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից, Սմբատ Ա-ն օգնություն չստացավ Ատրներսեհից, որը պետք է հետևանքը լիներ այն իրողության, որ նա հարել էր Յուսուֆին: Հայոց թագավորը ստիպված ապաստանեց Աբխազաց թա-

---

[198] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 487:
[199] Տե՛ս Ասողիկ, էջ 164:
[200] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 487:

գավորությունում[201]: Այն, որ շատ հավանական է Ատրներսեհի թագադրությունը Յուսուֆի կողմից, ցույց է տալիս թեկուզ այն փաստը, որ վերջինս թագ էր առաջարկել նաև Սյունյաց Վասակ իշխանին: Այսինքն՝ հայոց թագավորությունը մասնատելու նպատակի առումով Յուսուֆի համար ոչ մի խնդիր չկար Գագիկ Արծրունուց և Վասակ Սյունուց բացի թագ առաջարկելու նաև Ատրներսեհին:

Ասողիկի արժեքավոր տեղեկության համաձայն, երբ Աշոտ Երկաթը Հայաստանը մաքրեց թշնամուց, նա «գտանէ զծառայս հօր իւրոյ թագաւորեալ. զինքն անուանեաց Շահանշահ, այսինքն թագաւորաց թագաւոր»[202]: Ինչպես հաղորդում է Վարդան վարդապետը, խոսքը մասնավորապես Աշոտ Երկաթի հորեղբորորդի Աշոտի, Գագիկ Արծրունու, Ատրներսեհ (հեղինակի տեղեկության մեջ՝ Ներսեհ) Բագրատունու և, թերևս, նաև աղվանից թագավոր Համամի մասին է: Եվ Աշոտը «կոչեցաւ ի վերայ նոցա Շահնշահ (իմա՛ թագավորների թագավոր – Ա. Ե.)»[203]: Ասողիկի հաղորդման տրամաբանությունը պարզ է: Թեև, օրինակ, Համամն ու Ատրներսեհը թագ էին ստացել Սմբատ Ա-ից, դրանով նրանց միջև հարաբերությունները չէին փոխվել, և ավատատիրական աստիճանակարգի առումով Համամն ու Ատրներսեհը շարունակում էին դիտարկվել որպես «ծառա» հայոց թագավորի համար: Բայց Ասողիկի հաղորդումն ունի ևս մեկ կարևոր կողմ: «Գտանէ» բառը ցույց է տալիս, որ կարծես թե Սմբատ Ա-ի «ծառաներն» առանց նրա հավանության էին թագավոր հռչակվել, ավելի ճիշտ՝ այլ տիրակալների կողմից: Ահա այստեղ, մեր համոզմամբ, թաքնված է կարևոր իրողությունը: 908 թ. Յուսուֆը, բացի Վասպուրականի Գագիկ իշխանից, թագադրել է նաև Կղարջքի Ատրներսեհ իշխանին:

---

[201] Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև Ասողիկ, էջ 164, Քարթլիի մատյան, Ա, էջ 66:
[202] Տե՛ս Ասողիկ, էջ 169-170:
[203] Վարդան վարդապետ, էջ 93:

Այսպիսով՝ Ատրներսեհը, որը ոտձգություն կատարեց հայոց գահի նկատմամբ, բայց պարտություն կրեց, այժմ արդեն փորձեց իր նկրտումների իրականացման համար այլ հովանավորներ փնտրել: Այդ դերը «ստանձնեց» Ատրպատականի Յուսուֆ ամիրան, որի հարվածներից, սակայն, շուտով մեծապես տուժեցին նաև Ատրներսեհի տիրույթները:

2.4. Համավրացական թագավորության ստեղծման նախադրյալները

Սմբատ Ա-ի թագավորության վերջին տարիներին հայոց թագավորության ժամանակավոր թուլացումը Կղարջքի կուրապաղատության և Աբխազաց թագավորության համար լայն հեռանկարներ բացեց: Եվ եթե Ատրներսեհը պարզապես դավաճանեց Սմբատ Ա-ին, ապա Կոստանդին Գ-ն պահպանեց հավատարմությունը նույնիսկ հայոց թագավորի համար ամենադժվարին պայմաններում՝ ապաստան և օգնություն տրամադրելով նրան[204]:

Սմբատ Ա-ի սպանությունից հետո իրավիճակն Այսրկովկասում փոխվեց: Ատրպատականի ամիրա Յուսուֆը տարիներ շարունակ ասպատակում էր Հայաստանը, Վիրքը և Կղարջքի կուրապաղատության որոշ գավառներ[205], իսկ Աբխազաց թագավորությունը, որը հեռու էր այդ իրադարձություններից, ամրապնդում էր իր ուժերը՝ Վիրքին տիրելու համար[206]:

Յուսուֆի հեռանալուց հետո Աբխազաց թագավորությունն աստիճանաբար սկսեց իր գերիշխանությունը հաստատել Վիրքում և Կախքում: Արդեն 915 թ. Կախքի (Ծանարաց) Կյուրիկե (Կվիրիկե) քորեպիսկոպոսի առաջարկով Կոստանդին Գ-ն մասնակցեց Աղվանից թագավորության վրա ձեռնարկվող արշավանքին: Կախքի քորեպիսկոպոսի և աբխազաց թագավորի զորքերը Թելավի կողմից ներխուժեցին Աղվանից թագավորություն: Նրանք պաշարեցին Ալազան գետի վերին

---

[204] Տե՛ս Ասողիկ, էջ 164, Քարթլիի մատյան, Ա, էջ 66:

[205] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 490-492, Ասողիկ, էջ 164, Քարթլիի մատյան, Ա, էջ 66, Ստեփան Տրեթցի, Հայքի վիճակը X դարու սկզբներին յեվ Սմբատ Խոստովանողը, Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Ե., 1934, էջ 92:

[206] Տե՛ս Գ. Մելիքիշվիլի, Ավատատիրական Վրաստանի քաղաքական միավորումները և Վրաստանի ավատատիրական հարաբերությունների զարգացման մի քանի հարցեր, Թբ., 1973, էջ 54, 56, 133-134, 145:

հոսանքում գտնվող Վեժին (Վժան) բերդը: Այնուհետև այստեղ եկավ աղվանից թագավոր Ատրներսեհը և նրանց հետ հաշտություն կնքեց՝ Կյուրիկեին զիջելով Օրճոբ բերդը, իսկ Կոստանդինին՝ Գավազ (Գավազն, Ալազան գետի ձախ ափին[207]) ավանը և Վեժին բերդը[208]:

Վերոհիշյալի լույսով եթե փորձենք ընդհանուր առմամբ ներկայացնել Հայաստանից հյուսիս գտնվող երկրներում ձևավորված իրավիճակը Սմբատ Ա-ի մահից հետո, ապա կարող ենք արձանագրել, որ այնտեղ շատ արագ գերիշխող դիրքի հասավ Աբխազաց թագավորությունը՝ իր գերիշխանությանը ենթարկելով, Վիրքից բացի, նաև Կախքը և Աղվանքը[209]: Աբխազաց թագավորությունը սկսեց միավորել Այսրկովկասի քաղկեդոնականներին:

Այս շրջանում Կղարջքի կուրապաղատությունում դարձյալ խախտվել էր կենտրոնաձիգ իշխանությունը: Այնտեղ տիրապետող դիրք ունեին երկու գործիչներ՝ Կղարջքի թագավոր Ատրներսեհը (899-923) և իշխան Գուրգենը (918-941)[210]: Վերջինս 891 թ. սպանված Գուրգեն Բագրատունի թոռը, Ատրներսեհի որդին[211] ու Կղարջքի թագավոր Ատրներսեհի քրոջ որդին[212] էր: Նա Սամցխեում գտնվող Ղվել բերդի[213] և Աջարայի տերն էր[214]: Գուրգենին Դավիթի որդի Սմբատը կոչում է «մեծ» և «իշխանաց իշխան»՝ ծավալուն ձեռնարկների համար[215]: Դրա

---

[207] Տե՛ս Г. Мкртумян, Грузинское феодальное княжество Кахети в VIII-XIвв. и его взаимоотнощения с Арменией, Е., 1983, с. 79, прим. 103:

[208] Տե՛ս Вахушти Багратиони, с. 127 , Քարթլիի մատյան, Ա, էջ 66:

[209] Տե՛ս Ի. Ջավախիշվիլի, նշվ. աշխ., էջ 102:

[210] Տե՛ս Ց. Анчабадзе, նշվ. աշխ., էջ 163:

[211] Տե՛ս Сумбат Давитис-дзе, с. 34. Տե՛ս նաև C. Toumanoff, The Bagratids of Iberia from the eight to the eleventh Century. “Le Museon", LXXIV, Louvain, 1961, p. 26:

[212] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 548:

[213] Տե՛ս Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 92-93:

[214] Տե՛ս Ց. Մարկուարտ, նշվ. աշխ., էջ 143: Տե՛ս նաև Ն. Ադոնց, Երկեր, հ. Ե, Ե., 2012, էջ 374:

[215] Տե՛ս Сумбат Давитис-дзе, с. 35:

վկայությունն է այն, որ նա ցանկացել է գրավել նույնիսկ Սամշուլդե ամրոցը, բայց պարտվել է[216]: Կոստանդին Ծիրանածինը նրան «մագիստրոս» կոչումով է հիշատակում[217]: Հովհաննես Դրասխանակերտցին նրան հիմնականում կոչում է «իշխան», իսկ մի տեղում՝ «վրաց մեծ իշխան»[218]: Գուրգենին հիշատակում է նաև արաբ աշխարհագրագետ Մասուդին: Խոսելով Կուր գետի մասին՝ նա մասնավորապես նշում է, որ այն հոսում է «Ջուրջինի (իմա՛ Գուրգեն – Ա. Ե.) թագավորության» տարածքով[219]: Մասուդին, որը խնդրո առարկա դեպքերի ժամանակակիցն է և եղել է Հայաստանում, Գուրգենին թագավոր կոչելով՝ ներկայացնում է նրա գերագահ իշխանությունը երկրամասում[220]: Դրա ապացույցն է նաև այն, որ Ատրներսեհին և Գուրգենին է միայն հիշատակում Հովհաննես Դրասխանակերտցին, երբ պատմում է Աշոտ Բ-ի թագավորության շրջանում Այսրկովկասում ծավալվող կարևորագույն իրադարձությունների մասին: Վերևում տեսանք, որ իշխանաց իշխան տիտղոսով Բյուզանդիան պատվում էր միմիայն հայոց իշխանին, իսկ Այսրկովկասի իշխաններին բյուզանդացիները կոչում էին կուրապաղատ, մագիստրոս և այլն: Պատահական չէ, որ մագիստրոս է կոչվում նաև Գուրգենը: Իշխանաց իշխան տիտղոսով նրա հիշատակությունը թերևս տեղական իշխանների մեջ նրա ունե-

---

[216] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 552-553:

[217] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Բյուզանդական աղբյուրներ», Բ, Կոստանդին Ծիրանածին, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Ե., 1970, էջ 19-24:

[218] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 542:

[219] Տե՛ս Al-Masʿūdī, I, էջ 205: Տե՛ս նաև В. Минорский, История Дербенда и Ширвана IX-XI вв., М., 1963, с. 214, прим. 114:

[220] Ն. Շոշիաշվիլիի կարծիքով՝ վրացական աղբյուրներում թագավոր էին կոչվում Կղարջքի բոլոր այն Բագրատունիները, որոնք կրում էին «վրաց թագավոր», «կուրապաղատ», «մագիստրոս» և որոշ այլ տիտղոսներ: Տե՛ս Ն. Շոշիաշվիլի, Վրացական վիմագրերի հավաքածուներ (V-X դդ.), Թբ., 1980, էջ 56:

ցած կարգավիճակի արտացոլումն է, թեև նա Կղարջքի Բագրատունիների կրտսեր ճյուղի ներկայացուցիչ էր[221]:

Ատրներսեհը դարձյալ սկսեց իր հույսը կապել հայոց թագավորության հետ, որը, չնայած ստացած ծանր հարվածներին, շարունակում էր մնալ Այսրկովկասում գլխավոր դերակատարը: Սմբատ Ա-ի մահից հետո նրա որդի Աշոտը զորք է հավաքում և սկսում վերացնել Հայաստանում գտնվող արաբական ուժերը: Պատմիչների տեղեկությունների համաձայն, երբ Աշոտ Երկաթը (913-929) Հայաստանը մաքրեց թշնամուց, նա Սմբատ Ա-ի թագավորության բոլոր իշխանների վրա հռչակվեց շահնշահ կամ թագավորների թագավոր[222]: Խալիֆայության կողմից Աշոտը Հայաստանի, Վիրքի և Աղվանքի շահնշահ է ճանաչվել 919 թ.[223]: Հավաքելով ուժերը՝ Աշոտ Բ-ն հարձակվում է Տփղիսի վրա, գրավում այն ու գերիներ վերցնում՝ հետագայում նրանց գերյալ հայերի հետ փոխանակելու համար: Տեսնելով այս ամենը՝ Ատրներսեհը և մյուսները, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, հավաքվում ու թագադրում են Աշոտին[224]: Մեկ այլ հաղորդման մեջ պատմիչը նշում է, որ Աշոտին թագադրել են Ատրներսեհն ու իր զորքը[225]: Հավանաբար, այս տեղեկությունների ներքո պետք է հասկանալ, որ Ատրներսեհը նույն դերն է կատարել Աշոտ Բ-ի թագադրության գործում, ինչ Սմբատ Ա-ի թագադրության դեպքում: Այն ժամանակ

---

[221] Տե՛ս Ս. Ջանաշիա, Կոստանդին Ծիրանածինի վկայությունները Տաո-Կլարջեթիի Բագրատիոնիների մասին, «Թբիլիսիի պետական համալսարանի աշխատություններ», պատմություն, հնագիտություն, արվեստագիտություն, ազգագրություն, 18, 1941, էջ 79-85 (վրացերեն):

[222] Տե՛ս Ասողիկ, էջ 169-170: Տե՛ս նաև Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրութեամբ Հ. Մարգարեանի, Ե., 1983, էջ 116-117, Վարդան վարդապետ, էջ 93:

[223] Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Ե, Ե., 2012, էջ 206:

[224] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 509, Ն. Ադոնց, Երկեր, հ. Ե, էջ 193-211 :

[225] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 525:

թագը և հանդերձները Սմբատին մատուցվել էին Ատրներսեհի միջոցով[226], նույնը թերևս տեղի է ունեցել Աշոտ Բ-ի պարագայում:

Հովհաննես Դրասխանակերտցու հետագա հիշատակություններից պարզվում է, որ Աշոտ Բ-ն սկզբում մտերիմ էր նաև Գուրգեն իշխանի հետ, որը նրա եղբայր Աբասի աներն էր (երբ Սմբատ Ա-ի սպանությունից հետո Աբասը ապաստանեց Գուրգենի մոտ, փեսայացավ նրան[227]), և որը նրան զորք է տրամադրում՝ Հայաստանում ծագած ապստամբությունը ճնշելու համար[228]: Աշոտ Բ-ն դաշնակցում էր նաև Կախքի քորեպիսկոպոսի հետ, որը նրան նույնպես օգնական զորք էր տրամադրում[229]:

Իրադարձությունների ժամանակակից Հովհաննես Դրասխանակերտցին, խոսելով այդ տարիներին իր դեգերումների մասին, հաղորդում է հույժ կարևոր տեղեկություններ: Նա պատմում է, որ «իսկ ես աստանօր պանդխտաբար ըստ հալածանաց ժամանակին նստեալ կայի ի մէջ Գուգարաց և Վրաց մերձ առ մեծիմաստն Ատրներսեհ՝ թագաւորն կացելոյ յայնմ նահանգի, որ...բազում հիւրամեծարութեամբ և առատանձեռն ռոճկօք առ ի նմանէն պատուասիրեցայ»[230]: Թեև «ի մէջ Գուգարաց և Վրաց»-ը թարգմանվել է «Գուգարքի և Վրաստանի միջև»[231], սակայն ավելի ճիշտ է «Գուգարքում և Վիրքում» մակաբերությունը[232], բայց այդ էլ թերևս պետք է շտկվի և դառնա «գուգարացիների և վրացիների մեջ», իսկ վերջինիս ներքո անհրաժեշտ է ընկալել ոչ թե էթնիկ, այլ դավանանքային շեշտադրումը: «Գուգարացիները» հայ

---

[226] Տե՛ս նույն տեղում, էջ 448:
[227] Տե՛ս Ասողիկ, էջ 169:
[228] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 540-542:
[229] Տե՛ս նույն տեղում, էջ 543:
[230] Նույն տեղում, էջ 521:
[231] «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմություն Հայոց», բնագիրը Մ. Էմինի, Ե., 1996, էջ 267:
[232] Տե՛ս Ованес Драсханакертци, История Армении, перевод с древнеармянского М. Дарбинян-Меликяна, Е.,1984, с. 144:

առաքելականներն են՝ Գուգարքի բնիկ ազգաբնակչությունը, իսկ «վրացիներ»-ը քաղկեդոնականները՝ առանց էթնիկական պատկանելության ընկալման: Եվ հավանաբար այդ պատճառով է, որ Ատրներսեհը այդչափ առատաձեռն գտնվեց հայոց կաթողիկոսի նկատմամբ, որի հոգևոր իշխանությանը ենթակա զգալի ազգաբնակչություն կար նրա իշխանությունում, որը ժամանակակից պատմիչ-կաթողիկոսի ընկալման մեջ լոկ մի «նահանգ» է և ոչ թե անկախ թագավորություն: Պատահական չէ, որ Կոստանդնուպոլսի Նիկողայոս պատրիարքի՝ հայոց կաթողիկոսին ուղարկած նամակում մասնավորապես ասված է. «Կարծեմ ոչ ինչ զանխուլ է՝ տէր իմ, ի քոյոյ յաստուածասիրութենէդ յոյժ տրտմութիւն և անպակաս ցաւք սրտից մերոց յաղագս Հայոց և Վրաց և Աղուանից միահամուռ քոյդ հաւատացեալ հօտից...», այդուհետ՝ «քոյոյդ հօտիդ Հայոց և Վրաց և Աղուանից»[233]: Այն, որ հայոց կաթողիկոսը կոչվում է «Հայոց, Վրաց և Աղվանից միահամուռ հավատացյալ հոտի» առաջնորդ, կարևոր հետևություններ է ծնում, մասնավորապես, որ, ինչպես ժամանակին Սմբատ Ա-ն էր Բյուզանդիայի կողմից դիտվում որպես «բոլորից արևելեայցս գլխավոր»[234], այնպես էլ ընդհանուր քրիստոնյաների առումով հայոց կաթողիկոսն էր դիտարկվում որպես բոլոր քրիստոնյա արևելցիների կրոնական առաջնորդ: Նիկողայոս պատրիարքի նամակում կա ևս մեկ ուշագրավ տեղեկություն: Նա գրում է, որ հորդորել է աբխազաց թագավորին՝ մոռանալու նախկին ընդհարումները և միասնական ճակատով հակահարվածելու Յուսուֆ ամիրային: «...Առաքեցաք թուղթ և առ կուրապաղատդ առ աւագն Ափխազաց՝ խրատելով առ ի լսել խրատուդ ձերոյ և մոռանալ զընդ միմեանս հարումնն, և նայել ի սէր ի միաբանութիւն և ի հաշտ խաղաղութիւն ընդ միմեանս և ընդհասարակ իշխանս Հայոց և Աղուանից, և միանալ միաբան և մարտնչել ընդդէմ ամբարիշտ

---

[233] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 522:

[234] Նույն տեղում, էջ 528: Տե՛ս Հ. Բարթիկյան, Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ., «Լրաբեր (հաս. գիտ.)», 1996, N 2, էջ 27-28:

թշնամւոյն»[235]: Կաթողիկոսն առաջին հերթին սկսում է Ատրներսեհին համոզել խաղաղություն և միաբանություն պահպանել հայոց և վրաց մնացյալ իշխանների հետ և նրանից համապատասխան երդմնագիր է վերցնում[236]:

Ատրներսեհ Կղարջեցու համար դժվարին ժամանակներ էին: Մի կողմից աբխազաց թագավորը, որը նրա վաղեմի հակառակորդն էր, իսկ մյուս կողմից Գուրգենը խափանում էին նրա բոլոր նկրտումները: Բայց շուտով ներկայացավ առիթը՝ թեկուզ միայն Կղարջքի կուրապաղատությունում գերագահ դիրքի հասնելու համար: Թեև Աշոտ Բ-ն վստահում էր իր եղբայր Աբասին և նրա աներ իշխան Գուրգենին, վերջիններս նրա դեմ դավադրություն կազմակերպեցին[237]: Աշոտ Բ-ն, անմիջապես իր հետ վերցնելով Ատրներսեհ Բագրատունուն, արշավեց Գուրգենի դեմ: Յուսուֆի կողմից թագավոր կարգված Աշոտ Բ-ի հորեղբայր Շապուհի որդի Աշոտը[238] և Աշոտ Բ-ի եղբայր Աբասը փորձեցին օգնել Գուրգենին, բայց Աշոտ Երկաթը պարտության մատնեց հակառակորդին[239]: Հետագա կռիվներից մեկի ժամանակ Սամշուլդե ամրոցում Աշոտ Բ-ի զորքին հաջողվում է գերի վերցնել Գուրգենի բանակը, որից հետո նրանք թագավորի հրամանով կուրացվեցին՝ զրկվելով նաև ականջներից ու քթերից[240]: Գուրգենը դրանից հետո էլ շարունակեց Աշոտ Բ-ի դեմ գործելը, որի ապացույցն է Հովհաննես Դրասխանակերտցու այն տեղեկությունը, որ 921 թ. Ուտիքում իշխող Ցլիկ Ամրամը ցանկացավ ընդունել նրա գերիշխանությունը[241]: Ուտիքում ծագած ապստամբությունը ճնշելու համար Աշոտը դիմեց աբխազաց թագավորի օգնությանը, որը նրան զորք տրամադրեց[242]: Ստեղծվեց մի

---

[235] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 523:
[236] Տե՛ս նույն տեղում, էջ 524:
[237] Տե՛ս նույն տեղում, էջ 544-545:
[238] Տե՛ս նույն տեղում, էջ 538:
[239] Տե՛ս նույն տեղում, էջ 547-548, Ասողիկ, էջ 169:
[240] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 553:
[241] Տե՛ս նույն տեղում, էջ 555-556:
[242] Տե՛ս նույն տեղում:

իրավիճակ, երբ Աշոտ Բ-ի պայքարում զուգահեռվեցին երկու անհաշտ հակառակորդների՝ աբխազաց և Կղարջքի թագավորների շահերն ընդդեմ Գուրգեն իշխանի:

Բայց թե՛ Կոստանդինին և թե՛ Ատրներսեհին ապրելու քիչ ժամանակ էր մնացել: Նրանցից առաջինը մահացավ 922 թ., իսկ երկրորդը՝ 923 թ.: Դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից՝ Կղարջքում գերիշխանություն ստացավ Գուրգենը, թեև Ատրներսեհի թագավորական տիտղոսն անցավ նրա ավագ որդի Դավիթին[243]: Միևնույն ժամանակ Աբխազաց թագավորությունում սկսվեցին գահակալական կռիվներ Կոստանդին Գ-ի որդիների՝ Գեորգիի և Բագրատի միջև: Բագրատն Գուրգեն իշխանի փեսան էր, իսկ վերջինս փորձում էր նրան բազմեցնել աբխազաց գահին: Ըստ Զ. Անչաբաձեի՝ Բագրատը ծնվել էր Կոստանդին Գ-ի երկրորդ ամուսնությունից, որը կնքվել էր Սմբատ Ա-ի դստեր հետ[244]: Բայց Բագրատը շուտով մահացավ, և դրանից հետո Աբխազաց թագավորության միահեծան տերը դարձավ Գեորգին (929-957), որի օրոք Աբխազաց թագավորությունը հասավ հզորության գագաթնակետին: Գեորգին Վիրքում իշխան նշանակեց իր որդիներին[245]: Որոշ ժամանակ անց աբխազական զորքերը ներխուժեցին Կախք և հրի ու սրի մատնեցին այն[246]: Այդ շրջանում Գուրգենն իր քրոջ՝ աղվանից թագուհի Դինարի միջոցով սկսեց քաղկեդոնականությունն աստիճանաբար տարածել Աղվանքում[247]: Ըստ «Քարթլիի մատյանի»՝ այդ գործը գլուխ բերելու շրջանում Սալարյանները գրավեցին Ատրպատականը, իսկ այս իրադարձությունը տեղի է ունեցել 941 թ.[248], այսինքն՝ Գուրգենի մահվան տարում:

---

[243] Տե՛ս Сумбат Давитис-дзе, с. 34-35:
[244] Տե՛ս З. Анчабадзе, նշվ. աշխ., էջ 128:
[245] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 67: Տե՛ս նաև З. Анчабадзе, նշվ. աշխ., էջ 128:
[246] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 68:
[247] Տե՛ս նույն տեղում, էջ 67:
[248] Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Դվին քաղաքի ժամանակագրությունը 9-10-րդ դարերում, Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հասարակական գիտություններ, 1957, N 10, էջ 92:

Աշոտ Բ-ի մահից հետո հայոց թագավոր դարձավ Աբասը (929-953), որի օրոք Կղարջքում և Վիրքում ստեղծվեց նոր իրավիճակ: Այդ ժամանակ Կղարջքում ոչ առանց հայոց թագավորի աջակցության տեր ու տնօրեն էր նրա աներ Գուրգենը, որի մասին Դավիթի որդի Սմբատը հաղորդում է, թե նա կռվել է իր բոլոր նախորդներից ավելի շատ և տիրել Կղարջքի կուրապաղատության բոլոր հարևան հողերին[249]: Աբխազաց թագավորը Գուրգենի դեմ պայքարելու համար սկսեց հովանավորել Արտանուջի տեր Աշոտ Կիսկասի իշխանին (մահ՝ 939 թ.[250]), որին ամուսնացրեց իր քրոջ հետ: Հակամարտությունն ավարտվեց մոտ 935 թ. Գուրգենի հաղթանակով, որը գրավեց Արտանուջը, բայց հարկ համարեց Աշոտին զիջել Աջարայի մի մասը և Ղվել բերդը[251]: Հետագայում, երբ Աշոտը սկսեց համագործակցել Գուրգենի դեմ պայքարող աբխազաց թագավորի հետ, Գուրգենը ետ խլեց զիջածը, իսկ նա, զրկված տիրույթներից, հեռացավ Աբխազաց թագավորություն[252]: Այդ շրջանում Գուրգենն ընդունում էր Բյուզանդիայի գերիշխանությունը, սակայն դատելով Կոստանդին Ծիրանածնի տեղեկություններից, ըստ որոնց՝ կայսրությունը կամեցել է տիրել Արտանուջին, սակայն դրան դեմ են արտահայտվել Դավիթ թագավորն ու Գուրգեն իշխանը, որի հետևանքով կայսրությունը զիջել է[253], ցույց է տալիս, որ գերիշխանության ընդունումը եղել է ոչ ամբողջապես և հիմնականում վերաբերել է միայն սահմանների պաշտպանությանը և փոխադարձ օգնությանը[254]:

Գուրգեն իշխանի թեև ոչ ուղղակի հաղթանակն Այսրկովկասի քաղկեդոնականների շրջանում գերիշխանության հասնելու պայքա-

---

[249] Տե՛ս Сумбат Давитис-дзе, с. 35:

[250] Տե՛ս նույն տեղում:

[251] Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 19, էջ 237, ծանոթ. 7: Տե՛ս նաև C. Toumanoff, The Bagratids of Iberia, p. 26.

[252] Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 19:

[253] Տե՛ս նույն տեղում, էջ 20-23:

[254] Տե՛ս Ф. Ինղորոկվա, նշվ. աշխ., էջ 68:

րում իր գլխավոր հակառակորդի՝ աբխազաց թագավորի նկատմամբ (նրա հովանավորյալ Աշոտ Կիսկասիին պարտության մատնելը) և նրա գերիշխանության հաստատումը Կղարջքի կուրապաղատությունում, որտեղ դեռևս գոյություն ունեին Կղարջքի թագավոր Ատրներսեհի ժառանգները, ու քաղկեդոնական հոգևոր իշխանության տարածումն Աղվանքում այն կարևոր նախադրյալներն էին, որոնք նախանշեցին Այսրկովկասի քաղկեդոնականների միասնական թագավորության հիմնադրումը՝ Կղարջքի Բագրատունիների դրոշի ներքո[255]:

[255] Իշխանաց իշխան Գուրգենը որդի չուներ, և նրա տիրույթները բաժին հասան այլոց:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆ ԵՐԿՐԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

3.1. Իրադարձություններն Այսրկովկասում 10-րդ դարի կեսերին և աբխազաց թագավորների՝ քաղկեդոնականներին միավորելու գործունեությունը

10-րդ դարի առաջին քառորդին Հայաստանում և այսրկովկասյան երկրներում տեղի ունեցած իրադարձությունները նպաստեցին Այսրկովկասի քաղկեդոնականների միավորման գործընթացին։

Հայոց Սմբատ Ա թագավորի (891-913) պարտությունը և եղերական մահից հետո ձևավորված իրադրությունը, երբ շուրջ մեկ տասնամյակ Հայոց թագավորությունը փորձում էր վերականգնել նախկին հզորությունը, հնարավորություն տվեց Կղարջքի Բագրատունիներին՝ ակտիվորեն լծվելու սկզբում զուտ վրացադավան երկրամասերի, իսկ այնուհետև՝ Այսրկովկասի բոլոր քաղկեդոնականների միավորման գործընթացին։ Նրանք օգտվեցին ստեղծված բարենպաստ իրավիճակից։ Ոչ վաղ անցյալում տարածաշրջանի հզոր տերությունը՝ Հայոց թագավորությունը, պարբերաբար ենթարկվում էր արշավանքների հարևան ամիրայությունների զորքերի կողմից և միջամտել տեղի ունեցող գործընթացներին անկարող էր։ Ավելին՝ Հայաստանը, եթե հաշվի առնենք այն, որ հայ ժողովուրդը Աշոտ Երկաթի գլխավորությամբ բարձրացրել էր ժողովրդազատագրական շարժման դրոշը և, դրանով իսկ, իր վրա բևեռել Արաբական խալիֆայության և Ատրպատականի ամիրայության ուշադրությունը, Կղարջքի կուրապաղատության համար վերածվել էր յուրօրինակ պաշտպանիչ վահանի, որը հնարավորություն էր տալիս տեղի Բագրատունիներին խաղաղ պայմաններում և անարգել ձեռնարկելու Այսրկովկասի քաղկեդոնական

երկրամասերի միավորման գործը։ Այդ իրավիճակում Վիրքին ու Կախքին տիրելու նկրտումներով ի հայտ եկավ և, ըստ այդմ, նրանց գլխավոր հակառակորդը դարձավ Աբխազաց թագավորությունը։

Հայտնի է, որ 9-րդ դարում Հայաստանում տեղի էր ունենում միավորման գործընթաց չորս հիմնական կենտրոններով՝ Բագրատունյաց, Արծրունյաց, Սյունյաց և Առանշահիկների։ Վերջին երեքը նույն դարի կեսերին ընդունեցին Բագրատունիների գերակայությունը, որը հնարավորություն տվեց Հայաստանի և այսրկովկասյան երկրների իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն (862-887) հավակնելու արքայական թագի և ձևավորելու սեփական տերությունը (887-891)։

Ի հակադրություն Հայաստանի՝ 9-րդ դարում Վիրքում տիրող իրավիճակն առավել բնորոշելի է մասնատվածություն եզրով։ Ըստ որում՝ Այսրկովկասի առավելապես քաղկեդոնական բնակչություն ունեցող տարածքներում ներուժի առումով գերակայությունը բոլորովին էլ Կղարջքի կուրապաղատության կողմում չէր։ Հյուսիսում իր հզորության օրերն էր ապրում Աբխազաց թագավորությունը, որը, թեև ստիպված էր ընդունել Այսրկովկասի իշխանաց իշխան ու այնուհետև թագավոր Աշոտ Բագրատունու գերիշխանությունը, արդեն 10-րդ դարի սկզբին, քաղկեդոնական միջավայրում առավելություն ստանալով հայոց թագավոր Սմբատ Ա-ի կողմից, հնարավորություն ստացավ ընդգրկուն գործունեություն իրականացնելու Վիրքում, իսկ Հայոց թագավորության ժամանակավոր անկումից հետո նաև՝ Վիրքից դեպի արևելք տարածվող երկրամասերում՝ Կախքում ու Աղվանից թագավորության արևմտյան շրջաններում։

Նման իրավիճակում Կղարջքի կուրապաղատները ստիպված կենտրոնացել էին սեփական տիրույթների պահպանման անհրաժեշտության վրա, քանի որ հայտնվել էր այդ տարածքներում գերակայության ձգտող այլ ուժ։ Դժվար է ասել, թե ինչպես կհանգուցալուծվեր այդ բարդ իրավիճակը, երբ Կղարջքի կուրապաղատներն առժամանակ ստիպված էին մտածել ոչ թե Այսրկովկասի վրացադավան երկրամասերը միավորելու, այլ, գլխավորապես, գոյատևման մասին, եթե

Սմբատ Ա-ի որդի Աշոտին չհաջողվեր վերահաստատել Հայոց թագավորությունը և հետևողականորեն զբաղվել հոր տիրույթների վերականգնման խնդրով:

Հայոց թագավորության վերահաստատումը և հզորացումը, հաշվի առնելով այն, որ հայոց թագավոր Աշոտ Բ-ն (913-929) աջակցում էր Կղարջքի Ատրներսեհ թագավորին[256], փաստորեն, ապահովեց Կղարջքի կուրապաղատության հետագա գոյությունը:

Իրադրությունը, սակայն, Հայոց թագավորությունում կտրուկ փոփոխություններ էր կրել: Այն, հաշվի առնելով Վասպուրականի, Կղարջքի և Աղվանից թագավորությունների գոյության փաստը, այլևս կենտրոնաձիգ պետություն չէր և ենթարկվում էր ավատատիրական մասնատվածության շրջանում հանդես եկող տերությունների պետական կարգի տրամաբանությանը՝ հանդես գալով որպես թագավորությունների ու իշխանությունների դաշնություն՝ գերագահ թագավորի գլխավորությամբ[257]: Ուստի պատահական չէ, որ Աշոտ Բ-ն, իր գերիշխանությանը ենթարկելով նախկինում Աշոտ Ա և Սմբատ Ա թագավորների օրոք Հայոց թագավորության կազմի մեջ մտնող երկրները, հռչակվեց շահնշահ կամ թագավորաց թագավոր[258]: Հետագայում այդ տիտղոսը կրում էին նրա հաջորդները, որը վկայված է նաև «Քարթլիի մատյանում»[259]:

---

[256] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 525, 547-548:

[257] Տե՛ս C. Stephenson, Mediaeval Feudalism, Cornell University Press, New York, 1965, pp. 75-78, 92-94: Տե՛ս նաև Ռ. Մաթևոսյան, Վասալա-սյուզերենական հարաբերությունները Բագրատունյաց Հայաստանում X-XI դդ., «Լրաբեր (հաս. գիտ.)», 1977, N 10, էջ 46-54, *նույնի՝* Հայոց թագավորության պետական կառուցվածքն ըստ Մատթեոս Ուռհայեցու վկայությունների, «Լրաբեր (հաս. գիտ.)», 1980, N 8, էջ 66-67:

[258] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 551, Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ., Ե., 2011, էջ 748, 755, Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 87:

[259] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, Ա, էջ 74:

Նման իրավիճակը հնարավորություն էր տալիս քաղկեդոնական թագավորներին ու իշխաններին, ստանալով հայոց թագավորի օգնությունը, ձգտելու գերակա դիրքի Այսրկովկասի քաղկեդոնականների միջավայրում։ Վերջին իրողությունը հատկապես ակնառու էր հայոց Աբաս թագավորի օրոք (929-953), որի օգնությամբ իշխանաց իշխան Գուգեն Բագրատունին կարողացավ գերիշխանության հասնել Կղարջքի կուրապաղատությունում և հարևան որոշ շրջաններում։

Փաստորեն, ի տարբերություն 9-րդ դարի, երբ Հայաստանում տեղի էր ունենում միավորման գործընթացը, իսկ Վիրքում և հարևան շրջաններում տիրում էր մասնատվածությունը, արդեն 10-րդ դարում իրադրությունը գլխիվայր փոխվեց։ Հայոց թագավորությունը կենտրոնաձիգ պետությունից վերածվեց ավատատիրական դաշնության, իսկ Այսրկովկասի քաղկեդոնական երկրամասերում սկիզբ առավ միավորման գործընթացը։

Ահա՛, հենց այս իրավիճակն է, որ ստեղծեց բոլոր հնարավոր նախադրյալներն Այսրկովկասի քաղկեդոնականների միասնական թագավորության ձևավորման համար։

Աբաս թագավորի օրոք (929-953) Հայոց թագավորությունն աստիճանաբար վերականգնում է իր հզորությունը և սկսում միջամտել Այսրկովկասում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին։ Քաղկեդոնականների միջավայրում նրա գլխավոր գործընկերը Գուրգեն Բագրատունին էր՝ Աջարայի և Կվել բերդի տերը։ Աբաս թագավորի օգնությամբ մինչև 941 թ. Գուրգենը լայն գործունեություն էր իրականացնում Այսրկովկասում՝ հաջողությամբ հետ մղելով Աբխազաց թագավորության գրոհները, սահմանափակելով Կղարջքի կուրապաղատների գործունեությունը և քաղկեդոնականությունը տարածելով Աղվանից թագավորությունում[260]։

---

[260] Մանրամասնորեն տե՛ս Ա. Եղիազարյան, Բագրատունիների վրացական թագավորության ձևավորման գործընթացը, մաս երկրորդ. Համավրացական թագավորության

Դատելով այն իրողությունից, որ Աբաս թագավորն օգնում էր Գուրգենին, իսկ վերջինս պարտության մատնեց Արտանուջի տեր Աշոտ Կիսկաս իշխանին, զգալիորեն փոխվել էր ուժերի հարաբերակցությունն Այսրկովկասում։ Հայոց թագավորի աջակցությունը վայելող Գուրգենից եկող վտանգի դեմ միավորվել էին աբխազաց թագավորն ու Արտանուջի իշխանը, որն իր կնիքը թողեց նաև Գուրգենի մահից հետո տեղի ունեցող դեպքերի վրա։ Ուստի՝ պատահական չէ, որ շուտով Աբաս թագավորը ստիպված եղավ պատերազմել Աբխազաց թագավորության և Կղարջքի միացյալ ուժերի դեմ։ Ասողիկը հաղորդում է, որ Աբաս թագավորը «զՎրաց եւ զՍարմատացւոց ասպատակն դադարեցոյց յաշխարհէս Հայոց»[261]։ Այս խիստ կարևոր տեղեկությունը նախկինում, որքան հայտնի է, մանրամասն քննության չի առնվել, մինչդեռ լույս է սփռում կարևոր իրողությունների վրա։ Վերջինիս նպաստում է նաև պատմիչի տեղեկության հետագա հավածը, որտեղ, ի հստակեցումն ասվածի, նշված է հետևյալը. «ի միում աւուր բազմախուռն բանակաւք, բիւրաւոր զաւրաւք ելանէր Բէրն[262] բէլապես ամբարտաւանութեամբ, իշխանն Ափխազաց, ի Սարմատացւոց աշխարհէն, որ յայնկոյս քան զԿովկասեան լերինսն։ Խաղայ գայ անթիւ բազ-

---

ինքնուրույն պատմական հեռանկարի ուրվագծերը, «ՎԷմ» համահայկական հանդես, 2013, N 2, էջ 50-56։

[261] Տե՛ս Ասողիկ, էջ 749։

[262] Բեր անունով աբխազաց թագավոր կամ իշխան հայտնի չէ։ Ն. Ադոնցը փորձում է այդ անունը կապել Հովհաննես Դրասխանակերտցու կողմից աբխազաց թագավորին տրված «Ավագն Ափխազաց» անվանման հետ։ Տե՛ս Ն. Ադոնց, Երկեր, հ. Ե, Ե., 2012, էջ 388։ Վարդան վարդապետը մի տեղում հիշատակում է հայոց Աբաս թագավորի կողմից Բերին կուրացնելու մասին (տե՛ս Վարդան վարդապետ, էջ 88), իսկ մեկ այլ տեղում, խոսելով աբխազաց Թևտաս (Թեոդոս) կույր թագավորի (975-978) մասին, Բերին նույնացնում է նրան։ Տե՛ս նույն տեղում, էջ 91։ Սակայն «Քարթլիի մատյանը» Թեոդոսին կուրացնելը վերագրում է նրա եղբայր, աբխազաց թագավոր Դեմետրեին (967-975)։ Տե՛ս «Քարթլիի մատյան», էջ 70։ Դժվար է միանշանակ ասել, թե իրականում որն է ճշմարիտը, սակայն հավանական է, որ Վարդան վարդապետի վրա ազդեցություն է թողնել այն պարզ իրողությունը, որ աբխազաց երկու կույր իշխողները ժամանակագրորեն իրար շատ մոտ են կանգնած։

մութեամբ առ ափն գետոյն, որ Կուրն կոչի՝ անապատացուցնել կամելով զաշխարհս Հայոց»[263]: Թշնամին սպառնում էր, որ եկել քաղկեդոնական ծեսով օծելու Կարսի նորակառույց Սուրբ Առաքելոց եկեղեցին[264]: Հայտնի է, որ եկեղեցին կառուցվել է 930-942 թթ.[265], որից պետք է բխեցնել, որ նշված իրադարձությունները տեղի են ունեցել արդեն կառուցված եկեղեցու օծման շրջանում, ամենայն հավանականությամբ 942 թ.: Այսինքն՝ Բերի զորքերի հարձակումը տեղի է ունեցել Գուրգեն Բագրատունու մահից (941 թ.) հետո, իսկ հարձակման պատրվակն էլ լիովին համապատասխանում է տիրող իրավիճակին, երբ տեղի էր ունենում Այսրկովկասի քաղկեդոնականների միավորման գործընթաց, իսկ վերջինիս՝ հաջողությամբ պսակվելու ճանապարհին միակ խոչընդոտը մնացել էր Հայոց թագավորությունը:

Հստակ է, որ «զՎրաց եւ զՍարմատացւոց» արտահայտության մեջ «զՍարմատացւոց» ասելով՝ Ասողիկը նկատի ունի աբխազաց զորքերը: Դա հաստատվում է նաև պատմիչի մեկ այլ հիշատակությամբ, ըստ որի՝ աբխազաց թագավոր Սմբատը (իմա՛ Բագրատ Գ – Ա. Ե.) «խաղայ զաւրաւք բազմաւք ի Սարմատացւոց աշխարհէն»[266]: Հատկապես կարևոր է «զՎրաց» անվան բացահայտումը, որը, հաշվի առնելով մեր հետազոտության արդյունքները, այնքան էլ դժվարին աշխատանք չէ: Խնդիրն այն է, որ Աբասն օժանդակում էր Գուրգեն իշխանին աբխազաց թագավորի և Արտանուջի տերերի դեմ, ուստի բխում է ինքնըստինքյան եզրակացությունը: «Վրաց» անվան ներքո պատմիչը նկատի ունի Արտանուջի տերերի զորքը, որը, օգտվելով Գուրգենի մահից հետո ստեղծված իրավիճակից, միացած աբխազաց բանակին, արշավանքի էր դուրս եկել Հայոց թագավորության դեմ: Բացառված չէ, որ արշավանքին մասնակցում էր նաև այդ ժամանակ արդեն Աբխազաց

---

[263] Ասողիկ, էջ 749:
[264] Տե՛ս նույն տեղում:
[265] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, էջ 374-375:
[266] Տե՛ս Ասողիկ, էջ 805-806:

թագավորության գերիշխանության ներքո գտնվող բուն Վիրքից հավաքագրված զորքը, սակայն, պատմիչի համար, անկասկած, հիշատակության հիմք է դարձել «վրաց» թագավոր հռչակված Կղարջքի տերերի մասնակցությունը արշավանքին։

Ճակատամարտը տեղի ունեցավ Կուր գետի ափին և ավարտվեց հայոց զորքի հաղթանակով։ Ասողիկը, գրելով այն մասին, որ Աբաս թագավորը «զՎրաց եւ զՍարմատացւոց ասպատակն դադարեցոյց յաշխարհէս Հայոց», ցանկացել է ընդգծել, որ հաղթանակը վերջնական է եղել։ Ավելին, Բերը գերի է ընկել, բերվել Կարս և կուրացվել, որից հետո կնքված հաշտությամբ կողմերը պայմանավորվել են այլևս չպատերազմել միմյանց դեմ[267]։

Ուստի ընդգծենք, որ 10-րդ դարի 40-ական թվականներին ձևավորվել էր դաշինք Աբխազաց և Կղարջքի թագավորությունների միջև ընդդեմ Հայոց թագավորության, որն արդեն զրկվել էր քաղկեդոնականների միջավայրում իր հիմնական զինակցից՝ Գուրգեն Բագրատունուց։ Վերջինիս մահից հետո նրա տիրույթները համաձայնությամբ բաժանվեցին երեք մասի՝ Կղարջքի Բագրատունիների երկու ներկայացուցիչների և աբխազաց թագավորի միջև այն սկզբունքով, որ նրանցից յուրաքանչյուրը ստանում էր Գուրգենի հողերի՝ իր տիրույթներին հարևան շրջանները[268]։

Միևնույն ժամանակ աբխազաց թագավորը գործունեություն էր ծավալում Այսրկովկասի քաղկեդոնականների միավորման ուղղությամբ։ Աբխազաց թագավոր Գեորգին (929-957), որի օրոք Աբխազաց թագավորությունը հասավ հզորության գագաթնակետին, տիրեց Վիրքին և այնտեղ իշխան նշանակեց իր որդի Կոստանդինին[269]։

Ի. Ջավախիշվիլին, անդրադառնալով Այսրկովկասի քաղկեդոնականների միավորման (ըստ նրա՝ Վրաստանի միավորման) գործըն-

---

[267] Տե՛ս Ասողիկ, էջ 750։

[268] Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, էջ 19։

[269] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, Ա, էջ 67։ Տե՛ս նաև З. Анчабадзе, Из истории средневековой Абхазии (VI-XVIIвв.), Сухуми, 1959, с. 128.

թացին, նշում է, որ դրան դեմ էին Վիրքի խոշոր ավատատերերը, որոնց հատկապես ձեռնտու էր մասնատվածությունը՝ հնարավորություն տալով վարելու անկախ կյանք: Երբ նրանք զգացին, որ աբխազաց թագավորը լրջորեն ձեռնամուխ է եղել միավորման գործին, անմիջապես դեմ դուրս եկան այդ ծրագրին՝ նպաստելով Գեորգի թագավորի դեմ հանդես եկած որդու՝ Կոստանդինի ապստամբությանը[270]:

Գեորգին զորք հավաքեց իր ապստամբ որդու դեմ, և նրան, ըստ «Քարթլիի մատյանի»՝ միացան Տայքի թագավորն ու Կախքի քորեպիսկոպոս[271] Փաղլան (մահ.՝ 929 թ.): Ապստամբությունը ճնշվեց, իսկ Գեորգին Վիրքի կառավարիչ նշանակեց իր մյուս որդուն՝ Լևոնին[272]: Այս իրողությունը ցույց է տալիս, որ 10-րդ դարի առաջին կեսին դաշինք էր ձևավորվել Աբխազական թագավորության, Կղարջքի տերերի և Կախքի քորեպիսկոպոսների միջև:

Տայքի թագավորի հիշատակությունը 920-ական թվականների վերջերին խիստ կարևոր է: Մենք արդեն համոզվել ենք, որ Տայքը մինչև Սմբատ Ա թագավորի մահը մտնում էր հայոց թագավորների արքունի տիրույթների մեջ: Ն. Ադոնցը հավանական է համարում, որ միայն Սմբատի մահից հետո Կղարջքի Բագրատունիները կարողացան ներթափանցել Տայք: Ըստ որում՝ այդ իրականացրել են նրա որդիները[273]: Դրա վկայությունն է, թերևս, հայկական անանուն ժամանակագրություններից մեկում պահպանված այն տեղեկությունը, ըստ որի՝ Սմբատ Ա-ի մահից հետո, երբ սկսեց թագավորել Աշոտ Բ-ն, «իշխէին Բագրատունիք Շիրակայ և Այրարատու մինչ ի Գեղամ (իմա՛ Գեղամա ծով – Ա. Ե.) և մինչ ի Յուխտիսն (իմա՛ Ուղթիք կամ Ուղթիս-

---

[270] Տե՛ս Ի. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմություն, հ. II, Թբ., 1965, էջ 103 (վրացերեն):

[271] Քորեպիսկոպոսը Կախքի իշխանների տիտղոսն էր: Տե՛ս Հ. Մկրտումյան, Ծանարների ցեղը և նրանց դերը Դարյալի լեռնանցքի պահպանության գործում, «Լրաբեր (հաս. գիտ.)», 1972, N 6, էջ 86-87:

[272] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 68:

[273] Տե՛ս Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 391:

Ա. Ե.) և մինչ ի Կարին և մինչ ի սահմանս Վասպուրականի և մինչ ի Զորոցգետն և մինչ ի Գարդման և Սիւնիս կատարեալ էր ի նոցանէ»[274]: «Մինչ ի Յուխտիսն» արտահայտությունից կարելի է բխեցնել, որ Ուղթիս (Օլթի) բերդաքաղաքը, որը գտնվում էր Տայքի հարավարևելյան հատվածում, այդ շրջանում արդեն դուրս էր մնացել Շիրակի Բագրատունիների տիրույթներից: Ցավոք սրտի, Տայքում Կղարջքի Բագրատունիների հայտնվելու վերաբերյալ աղբյուրներում ուղղակի տեղեկություններ չկան, ուստի մնում է միայն համաձայնել մեծ գիտնականի տեսակետին: Վերջինս հաստատվում է այն իրողությամբ, որ Իշխանի եկեղեցու արձանագրություններից մեկի համաձայն՝ արդեն 917 թ. Կղարջքի Ատրներսեհ թագավորը Իշխանի եպիսկոպոս է նշանակել ոմն Բարսեղի (Վասիլ), որն այնտեղ գործել է 19 տարի[275]: Ավելին, շուտով Տայքում հանդես է գալիս 10-րդ դարի երկրորդ կեսին Այսրկովկասում ծավալուն գործունեություն իրականացրած և աղբյուրներում Տայքի կամ գերազանցապես քաղկեդոնականների միջավայրում իշխելու կապակցությամբ «վրաց» կուրապաղատ հորջորջվող Դավիթը, որը Կղարջքի առաջին թագավոր Ատրներսեհի (899-923) սերնդից էր, նրա որդի Բագրատ մագիստրոսի թոռն ու Ատրներսեհ կուրապաղատի որդին[276]: Նա իշխել է 966-1000/1001 թթ.[277]: Ինչ վերա-

---

[274] Տե՛ս Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. I, կազմեց Վ. Հակոբյան, Ե., 1951, էջ 384:

[275] Տե՛ս Е. Такайшвили, Археологическая экспедиция 1917 г. в южные провинции Грузии, Тб., 1952, с. 30 : Կարելի է եզրակացնել, որ հենց այդ շրջանում, երբ Հայոց թագավորությունը գտնվում էր ծանր վիճակում, Ատրներսեհը կարողացել է տիրել Տայքի հյուսիսային գավառներին:

[276] «Քարթլիի մատյանը» Դավիթ կուրապաղատին ներկայացնում է որպես Կղարջքի առաջին թագավոր Ատրներսեհի թոռնորդի: Ըստ վրացական աղբյուրի՝ Դավիթ կուրապաղատի պապն Ատրներսեհ թագավորի որդի Սմբատն էր, իսկ հայրը՝ Ատրներսեհ կուրապաղատը: Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 70: Դավթի որդի Սմբատը, նույնպես Դավիթ կուրապաղատին համարելով Ատրներսեհ թագավորի թոռնորդի, որպես նրա պապ է հիշատակում Ատրներսեհ թագավորի մյուս որդուն՝ մագիստրոս Բագրատին, իսկ հայր՝ վերջինիս որդի կուրապաղատ Ատրներսեհին, որը մահացել է 961 թ.: Տե՛ս Сумбат Давитис-дзе, История и повествование о Багратионах, пер. М. Лордкипанидзе,

բերում է թագավոր տիտղոսին, ապա վրացական աղբյուրներում Տայքի տերերը հաճախ որպես թագավորներ են կոչվում:

Անդրադառնալով Տայքում տիրող իրավիճակին էթնիկ և դավանանքային առումով՝ նշենք, որ դրա քննությունը կատարել ենք նախկինում, իսկ այստեղ մեջ բերենք մի իրողություն, որն ապացուցում է, որ տեղի քաղկեդոնական միջավայրում Դավիթ կուրապաղատի օրոք գերիշխում էին հայ բնակչությունն ու հայերեն լեզուն: Հայտնի է, որ «Պղնձե քաղաքի պատմությունը» Դավիթ կուրապաղատի հանձնարարությամբ արաբերենից թարգմանվել է հայերեն, որ այն պատմվի արքունիքում՝ թագավորներին և իշխաններին զվարճացնելու համար[278]: Հայտնաբերված ձեռագիրը կրում է «Զրուց եւ խաւսք առաջի թագաւորացն եւ իշխանացն, զոր թարքմանեցին Դաւիթ կուրապաղատին ի հայ լեզու ի տաճիկ լիզվէ»[279]: Դրանից բխում է, որ Տայքի կուրապաղատության արքունիքում գործածական է եղել հայերենը[280]: Այն, որ Տայքում խոսել են հայոց լեզվի տեղական բարբառով, հաստատել է նաև Ի. Աբուլաձեն[281]: Հենց այդ է պատճառը, որ Իշխանի եկեղեցու

Тб., 1979, с. 35-36: Քննության առնելով այդ տեղեկությունները՝ Ն. Ադոնցն ընդունելի է համարում երկրորդը: Տե՛ս նաև Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 385:

[277] Տե՛ս Сумбат Давитис-дзе, с. 36, Ասողիկ, էջ 822:

[278] Հայտնի է «Պղնձէ քաղաքի պատմության» հայերեն թարգմանության երկու տարբերակ: Հնագույնը հայտնաբերվել ու հրատարակվել է Ն. Ակինյանի կողմից: Տե՛ս Ն. Ակինեան, Զրոյց Պղնձե քաղաքի, «Հանդէս ամսօրեայ», 1958, N 1-4: Այն վերաբերում է 10-րդ դարի վերջին տասնամյակին և իրականացվել է Տայքում՝ Դավիթ կուրապաղատի հանձնարարությամբ: Տե՛ս Պ. Մուրադյան, «Պատմութիւն Պղնձէ քաղաքի» զրույցի հայկական և վրացական պատումների և նրանց փոխհարաբերության շուրջ, «Բանբեր Մատենադարանի», 1962, N 6, էջ 250:

[279] Տե՛ս Ն. Ակինեան, նշվ. աշխ., էջ 23:

[280] Կարծիք է հայտնվել, որ թարգմանությունը կատարվել է Տայքի հայոց բարբառով: Տե՛ս նույն տեղում, էջ 22-23, Պ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 258:

[281] Տե՛ս Ի. Աբուլաձե, X դարի վրացերեն մի ձեռագրի հայերեն հիշատակագրությունները և նրանց նշանակությունը հայ բարբառագիտության համար, «Բանբեր Մատենադարանի», 1958, N 4, էջ 38-40: Տե՛ս նաև В. Степаненко, Торники и Тарониты в Византии (к вопросу о существовании т. н. тайкской ветви Торникянов, «Античная древность и средние века», вып. 30, Екатеринбург, 1999, с. 133-136:

կողքին 11-րդ դարի սկզբին վրաց թագավոր Գուրգենի կառուցված փոքրիկ եկեղեցու վրացերեն արձանագրության մեջ կառուցման թվականը ներկայացված է նաև հայերենով ու հայկական թվականությամբ[282]:

Վերոհիշյալ դեպքերից քիչ անց Կախքի քորեպիսկոպոսության մաս կազմող Գարդաբանում ապստամբություն սկսվեց, որը ճնշելու նպատակով աբխազաց Գեորգի թագավորն իր որդի՝ Վիրքի կառավարիչ Լևոնի հետ միասին արշավանքի դուրս եկավ: Որոշ ժամանակ անց աբխազական զորքերը ներխուժեցին Կախք, հրի ու սրի մատնեցին այն, իսկ այնուհետև հեռացան[283]: Դրանից հետո Կախք արշավեց Գեորգիի որդի Լևոնը: Կյուրիկե Բ քորեպիսկոպոսը (929-976) մեկնեց նրա հետ հանդիպման, սակայն վրաց իշխաններից ոմանք նրան հաղորդեցին, թե Գեորգին հրամայել է ձերբակալել նրա ընտանիքին, որից հետո Կյուրիկեն փորձեց փախչել: Աբխազների կողմն անցավ նրա եղբայրը և օգնեց գրավել մի քանի ամրոց Կախքում: Կյուրիկեն գերի ընկավ, սակայն աբխազաց թագավորին որպես պատանդ հանձնելով իր որդուն, ինչպես նաև իր տիրույթները՝ ազատ արձակվեց[284]: Շուտով Վիրքի իշխանների դրդմամբ նա կրկին ապստամբեց[285]: Ի. Ջավախիշվիլին կարծում է, որ այս անգամ ևս Վիրքի իշխանները վտանգ զգացին աբխազաց թագավորի հզորացումից և նրա դեմ հանեցին Կախքի քորեպիսկոպոսին[286]: Գեորգին ապստամբների դեմ զորք ուղարկեց իր որդի Լևոնի գլխավորությամբ, սակայն ապստամբությունը ճնշելիս հայտնի դարձավ Գեորգիի մահվան մասին, ուստի Լևոնը, հաշտություն կնքելով Կյուրիկեի հետ վերջինիս կողմից Աբխազաց թագավորության գերիշխանությունն ընդունելու և Կյուրի-

---

[282] Տե՛ս Е. Такайшвили, նշվ. աշխ., էջ 42:
[283] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 68:
[284] Տե՛ս նույն տեղում, էջ 68-69:
[285] Տե՛ս նույն տեղում, էջ 69:
[286] Տե՛ս Ի. Ջավախիշվիլի, նշվ. աշխ., էջ 104:

կեի որդու հետ իր դստերն ամուսնացնելու պայմանով, շտապ վերադարձավ[287]:

Այսրկովկասում տեղի ունեցող այս կարևոր իրադարձություններում Հայոց թագավորության մասնակցության կամ դերակատարության վերաբերյալ հայկական և վրացական աղբյուրները լռում են: Մ. Չամչյանցը գրում է, որ Աշոտ Գ Ողորմած թագավորի (953-977) գահակալության սկզբում հարևան լեռնականները ներխուժել են Հայոց թագավորություն, որոնց հայոց զորքը երեք տարվա ընթացքում պարտության է մատնել ու քշել երկրից[288]: Բայց այդ տեղեկությունը սկզբնաղբյուրներում հիմնավորում չի գտնում: Այս պարագայում իրավիճակը հստակեցնելուն նպաստում է այն, որ արաբական աղբյուրներից մեկի համաձայն՝ Աշոտ Գ-ի գերիշխանության ներքո է գտնվել Վիրքը: Ըստ այդ աղբյուրի՝ մոտ 953 թ. «Վրաստան նահանգի և Հայաստանի այլ մասերի վրա կար մի թագավոր, որի անունն էր Աշութ իբն ալ-Աբբաս (իմա՛ Աշոտ Գ՝ որդի Աբասի – Ա. Ե.) և Շահնշահ տիտղոսն էր կրում: Սա փորձեց պաշարել Դվինը և նրա ժողովրդի դեմ կռվել: Զորք հավաքեց հայերից, լեզգիներից և այլ անհավատներից...»[289]: Բացի Վիրքից՝ Աշոտ Գ-ն, փաստորեն, ծանրակշիռ դիրք ուներ Կովկասյան լեռնականների շրջանում, որի վկայությունն է լեզգիների զորքի մասնակցությունը Դվինի ազատագրման գործողությանը: Կարող ենք ենթադրել, որ Վիրքի իշխանների պայքարն Աբխազաց թագավորության դեմ հովանավորվում էր հայոց թագավորի կողմից, որը ևս շահագրգռված էր Վիրքում գերիշխանության հաստատմամբ, առավել ևս, որ վրաց իշխաններն Աբխազաց թագավորության հարձակումները հետ մղելու գործում ունեին նման հզոր տիրակալի պաշտ-

---

[287] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 69:

[288] Տե՛ս Միքայել Չամչեանց, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 836:

[289] Ա. Տեր-Ղևոնդյան, Մունաջջիմ-Բաշիի XI-XII դդ. անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շադդադյանների մասին, «Բանբեր Մատենադարանի», 1962, N 6, էջ 477:

պանության կարիքը: Առնվազն 950-ական թթ. սկզբին, ըստ արաբական աղբյուրի, Վիրքը գտնվում էր Հայոց թագավորության գերիշխանության ներքո, որի գահակալը համարվում էր շահնշահ կամ թագավորների թագավոր: Դա հիմնավորվում է այն փաստով, որ, ինչպես ստորև կտեսնենք, այդ և հետագա տարիներին աբխազաց թագավորների հիմնական հոգսը ոչ թե Վիրքի, այլ Կախքի քորեպիսկոպոսության նվաճումն էր:

Աբխազաց Լևոն թագավորը (957-967) կատարեց տրված խոստումն ու իր դստերն ամուսնացրեց Կյուրիկեի որդու հետ: Սակայն տարիներ անց նրա դուստրը մահացավ, որից հետո Լևոնն արշավեց Կախք, որտեղ ծանր հիվանդացավ ու վախճանվեց: Աբխազաց թագավոր դարձավ նրա եղբայր Դեմետրեն (967-975), որից որոշ ժամանակ պահանջվեց վերականգնել Աբխազաց թագավորության նախկին հզորությունը: Աբխազաց թագավորներն այդ տարիներին հարձակման հիմնական թիրախ էին դարձրել Կախքի քորեպիսկոպոսությունը[290], որի նկատմամբ հաղթանակն Աբխազաց թագավորությունը կդարձներ էլ ավելի զորեղ[291]:

Զ. Անչաբաձեն ցույց տալու համար, որ Աբխազաց թագավորությունը քաղկեդոնականների միավորման գործում մեծ հաջողություններ էր արձանագրել, մեջբերում է Ուխտանեսի հետևյալ հիշատակությունը. «Աճումն առնու ազգն այն, եւ բազմացեալ սփռի յեզր ծովուն աստի եւ անտի, եւ շրջի յայն կողմն եւ ձգի մինչեւ ի սահմանս Հայոց եւ Աղուանից, եւ լինի ազգ եւ բազում յոյժ, եւ կոչի անուն աշխարհին Ափխազք, եւ իւրաքանչիւր անուանք գաւառացն՝ որ շուրջ զիւրեւ անթիւք, եւ այլ եւս գաւառք շուրջ զՏփխիս քաղաքաւ, որ կոչին Ծանարք՝ եւ Ջավախք՝ եւ Թռեխք»[292]: Դրանից կարելի է բխեցնել, որ Աբխազաց

---

[290] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 69-70:

[291] Տե՛ս З. Анчабадзе, նշվ. աշխ., էջ 134-135:

[292] Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, «Պատմագրութիւն», գիրք Բ., Ե., 2011, էջ 532:

թագավորությունը զգալիորեն տարածել էր իր գերիշխանության սահմանները՝ հասնելով Տփղիս, Ծանարք, Ջավախք և Թռեղք։ Բայց Զ. Անչաբաձեի տեսակետը չի կարող հիմնավոր լինել այն պարզ պատճառով, որ պատմիչը չի հստակեցնում այդ իրադարձության ժամանակը և հանգամանքները։ Ուստի խիստ թեական է դրանք 10-րդ դարի կեսերին տեղադրելը։

Շուտով աբխազաց գահի հավակնորդ հայտնվեց՝ ի դեմս Դեմետրեի եղբայր Թեոդոսի, որը եկավ Սամցխե և սկսեց պատրաստվել պատերազմի։ Դեմետրեի ուղարկած զորքը նրա հապճեպ հավաքված բանակին պարտության մատնեց, որից հետո Թեոդոսն ապաստանեց Վիրքի իշխաններից Ատրներսեհ Ջամեցու բերդում՝ Ջամում։ Դեմետրեի զորքը պաշարեց բերդը, որտեղից Թեոդոսն անցավ Տայքի Դավիթ կուրապաղատի տիրույթներն ու մեկ տարի ապաստանեց այնտեղ[293]։ Այնուհետև նա տեղափոխվեց Կախք՝ Կյուրիկե քորեպիսկոպոսի տիրույթները։ Դեմետրեն հաշտության առաջարկ կատարեց եղբորն այն պայմանով, որ Կյուրիկեն միջնորդ դառնա Թեոդոսի վերադարձի հարցում և խոստացավ չվնասել նրան, ավելին՝ առաջարկեց համատեղ իշխել Աբխազաց թագավորությունում։ Սակայն Թեոդոսի վերադարձից հետո նա դրժեց երդումը և կուրացրեց եղբորը։ Քիչ անց նա վախճանվեց, իսկ աբխազաց իշխանները թագաժառանգ չլինելու պատճառով Թեոդոսին ազատ արձակեցին ու գահ բարձրացրին (975-978)։ Թեոդոսը թույլ տիրակալ էր և կուրության պատճառով՝ ոչ գործունյա։ Նրա դեմ շուտով սկսեցին հանդես գալ տեղի իշխանները[294]։

Փաստորեն՝ աբխազաց թագավորների տասնամյակների ջանքերը՝ տիրելու Այսրկովկասի քաղկեդոնական երկրամասերին, ի վերջո ավարտվեցին Թեոդոսի կարճատև գահակալության շրջանում արձանագրված տեղատվությամբ, որից անմիջապես օգտվեցին Աբխազաց թագավորության հակառակորդները։

---

[293] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 69-70։
[294] Տե՛ս նույն տեղում, էջ 70-72։

3.2. Տայքի Դավիթ կուրապաղատը և Այսրկովկասի քաղկեդոնականների միավորման գործընթացը

975 թ. Կախքի զորքն արշավեց Վիրք ու պաշարեց Ուփլիսցխեն: Վիրքի իշխաններից Մարուշի որդի Իվանեն (Իվանե Մարուշիձե) դիմեց Այսրկովկասում ազդեցություն և հեղինակություն վայելող Տայքի Դավիթ կուրապաղատին՝ առաջարկելով արշավել Վիրք, որտեղ կարող էր կամ անձամբ իշխել և կամ իշխանությունը հանձնել աբխազաց Գեորգի թագավորի դուստր Գուրանդուխտի և Գուրգեն Բագրատունու որդի Բագրատին: Վերջինս Կղարջքի առաջին թագավոր Ատրներսեհի (899-923) տոհմից էր, նրա որդի Սմբատի զավակ, «վրաց թագավոր» տիտղոսը ժառանգած Բագրատ Ռեգվենի (Խև) (958-994) թոռը[295]:

---

[295] Տե՛ս Сумбат Давитис-дзе, с. 34-36: Վարդան վարդապետը նշում է, որ աբխազաց թագավոր Թևտասից (Թեոդոս) հետո «թագաւորեաց Բագարատ, որդի Գուրգենայ, որդւոյ Աշոտոյ Ողորմածին, ի վերայ Ափխազաց. այս ըստ Մխիթարայ երիցու ասիցն»: Վարդան վարդապետ, էջ 91-92: Մխիթար երեցը, ըստ Ղ. Ալիշանի, Մխիթար Անեցին է (տե՛ս նույն տեղում, էջ 92, ծանոթ. 2), սակայն Մխիթար Անեցու աշխատության՝ մեզ հասած հատվածում (տե՛ս Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Մարգարյանի, Ե., 1983) բացակայում է Գուրգենի՝ հայոց թագավորի որդի լինելու մասին տեղեկությունը: Փոխարենը այդ մասին հիշատակություն է պահպանել Մխիթար Այրիվանեցին, որը Աշոտ Գ Ողորմածի (953-977) օրոք տեղի ունեցած դեպքերը ներկայացնելիս գրում է. «Աստ եղև սկիզբն թագաւորելոյ Բագրատունեաց ի վերայ Վրաց, զի Գուրգեն ի Վիրս և Սմբատ եղբայր նորա ի Հայս թագաւորեցին»: Տե՛ս Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական, ի լոյս ընծայեաց Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1867, էջ 71: Հավանաբար, Վարդան վարդապետի հաղորդումը բխում է նման տեղեկությունից, չնայած վերջինիս մեջ «եղբայր նորա» արտահայտությունը բոլորովին էլ չի նշանակում, թե խոսքը Աշոտ Գ թագավորի որդի Գուրգենի՝ Սմբատ Բ-ի հարազատ եղբոր մասին է, այլ, հավանաբար, պատմիչը փորձել է այդ կերպ ներկայացնել ազգակցական կապը հայոց և վրաց Բագրատունիների միջև: Վարդան վարդապետը, թեև այդ տեղեկությունից բխող իր եզրակացությունը տվել է, սակայն իր երկի մեկ այլ հատվածում, ներկայացնելով Կղարջքի Բագրատունիների՝ «վրաց թագավոր» տիտղոսը կրած ներկայացուցիչներին, գրում է. «Ատրներսեհ (Կղարջքի կամ «վրաց» թագավոր՝ 899-923 թթ.–Ա. Ե.), սորա որդի Դաւիթ (վրաց թագավոր 923-937 թթ.–Ա. Ե.). սմա եղբօրորդի Գուրգէն (Բագրատ Խևի որդի Գուրգեն՝ վրաց թագավոր 994-1008 թթ.–Ա. Ե.), որոյ որդին Բագարատ (իմա՛ աբխազաց թագա-

Դավիթն անսաց Իվանեի հորդորին և զորք մտցրեց Վիրք՝ այնտեղից դուրս մղելով Կախքի ուժերին[296]: Նրա մոտ եկավ Իվանեն՝ իր հետ բերելով Բագրատին և նրա հայր Գուրգենին: Կուրապաղատը որդեգրեց Բագրատին՝ որպես Տայքի երկու՝ հարավային ու հյուսիսային մասերի ժառանգորդ[297] և Ուփլիսցխեն վերցրեց Իվանեից ու հանձնեց նրան[298]: Բայց քանի որ Բագրատն անչափահաս էր, Դավիթ կուրապաղատը նրան իշխանակից կարգեց նրա հայր Գուրգենին՝ վրաց իշխաններին հրամայելով. «Սա (իմա՛ Բագրատը – Ա. Ե.) Տայքի, Քարթլիի և Ափխազաց երկրի գահաժառանգն է, իմ որդին և սանը, և ես եմ սրա խնամակալն ու սատարը, սրան հպատակվեք բոլորդ»[299]:

Փաստորեն՝ Դավիթ կուրապաղատը պատմական դեր խաղաց Աբխազավրացական թագավորության ձևավորման գործում՝ շրջանառության մեջ դնելով Բագրատ Բագրատունու՝ աբխազաց և վրաց թագաժառանգ հանդիսանալու գաղափարը: Ավելին՝ Կղարջքի տիրա-

---

վոր Բագրատ Գ-Ա. Ե.)»: Վարդան վարդապետ, էջ 82: Այսինքն՝ այստեղ արդեն Գուրգենը ներկայացված է ոչ որպես հայոց թագավորի որդի: Այն, որ Կղարջքի առաջին թագավորի որդի Դավիթը զավակ չուներ և նրանից «վրաց թագավոր» տիտղոսը ժառանգել է նրա եղբոր որդի Բագրատ Խևը (վրաց թագավոր՝ 958-994 թթ.), հայտնի է վրացական աղբյուրից: Տե՛ս Сумбат Давитис-дзе, с. 36: Իշխանի եկեղեցու արձանագրություններից մեկի համաձայն՝ Բագրատ Խևից առաջ «վրաց թագավոր» տիտղոսը կրել է Դավիթ թագավորի եղբայր Բագրատ մագիստրոսը (937-945): Տե՛ս Е. Такайшвили, նշվ. աշխ., էջ 36: «Քարթլիի մատյանի» համաձայն՝ Բագրատից հետո՝ մինչև 958 թ., «վրաց թագավոր» տիտղոսը կրել է նրա եղբայր, Բագրատ Խևի հայր Սմբատ կուրապաղատը, որից էլ այդ տիտղոսը ժառանգել է Բագրատ Խևը: Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 67: Վարդան վարդապետը, փաստորեն, «վրաց թագավոր» տիտղոսը կրողների ցանկից դուրս է թողել Բագրատ մագիստրոսին, Սմբատ կուրապաղատին և Բագրատ Խևին, չնայած սխալմամբ վերջինիս վերաբերյալ ասված «եղբոր որդի» բառերը վերագրել է նրա որդի Գուրգենին, որն իրականում Դավիթի եղբոր՝ Սմբատ կուրապաղատի թոռն էր: Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 67: Բագրատ մագիստրոսին, Սմբատ կուրապաղատին և Բագրատ Խևին վրաց թագավորների ցանկում չի հիշատակում նաև Մխիթար Այրիվանեցին: Տե՛ս Մխիթար Այրիվանեցի, էջ 22-23:

[296] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 70:

[297] Տե՛ս նույն տեղում, էջ 71-72:

[298] Տե՛ս նույն տեղում, էջ 70:

[299] Տե՛ս նույն տեղում, էջ 71:

կալների կողմից տասնամյակներ առաջ սկսված՝ զուտ վրացադավանների միավորման գործընթացը շուտով վերածվեց Այսրկովկասի քաղկեդոնականների միասնական պետության ձևավորման գործընթացի, երբ աբխազաց թագավոր հռչակված Բագրատունի իշխանն Աբխազաց թագավորության ներուժը կարողացավ ներդնել Այսրկովկասի քաղկեդոնական երկրների ու երկրամասերի միավորման և մեկ թագավորության կազմում ընդգրկելու գործում:

978 թ.՝ աբխազաց Թեոդոս թագավորի իշխանության վերջին տարում, Վիրքի իշխանները կապ հաստատեցին Կախքի քորեպիսկոպոսի հետ և նրան հանձնեցին Ուփլիսցխե ամրոցը: Գերվեցին աբխազաց և վրաց գահաժառանգ Բագրատը, նրա հայր Գուրգենն ու մայրը՝ Գուրանդուխտը: Այդ լուրը զայրացրեց Դավիթ կուրապաղատին, որն արշավեց դեպի Կախք: Քորեպիսկոպոսը անմիջապես հաշտության առաջարկ արեց, ազատ արձակեց գերյալներին և նրանց վերադարձրեց Ուփլիսցխեն[300]:

Արդեն երեք տարի էր, ինչ թագավորում էր Թեոդոս կույրը: Նրա օրոք Աբխազաց թագավորությունը կորցրեց հզորությունը և կանգնեց քայքայման եզրին: 978 թ. դարձյալ հանդես եկավ Մարուշի որդի Իվանեն, որն այս անգամ, վրաց իշխաններից բացի, կարողացավ համախմբել նաև աբխազաց իշխաններին, և նրանք միահամուռ դիմեցին Դավիթ կուրապաղատին՝ Բագրատին դարձնելու իրենց թագավոր: «Քարթլիի մատյանը» հաղորդում է, որ կուրապաղատը դժկամությամբ համաձայնեց, քանի որ անզավակ լինելու պատճառով Բագրատին որդեգրել էր որպես Տայքի ժառանգորդ, սակայն այն ժամանակ աբխազաց և վրաց երկրները մնացել էին անտերունչ, ուստի նա ի վերջո համաձայնեց և Բագրատին ուղարկեց Աբխազաց թագավորություն: Թեոդոս կույրին գահընկեց արեցին և Բագրատին օծեցին աբխազաց թագավոր, քանի որ նա արդեն չափահաս էր դարձել[301]:

---

[300] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 72:
[301] Տե՛ս նույն տեղում:

Մարուշի որդի Իվանեի և Դավիթ կուրապաղատի ձեռնարկած քայլերը Ի. Ջավախիշվիլին որակում է որպես միասնական վրացական թագավորության հիմնադրման երաշխիք[302]:

Գ. Մելիքիշվիլին կարծում է, որ չպետք է գերագնահատել Տայքի և Կղարջքի դերը 9-10 դարերում Վրաստանի միավորման գործընթացում, քանի որ այդ պարագայում անտեսվում են տարբեր էթնոքաղաքական շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակները[303]: Միավորման գործընթացի առաջին դիրքում կանգնած էին ոչ թե Կղարջքի տերերը, այլ աբխազաց թագավորները, որոնք տիրապետում էին ավելի ընդարձակ ռեսուրսների[304]: Այդ առումով, հարկ է նշել, որ Ս. Ջանաշիան փորձ է կատարել Տայքի և Կղարջքի Բագրատունիների իշխանությունները ներկայացնելու որպես 10-րդ դարի երկրորդ կեսին Այսրկովկասի ամենաընդարձակ պետական կազմավորում, որը, ըստ նրա, իբր թե ընդգրկում էր Տայքը, Կղարջքը, Շավշքը, Աջարան, Սպերը, Արտահանը, Սամցխեն ու Ջավախքը[305]: Այդ տեսակետն իր արձագանքն է գտել հետագա որոշ ուսումնասիրողների աշխատանքներում[306]: Տայքի ու Կղարջքի Բագրատունիների տիրույթներին մենք դեռ կանդրադառնանք, իսկ այժմ միայն նշենք, որ Այսրկովկասում ամենաընդարձակը բոլորովին էլ նրանց տիրույթները չէին, այլ Աբխազաց թագավորությունը, որը կարողացել էր տիրել Վիրքին՝ էլ ավելի ընդարձակելով իր սահմանները: Բացի այդ՝ 10-րդ դարի երկրորդ կեսին՝ Սմբատ Բ (977-989) և Գագիկ Ա (989-1020) թա-

---

[302] Տե՛ս Ի. Ջավախիշվիլի, նշվ. աշխ., էջ 123-124:

[303] Տե՛ս Գ. Մելիքիշվիլի, Ավատատիրական Վրաստանի քաղաքական միավորումը և Վրաստանում ավատատիրական հարաբերությունների զարգացման մի քանի հարցեր, Թբ., 1973, էջ 12 (վրացերեն):

[304] Տե՛ս նույն տեղում, էջ 50-51, 54-56:

[305] Տե՛ս С. Джанашиа, Об одном примере искажения исторической правды. По поводу книги Н. Токарского «Архитектура древней Армении», Тб., 1947, с. 12:

[306] Տե՛ս, օր., В. Степаненко, Политическая обстановка в Закавказье в первой половине XI в., «Античная древность и средние века», вып. 11, Свердловск, 1975, с. 125:

գավորների օրոք Հայոց թագավորությունը զգալի հաջողություններ էր արձանագրել կենտրոնաձիգ իշխանության վերականգնման առումով, ու, թեև այն այսրկովկասյան թագավորություն չէր պատմաքաղաքական առումով, սակայն Այսրկովկասի զարգացումներում կրկին ձեռք էր բերել վճռորոշ դերակատարություն։ Տարածքային առումով Հայոց թագավորությունը զգալիորեն գերազանցում էր ինչպես Աբխազաց թագավորությանը, այնպես էլ Տայքի ու Կղարջքի Բագրատունիների իշխանություններին։ Ինչ վերաբերում է վերջիններին, ապա նույնիսկ ամենամեծ ցանկության դեպքում հնարավոր չէ դրանք դիտարկել որպես մեկ միասնական պետական կազմավորում, քանի որ նախկինում ականատես եղանք և այսուհետև ևս կտեսնենք, որ, բացի զուտ ավատատիրական մասնատվածությունից, այդ տարածքները մասնատված էին նաև քաղաքականապես։ Ուստի 10-րդ դարի երկրորդ կեսի պատմաքաղաքական իրավիճակին հակասող պնդում է, մի կողմից, Տայքի ու Կղարջքի Բագրատունիների տիրույթներն ընդհանուր առմամբ որպես մեկ միավոր դիտարկելը, իսկ մյուս կողմից՝ դրանք Այսրկովկասի ամենաընդարձակ պետական կազմավորում համարելը։

Մեր քննարկած դեպքերը ցույց են տալիս, որ Աբխազաց թագավորությունը մեծ դերակատարություն ունեցավ Այսրկովկասի քաղկեդոնականների միավորման գործընթացում, սակայն փաստ է և այն, որ Հայոց թագավորության աջակցությամբ միավորման առաքելությունն այնուհետև իր վրա վերցրեց Տայքի կուրապաղատ Դավիթը՝ պաշտպանության ներքո առնելով Վիրքի ու Աբխազաց թագավորության գահաժառանգին։ Ուստի առավել ճշգրիտ է Զ. Անչաբաձեի այն տեսակետը, որ քաղկեդոնականների միավորման գործընթացում շահագրգռված էին թե՛ Աբխազաց թագավորությունը և թե՛ Տայքի ու

Կղարջքի Բագրատունիները, որոնք այդ իսկ պատճառով հանդես էին գալիս որպես հակառակորդներ[307]:

Գ. Մելիքիշվիլիի վերոհիշյալ տեսակետը, թե չպետք է գերագնահատել Տայքի ու Կղարջքի դերը Վրաստանի միավորման գործում, խիստ հիմնավոր կլիներ, եթե չլիներ 978 թ. իրադարձություններին հայոց թագավոր Սմբատ Բ-ի (977-989) վճռորոշ մասնակցությունը, որը հնարավորություն տվեց Դավիթ կուրապաղատին հաջողության հասնելու սեփական ծրագրերում: Խնդիրն այն է, որ Բագրատին որդեգրելուց հետո իրադարձությունները, ինչպես տեսանք, շուտով այլ ընթացք ստացան: Դավիթ կուրապաղատը սկսեց խորհել Բագրատ Բագրատունուն աբխազաց գահին բազմեցնելու վերաբերյալ, սակայն այդ նպատակը կյանքի կոչելիս նա կարիք ուժեղ դաշնակցի, ուստի օգնության համար դիմեց հայոց թագավոր Սմբատ Բ-ին: Ասողիկը տեղեկացնում է, որ աբխազաց թագավոր Թեոդոսի (Թնտաս) փոխարեն «կիւրապաղատն Դաւիթ եւ Սմբատ արքայ Հայոց թագաւորեցուցին Ափխազաց զՍմբատ՝ որդի Գուրգենայ, թոռն Բագարատայ թագաւորին Վրաց»[308]: Պարզ է, որ աբխազաց գահին բազմած Սմբատը նույն ինքը Բագրատ Բագրատունին է, սակայն այստեղ կարևորն այն է, որ ի տարբերություն վրացական աղբյուրների տեղեկությունների՝ Ասողիկը հայտնում է, որ Բագրատի գահ բարձրանալուն մասնակցել է նաև հայոց թագավոր Սմբատ Բ-ն: Զ. Անչաբաձեն կարծում է, որ այդ տեղեկությունը ճշգրիտ է, քանի որ Դավիթ կուրապաղատը դժվար թե նման քայլ ձեռնարկեր՝ առանց ստանալու տարածաշրջանի հզորագույն տիրակալներից մեկի՝ հայոց թագավորի աջակցությունը[309]: Այն, որ իրոք Բագրատին աբխազաց գահին են բազմեցրել Դավիթ կուրապաղատն ու Սմբատ Բ-ն, ցույց է տալիս Դավթի որդի Սմբատի երկի՝ Է. Թաղայշվիլիի թարգմանությունը, որտեղ, ի տարբերություն հետա-

---

[307] Տե՛ս З. Анчабадзе, նշվ. աշխ., էջ 134-135:
[308] Տե՛ս Ասողիկ, էջ 805:
[309] Տե՛ս З. Анчабадзе, նշվ. աշխ., էջ 168:

գա թարգմանությունների, նշված է, որ Բագրատին պարզապես «դարձրին աբխազաց թագավոր»[310]:

Աբխազաց թագավորությունում Բագրատ Բագրատունու գահակալությամբ ձևավորվեց նոր իրավիճակ, երբ Կղարջքի Բագրատունիներն արդեն կարող էին Աբխազաց թագավորության ներուժն ի սպաս դնել սեփական նկրտումների իրականացման գործին: Ահա՛, այս իրողությունն է, որ էական ազդեցություն ունեցավ դեպքերի հետագա զարգացման վրա: Կարելի է արձանագրել, որ դրանցում մեծ դեր խաղաց Սմբատ Բ-ի միջամտությունը:

Սկզբում Բագրատ Գ-ն (978-1014) հանդես էր գալիս միայն որպես աբխազաց թագավոր: Այդ է վկայում նրա հանձնարարությամբ գրված «Աբխազաց թագավորների դիվանում» տեղ գտած հետևյալ վերջաբանը. «Նրանցից (իմա՛ աբխազաց թագավորներից – Ա. Ե.) հետո կամեցավ աստված, և ես՝ Բագրատ Բագրատունիս, երանելի Գուրգենի որդին, աբխազաց թագավոր Գեորգիի դստեր որդին, տիրեցի Աբխազաց երկրին՝ իմ մայրենի ժառանգությանը և որքան ժամանակ կթագավորեմ, հայտնի է [միայն] աստծուն»[311]:

Բագրատ Գ-ն սկզբում գահընկեց թագավոր Թեոդոս Կույրին ուղարկեց Դավիթ կուրապաղատի մոտ, իսկ երկու տարի անց՝ 980 թ., զորք մտցրեց Վիրք: «Քարթլիի մատյանը» տեղեկացնում է, որ Վիրքում իշխում էր նրա մայր Գուրանդուխտը, սակայն դատելով հետագա հիշատակություններից՝ նրա իշխանությունը խիստ սահմանափակ էր: Վիրքի իշխանները զորք ժողովեցին ու դուրս եկան Բագրատ Գ-ի դեմ պատերազմի: Աբխազաց բանակը հաղթանակի հասավ, որից հետո

---

[310] Տե՛ս «Жизнь и известие о Багратидах, царях наших грузинских, откуда они явились в эту страну, или с какого времени владеют они царством Грузинским, которое написал Сумбат, сын Давида», пер. Е. Такайшвили, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. 28, Тифлис, 1900, с. 154:

[311] Տե՛ս «Сообщения средневековых грузинских письменных источников об Абхазии», Сухуми, 1986, с. 13:

Բագրատ Գ-ն կայունացրեց իրավիճակը Վիրքում։ Այնուհետև նրան հայտնի դարձավ, որ Աբխազաց թագավորությունում իրավիճակը լարված է, և մորն իր հետ վերցրած՝ վերադարձավ Աբխազաց թագավորություն[312]։

Փաստորեն՝ Բագրատ Գ-ն իր թագավորության առաջին տարիներին փորձ կատարեց գերիշխանություն հաստատելու նաև Վիրքում, սակայն գործերը նրան ստիպեցին անմիջապես վերադառնալ Աբխազաց թագավորություն[313]։

Տարիներ անց՝ 988 կամ 989 թ.[314], Բագրատ Գ-ն արշավանքի դուրս եկավ դեպի Թռեղք, որտեղ Կլդեկարն բերդում իշխում էր Ռատ Լիպարիտյանը՝ տիրելով Մանգլեաց փոր գավառին և Սակուրքին (Սկվիրեթ, Սակուրեթ)։ Նա հրաժարվում էր ենթարկվել Բագրատ Գ-ին։ Մինչ վերջինիս զորքը ճանապարհին էր, Տայքի Դավիթ կուրապաղատին լուր բերեցին, թե Բագրատը դուրս է եկել նրա դեմ և կամենում է սպանել նրան[315]։ Դավիթ կուրապաղատը հավաքեց զորքերը՝ նրան դիմակայելու համար։ Կուրապաղատին միացավ նաև աբխազաց թագավոր Բագրատի պապ, վրաց թագավոր Բագրատ Խևը, որն իր հերթին անհանգստանում էր, որ իր որդի, աբխազաց թագավոր Բագրատի հայր Գուրգենը (մահ.՝ 1008 թ.) կխլի իր տիրույթները։ Դավիթ կուրապաղատն օգնության կանչեց հայոց թագավորներին՝ Սմբատ Բ-ի գլխավորությամբ, որոնք միացյալ զորքերով շարժվեցին դեպի Ջավախք։ Դավիթ կուրապաղատի ուղարկած զորախումբը Շավշքի սահմանին հարձակվեց որդուն օգնության շտապող Գուրգենի վրա և պարտության մատնեց նրան։ Այդ ժամանակ Բագրատն ար-

---

[312] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 72։

[313] Տե՛ս նույն տեղում։

[314] Տե՛ս Ի. Ջավախիշվիլի, նշվ. աշխ., էջ 126։

[315] Ն. Բերձենիշվիլին կարծում է, որ Ռատը դիտավորյալ է նման լուր տարածել՝ Դավիթ կուրապաղատին ու Բագրատ Գ-ին թշնամացնելու նպատակով։ Տե՛ս Ն. Բերձենիշվիլի, Վրաստանի պատմության հարցեր, հ. VII, Թբ., 1974, էջ 14 (վրացերեն)։

դեն հասել էր Թռեղք։ Տեղեկանալով իրավիճակին և հասկանալով, որ Դավիթ կուրապաղատի դեմ պատերազմել չի կարող, Բագրատը միայնակ ներկայացավ նրան և հայտնեց, որ իրականում եկել է պատերազմելու անհնազանդ Ռատի դեմ։ Ըստ «Քարթլիի մատյանի»՝ կուրապաղատը հավատաց նրան և արտոնեց հնազանդեցնել Ռատին։ Ռատն ի վերջո հնազանդվեց և լքելով իր տիրույթները՝ հեռացավ Ղվիրիլա գետի և Լիխի լեռնաշղթայի միջև գտնվող Արգվեթ գավառը[316]՝ իր պապենական ոստանը[317]։

Այս դեպքերի մասին Ասողիկը հաղորդում է կարևոր տեղեկություններ, որոնք լույս են սփռում մի շարք մութ անցքերի վրա։ Պատմիչը հայտնում է, որ երբ Բագրատ Գ-ի հայր Գուրգենին սեփական տիրույթներից քշեց վերջինիս հայր, վրաց թագավոր Բագրատ Խևը, թերևս, Դավիթ կուրապաղատի աջակցությամբ, 988 թ. «թագաւոր Աբխազաց խաղայ զաւրաւք բազմաւք ի Սարմատացւոց աշխարհէն ի վերայ կիւրապաղատին Տայոց Դաւթի ... յայսկոյս անցեալ ընդ Կովկասային լերինսն, գայ բանակի յեզերս Կուրն կոչեցեալ գետոյ։

Եւ կիւրոպաղատն Տայոց Դաւիթ եւ թագաւորն Վրաց Բագարատ (իմա՛ Բագրատ Խև-Ա. Ե.) առաքեն առ թագաւորն Հայոց Սմբատ՝ կոչել յաւգնականութիւն իւրեանց»[318]։ Հայոց թագավոր Սմբատ Բ-ն հավաքեց հայոց զորքն ու արշավանքի դուրս եկավ։ Դատելով Ասողիկի տեղեկություններից՝ հավաքվել էին Վասպուրականի, Սյունյաց և Հայոց Արևելից կողմանց զորքերը։ Վերջիններս Սմբատը Բ-ի գլխավորությամբ միացան Դավիթ կուրապաղատի բանակին և շարժվելով առաջ՝ հասան Ջավախք։ Աբխազաց թագավոր Բագրատ Գ-ն հաշտություն առաջարկեց, որն ընդունվեց հակառակորդների կողմից։ Դավիթ կուրապաղատը Բագրատից վերցրեց Սակուրք բերդը և օգնության

---

[316] Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Ե., 1963, էջ 39։
[317] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 72-73, Ս. Երեմյան, Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, «Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ», N 2, Ե., 1947, էջ 114-116։
[318] Ասողիկ, էջ 805-806։

դիմաց հանձնեց հայոց թագավորին[319]։ Ասողիկի տեղեկություններից կարելի է բխեցնել հետևյալ կարևոր իրողությունները.

ա. աբխազաց թագավոր Բագրատը հարձակում էր գործել Տայքի կուրապաղատ Դավիթի վրա, ուստի նրանց միջև առկա էին լուրջ հակասություններ,

բ. աբխազաց թագավոր Բագրատը դեռևս աբխազաց և վրաց թագավոր չէ, քանի որ թե՛ «վրաց թագավոր» տիտղոսը, թե՛ վրացադավան երկրամասերից շատերը նրան չէին պատկանում։ Ավելին՝ բուն Վիրքում ևս, ինչպես տեսանք, նրա գերիշխանությունը երբեմն վիճարկվում էր։ Պատահական չէ, որ հայկական և վրացական աղբյուրներում նա պարզապես հիշատակվում է որպես աբխազաց թագավոր[320],

գ. «վրաց» թագավոր է հիշատակվում մեկ այլ Բագրատ, որը վրացական աղբյուրներում հայտնի է որպես Բագրատ Խև և որպես աբխազաց թագավոր հռչակված Բագրատի պապ,

դ. Բագրատի դրությունը Վիրքում այնքան անկայուն էր, որ նրա հորը Կղարջքում զրկեցին տիրույթներից,

ե. Վիրքում տեղի ունեցող գործընթացներում լուրջ դերակատարություն ուներ հայոց թագավոր Սմբատ Բ-ն։

Ասողիկի տեղեկություններից կարելի է բխեցնել այլ իրողություններ ևս։ Երբ 990 թ. Դավիթ կուրապաղատը գրավեց Մանազկերտը, Հայոց թագավորությանը հարևան ամիրայությունների զորքերը՝ Ատրպատականի Մամլան ամիրայի գլխավորությամբ արշավեցին դեպի Մանազկերտ և հասան Ծաղկոտն գավառը։ Նրանց ընդառաջ դուրս եկան հայոց Գագիկ Ա թագավորի (989-1020), Տայքի Դավիթ կուրապաղատի և վրաց թագավոր Բագրատ Խևի միացյալ զորքերը՝ ստիպելով հակառակորդին նահանջել[321]։ Ի դեպ, Գագիկ Ա-ն համար-

---

[319] Տե՛ս նույն տեղում, էջ 806։

[320] Տե՛ս նույն տեղում, Քարթլիի մատյան, Ա, էջ 73 և այլն։

[321] Տե՛ս Ասողիկ, էջ 816։

վում էր «շահնշահ Հայոց և Վրաց»: Անիի Կաթողիկե եկեղեցու կառուցման արձանագրության մեջ նշված է, որ «Ի :ՆԾ: թ[ուին] Հայոց (1001 թ. – Ա. Ե.) ... ի մեծափառ թագաւորութեանն Գագկա Հայոց եւ Վրաց շահանշահի, ես Կատրանիդէ Հայոց թագուհի … հրամանաւ առն իմո Գագկա շահանշահի, շինեցի զՍուրբ Կաթաղիկէս...»[322]: Փաստորեն՝ հայոց հզոր արքան պահպանում էր գերագահ դիրքը վրացադավանների միջավայրում:

Այս շրջանում, փաստորեն, դաշինք գոյություն ուներ հայոց թագավորի, Տայքի կուրապաղատի և աբխազաց թագավոր Բագրատի պապ, «վրաց» թագավոր Բագրատի միջև, որը սեփական որդուց խլել էր նրա տիրույթները, որի հետևանքով, ինչպես վերը տեսանք, Բագրատ Գ-ն արշավանքի դուրս եկավ Դավիթ կուրապաղատի դեմ: Արդեն 998 թ., երբ տեղի ունեցավ Ատրպատականի ամիրա Մամլանի հաջորդ արշավանքը Դավիթ կուրապաղատի դեմ, Ծմբոյի ճակատամարտում թշնամուն պարտության մատնեցին Հայոց և Վրաց շահնշահ Գագիկ Ա-ի, Դավիթ կուրապաղատի և վրաց թագավոր Գուրգենի՝ Բագրատ Խնի որդու միացյալ զորքերը[323]: Ըստ որում՝ պատմիչը գրում է, որ Բագրատ Խնը, որին պատմիչը ներկայացնում է որպես վրաց թագավոր[324], արդեն վախճանվել էր, և նրանից հետո նրա փոխարեն թագավորում էր նրա որդի Գուրգենը[325]:

Այդ կարևոր իրադարձություններին անմասն էր աբխազաց թագավոր Բագրատ Գ-ն: Հայոց թագավոր և Տայքի կուրապաղատի դաշինքն այնքան հզոր էր, որ նրանց առջև տարիներ առաջ նահանջած աբխազաց թագավորն այլևս չէր խառնվում տարածաշրջանի կարևոր

---

[322] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Ե., 1966, էջ 35: Գագիկը որպես Հայոց և Վրաց շահնշահ է հիշատակված նաև Անիի Աբլղարիբ Պահլավունու եկեղեցու արձանագրություններից մեկի մեջ: Տե՛ս նույն տեղում, էջ 48:

[323] Տե՛ս Ասողիկ, էջ 818:

[324] Տե՛ս նույն տեղում, էջ 805:

[325] Տե՛ս նույն տեղում, էջ 818:

իրադարձություններին։ Թերևս ճիշտ է Մ. Լորդկիպանիձեի այն տեսակետը, որ Դավիթ կուրապաղատը, հավանաբար, 988 թ. աբխազաց Բագրատ Գ թագավորին զրկել էր իր ժառանգությունից[326]։ Այնուհետև Դավիթ կուրապաղատն իր տիրույթները կտակեց Բյուզանդական կայսրությանը[327]։

Ակնհայտ է, որ Դավիթ կուրապաղատը, որը սկզբնապես մեծ դեր խաղաց Այսրկովկասի քաղկեդոնականների միավորման գործընթացում, այնուհետև, դեպքերի բերումով, դարձավ այդ գործընթացի հիմնական հակառակորդներից մեկը։ Այդ պատճառով Բագրատ Գ-ն սկսեց մտածել նրանից ազատվելու մասին։

---

[326] Տե՛ս М. Лордкипанидзе, Из истории грузино-византийских взаимоотношений на грани X-XI вв., «Вопросы истории Грузии феодальной эпохи», т. II, Тб., 1972, с. 32։

[327] Տե՛ս Ասողիկ, էջ 822, В. Розен, Император Василий Болгаробойца. Извлечения из летописи Яхъи Антиохийского, СПб., 1883, с. 27։

3.3. Աբխազաց թագավոր Բագրատ Գ-ն և Այսրկովկասի քաղկեդոնականների միասնական թագավորության ձևավորումը

Դատելով «Քարթլիի մատյանի» հաղորդած տեղեկություններից՝ Բագրատ Գ-ի գահակալության սկզբում Աբխազաց թագավորությունում ամեն ինչ չէ, որ հարթ էր ընթանում, և որոշ իշխաններ անհնազանդություն էին դրսևորում նոր թագավորի նկատմամբ: Այդ իսկ պատճառով իր թագավորության առաջին տարիներին Բագրատ Գ-ի գլխավոր հոգսը Աբխազաց թագավորությունում ամրապնդվելն էր[328]:

Հարկ է անդրադառնալ նաև Այսրկովկասի քաղկեդոնականների միասնական թագավորության ձևավորման գործում Բագրատ Գ-ի ձեռնարկած այն քայլերին, որոնց հետազոտողները գրեթե չեն անդրադառնում: «Քարթլիի մատյանը» Բագրատ Գ-ի թագավորելու վերջին շրջանն ամփոփելիս մասնավորապես պատմում է, որ «Բագրատունի քանի թագավորների և կյուրապաղատների մասին խոսեցինք վերը, որոնցից ոմանք թագավորել են Քարթլիում և ոմանք Սամցխե-Տայքում, մինչև այս Բագրատի գահ բարձրանալը: Եվ երբ թագավոր դարձավ, արդեն ոմանք վախճանվել էին, և ոմանք էլ սրա օրոք մահացան: Սրա ժամանակ ուրիշ Բագրատունի այլևս չկար, բացի Բագրատ Արտանուջելու որդիներ Սմբատից և իր եղբայր Գուրգենից, որոնք թագավորում էին Կղարջքում...»[329]: Նրանցից առաջինը մահացավ 1011, իսկ երկրորդը՝ 1012 թ.: Ըստ որում՝ Բագրատ Գ-ն նրանց խաբեությամբ հրավիրեց Փանասկերտ, ձերբակալեց և տեղափոխեց Թմոգվ բերդ (Թմբկաբերդ), որտեղ էլ նրանք կնքեցին իրենց մահկանացուն[330]:

---

[328] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 72:
[329] Տե՛ս նույն տեղում, էջ 75, «Жизнь и известие о Багратидах…», с. 160:
[330] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 75:

Կ. Թումանովը, անդրադառնալով 9-10 դարերի սահմանագլխին գոյատևող Կղարջքի Բագրատունիների ներկայացուցիչներին, եկել է այն հիմնավոր համոզմանը, որ Բագրատ Գ-ից ու նրա հայր Գուրգենից բացի՝ այդ ժամանակ մնացել էին միայն Դավիթ կուրապաղատը և բուն Կղարջքի տերեր Սմբատն ու Գուրգենը[331]: Վերջիններիս ոչնչացումը Բագրատ Գ-ին ազատելու էր հիմնական հակառակորդներից:

Հետևողականորեն վերացնելով Կղարջքի մեծամեծերին և տիրանալով նրանց հողերին՝ Բագրատ Գ-ն, Աբխազաց թագավորությունից բացի, կարողացավ իր տիրույթներում ներառել նաև Վիրքը, Կախքը, Կղարջքը և Տայքի այն հատվածը, որտեղ գտնվում էր Փանասկերտը[332]: Ս. Բարաթովը, խոսելով Բագրատ Գ-ի գործունեության մասին, նշում է, որ դրա վրա բիծ կա, քանի որ նա իր թագավորությունում մասնատվածությունը հաղթահարելու համար դիմել է ծայրահեղ քայլերի՝ կոտորելով Կղարջքի Բագրատունիներին[333]:

Այս համատեքստում խիստ կարևորվում են Արիստակես Լաստիվերտցու, Մատթեոս Ուռհայեցու և Սմբատ Սպարապետի այն տեղեկությունները, թե Դավիթ կուրապաղատին իրականում դավադրաբար սպանել են[334]: Արիստակես Լաստիվերտցին տեղեկացնում է, որ «նոքա (իմա՛ Տայքի ազատները – Ա. Ե.) յաւուր մեծի հինգշաբաթին դեղ մահու խառնեալ ի խորհուրդ պատարագին արբուցին նմա (իմա՛ Դավիթ կուրապաղատին-Ա. Ե.), և հեղձամահ արարեալ զերանելի անձն՝ բարձին ի կենացս, ձանձրացեալ կենօք նորա, վասն առաջիկայ

---

[331] Տե՛ս C. Toumanoff, The Bagratids of Iberia from the eight to the eleventh Century, «Le Museon», vol. 74, 1961, pp. 5-42:

[332] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 75-76:

[333] Տե՛ս «История Грузии князя С. Баратова», тетрадь II-III, История средних веков, С.-Петербург, 1871, с. 43-46 :

[334] Ն. Ադոնցը կարծում է, որ Դավիթ կուրապաղատի սպանության վերաբերյալ տեղեկությունները հիմնազուրկ են: Ցավոք, մեզ չի հասել Ն. Ադոնցի ձեռագրի՝ այդ տեսակետի հիմնավորմանը նվիրված հատվածը: Տե՛ս Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 399, 570, ծանոթ. 9:

խոստմանցն՝ որ ի թագաւորէն ակն ունէին»[335]: Պատմիչը նշում է, որ Տայքի ազատների գլխին թափված արհավիրքները, մասնավորապես այն, որ կայսերական բանակում ծագած բախման ժամանակ կոտորվեցին Տայքի բոլոր ազատները, նրանց վերոհիշյալ հանցագործության պատճառով եղան[336]: Այս տեղեկությանը որոշ մանրամասներ են հավելվում Մատթեոս Ուռհայեցու հիշատակություններից: Ըստ պատմիչի՝ Տայքի իշխանները որոշեցին սպանել նրան, և այդ գործը ստանձնեց Իլարիոն եպիսկոպոսը: Նա սկզբում եկեղեցում թունավորված հաղորդության հաց մատուցեց կուրապաղատին, իսկ հետո գիշերը բարձով խեղդամահ արեց նրան: Պատմիչն այնուհետև պատմում է, որ Բյուզանդիայի Բարսեղ (Վասիլ) Բ կայսրը (976-1025) չարաչար մահով սպանել տվեց Իլարիոնին կատարածի համար, քանի որ Դավիթին հոր նման էր ընդունում[337]: Սմբատ Սպարապետը պատմում է, որ «արք անօրէնք ի տանէն Դաւթի խոհեցան սպանանել զԴաւիթ» և խեղդամահ արեցին նրան Իլարիոն եպիսկոպոսի ձեռքով: Օրեր անց նրանք մահվան դատապարտվեցին կայսեր հրամանով[338]: Վրացական աղբյուրներում Դավիթ կուրապաղատի մահվան այս հանգամանքները բացակայում են: Հ. Բարթիկյանը կարծում է, որ Դավիթ կուրապաղատի սպանության մեջ խառն էին բյուզանդացիները, որոնք ցանկանում էին օր առաջ տիրանալ նրա ժառանգությանը, քանի որ Դավիթ կուրապաղատն իր տիրույթները կտակել էր կայսրությանը: Ըստ հեղինակի՝ Իլարիոն եպիսկոպոսը Բյուզանդիայի գործակալն էր[339]: Բայց քանի որ Ասողիկի տեղեկության համաձայն՝ Դավիթ կուրապա-

---

[335] «Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցւոյ», աշխատասիրությամբ Կ. Յուզբաշյանի, Ե., 1963, էջ 23:

[336] Տե՛ս նույն տեղում:

[337] Տե՛ս Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 37-38:

[338] Տե՛ս «Տարեգիրք Սմբատայ սպարապետի», Փարիզ, 1859, էջ 41:

[339] Տե՛ս Հ. Բարթիկյան, Հայաստանի նվաճումը Բյուզանդական կայսրության կողմից, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, N 2, էջ 86, *նույնի*՝ Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ., «Լրաբեր (հաս. գիտ.)», 1996, N 2, էջ 16-17:

ղատի դեմ հանդես գալու փորձ Բագրատ Գ-ն արդեն կատարել էր, ըստ որում՝ վրացական աղբյուրում ասվում է, որ կուրապաղատին հայտնել էին, որ Բագրատ Գ-ն նրա մահն էր կամենում, ինչպես նաև հավելելով այն, որ Բագրատ Գ-ն հետևողականորեն վերացրեց Կղարջքի Բագրատունի մեծամեծերին, մենք հակված ենք հիմնավոր համարելու Արիստակես Լաստիվերտցու, Մատթեոս Ուռհայեցու և Սմբատ սպարապետի տեղեկությունները: Սակայն նրանցից առաջինը սպանության դրդապատճառը կապում է Բյուզանդիայի կայսեր նկրտումների հետ, իսկ մյուսները՝ ոչ: Բայց, քանի որ, ըստ Մատթեոս Ուռհայեցու և Սմբատ սպարապետի, Բյուզանդիայի կայսրը պատժեց մարդասպաններին[340], կարող ենք համոզված ասել, որ նա անմասն էր սպանությունից, ավելին՝ սպանության պատվիրատուն հավանաբար հենց Բագրատ Գ-ն էր: Այն, որ Դավիթ կուրապաղատն իրականում սպանվել է, և սպանության մեջ խառն է եղել Բագրատ Գ թագավորը, նախկինում էլ քննարկվել է տարբեր հետազոտողների կողմից[341]: Վերևում արդեն անդրադարձանք այն իրողությանը, որ սկզբում հանդես գալով Այսրկովկասի քաղկեդոնականների միավորմանն աջակցողի դերում՝ Դավիթ կուրապաղատը հետո վերածվեց այդ միավորման հակառակորդի: Բագրատ Գ-ն լավ էր հասկանում, որ Այսրկովկասի քաղկեդոնականների միջավայրում գերիշխանության հասնել չէր կարող, քանի դեռ կենդանի էր հայոց թագավորների աջակցությունը վայելող հզոր Դավիթ կուրապաղատը: Ըստ որում՝ խնդիրը ոչ թե Դավիթ կուրապաղատի տիրույթներն էին, որոնք այսպես թե այնպես

---

[340] Մ. Ճանաշյանը կարծում է, որ վերացնելով մարդասպաններին՝ կայսրը ցանկանում էր վերացնել իր արարքի բոլոր հետքերը: Տե՛ս Հ. Մեսրոպ Ճանաշեան, Դաւիթ կիւրապաղատ (պատմական ուսումնասիրութիւն), Վենետիկ, 1972, էջ 56:

[341] Տե՛ս Z. Avalichvili, La Succession du curopalate David d'Ibérie, dynaste de Tao, Secrétariat de la Revue «Byzantion», VIII, Bruxells, 1933, p. 190-191, К. Юзбашян, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., 1988, с. 137, 141, Է. Դանիելյան, Վասիլ Բ-ի 1000 թ. արևելյան արշավանքի նպատակը և երթուղին, «Լրաբեր (հաս. գիտ.)», 1973, N 10, էջ 63 և այլն:

կտակվել էին կայսրությանը, այլ՝ հենց Վիրքում վճռորոշ դերակատարություն ունեցող և մեծ հեղինակություն վայելող կուրապաղատի գոյությունը:

Ի վերջո, ամբողջացնելու համար Բագրատ Գ-ի կողմից Դավիթ կուրապաղատին ոչնչացնելու վերաբերյալ տեսակետի հիմնավորումները հարկ ենք համարում անդրադառնալ մի հույժ կարևոր հարցի: Իշխանի եկեղեցու արձանագրություններից մեկում Դավիթ կուրապաղատի պապ, հայոց Սմբատ Ա արքայի կողմից «վրաց թագավոր» հռչակված Կղարջքի առաջին թագավոր Ատրներսեհի որդի Բագրատ մագիստրոսը, որը վախճանվել է 945 թ., ներկայացված է որպես վրաց թագավոր[342]: Բագրատից հետո «վրաց թագավոր» տիտղոսը, որը, անկասկած, Սմբատ Ա թագավորից Ատրներսեհի ստացած և ժառանգական դարձած տիտղոսն է, նրա որդուն՝ Ատրներսեհին (մահ.՝ 961 թ.), չի անցել, քանի որ վերջինս հիշատակվում է սկզբում որպես մագիստրոս, այնուհետև՝ կուրապաղատ, իսկ կյանքի վերջում՝ վանական[343]: Բագրատ մագիստրոսից հետո «վրաց թագավոր» տիտղոսն անցել է նրա եղբայր Սմբատ կուրապաղատին, իսկ հետո՝ վերջինիս որդի Բագրատ Խևին[344]: Է. Թաղայշվիլիի պնդումը, թե Բագրատ Խևը վրաց թագավոր է դարձել 958 թ.[345], հիմնված է այն իրողության վրա, որ նրա հայր Սմբատ կուրապաղատը վախճանել է հենց այդ թվականին, որից հետո, ըստ Դավիթի որդի Սմբատի՝ Բագրատ Խևին կարգել են վրաց թագավոր[346]: Այսպիսով՝ արձանագրենք, որ Բագրատ մագիստրոսից հետո «վրաց թագավոր» տիտղոսին տիրել է նրա եղբայր Սմբատը, որից այն փոխանցվել է նրա որդի Բագրատ Խևին 958 թ.: Ուստի Տայքի Դավիթ կուրապաղատը, որի պապը եղել է վրաց թագավոր, կարող էր

---

342 Տե՛ս Е. Такайшвили, նշվ. աշխ., էջ 36:
343 Տե՛ս Сумбат Давитис-дзе, с. 36. Տե՛ս նաև Е. Такайшвили, նշվ. աշխ., էջ 36-37:
344 Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 67:
345 Տե՛ս Е. Такайшвили, նշվ. աշխ., էջ 37:
346 Տե՛ս Сумбат Давитис-дзе, с. 36:

և համարվում էր «վրաց թագավոր» տիտղոսի հիմնական հավակնորդներից մեկը, առավել ևս, որ Բագրատ Խևը թշնամացել էր որդու և թոռան դեմ ու համագործակցում էր նրա հետ: Այն, որ Մարուշի որդի Իվանեն, ինչպես տեսանք, Դավիթ կուրապաղատին առաջարկում էր կա՛մ անձամբ իշխել Վիրքում, կա՛մ այն հանձնել Բագրատ Խևի թոռ Բագրատին, արդեն իսկ ցույց է տալիս, որ կուրապաղատը ընկալվում էր որպես վրացական գահի հավակնորդ: Փորձ է կատարվել ցույց տալու, թե Բագրատ Գ-ն «վրաց թագավոր» տիտղոսը ժառանգել է Տայքի Դավիթ կուրապաղատից[347], որը Յահիա Անտիոքցու երկում հանդես է գալիս որպես «վրաց թագավոր»[348]: Սակայն վերջին տեղեկությանը հազիվ թե հավաստի է, քանի որ հայկական և վրացական աղբյուրներում Դավիթը ներկայացվում է հիմնականում որպես Տայքի կամ վրաց կուրապաղատ[349]: Մինչև 994 թ. «վրաց թագավոր» տիտղոսը կրում էր Բագրատ Խևը, իսկ նրանից հետո որդին՝ Բագրատ Գ-ի հայր Գուրգենը[350]: Վերևում տեսանք, որ Բագրատ Խևից հետո հայոց թագավորի և Տայքի կուրապաղատի դաշինքին 998 թ. դրությամբ միացել էր Գուրգենը, որն այդ ժամանակ հիշատակվում է որպես վրաց թագավոր: Վրաց թագավորի դաշինքն այդ տիտղոսի հավակնորդներից մեկի հետ պետք է խիստ անհանգստացներ դրա գլխավոր հավակնորդին՝ Բագրատ Գ-ին, որը, վերացնելով կուրապաղատին, դրանից անմիջապես հետո հակադրության մեջ մտավ հոր հետ: Դատելով վերոհիշյալից, ամենայն հավանականությամբ, Դավիթ կուրապաղատը «վրաց թագավոր» տիտղոսը չի կրել:

---

[347] Տե՛ս "Очерки истории Грузии", т. II, с. 328, Հ. Մանանդյանը կարծում է, որ Դավիթ կուրապաղատը վրաց թագավոր է հռչակվել 988 թ.: Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Բ մասի նյութեր (մարզպանության հաստատումից Հայաստանում մինչև Բագրատունյաց թագավորության անկումը), Ե., 1960, էջ 47:

[348] Տե՛ս В. Розен, նշվ. աշխ., էջ 24, 27:

[349] Տե՛ս Ասողիկ, էջ 805-806, Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 70-72 և այլն:

[350] Տե՛ս Ասողիկ, էջ 818:

«Քարթլիի մատյանը», ներկայացնելով Տայքի Դավիթ կուրապաղատի մահից (1000 թ.) հետո տեղի ունեցածը, հաղորդում է, թե բյուզանդական զորքը ռազմակալեց նրա տիրույթները: Դրանից հետո կայսեր մոտ մեկնեցին աբխազաց թագավոր Բագրատ Գ-ն ու նրա հայր Գուրգենը: Առաջինին կայսրը տվեց կուրապաղատի, իսկ երկրորդին՝ մագիստրոսի տիտղոս՝ հորն ու որդուն թշնամացնելու նպատակով[351]: Այս իրադարձությունը նկարագրում են նաև Ասողիկն ու Արիստակես Լաստիվերտցին՝ Բագրատ Գ-ին ներկայացնելով միայն որպես աբխազաց թագավոր, ինչպես նաև հավելելով, որ Դավիթ կուրապաղատի տիրույթները կայսրը նվաճել է Բագրատ Գ-ին ու Գուրգենին տիտղոսներ շնորհելուց հետո[352]: Հովհաննես Սկիլիցեսը հաղորդում է, որ Բարսեղ Բ կայսրը, երբ հանդիպեց Բագրատ Գ-ին ու ոմն Գեորգիի, վերջինիս հորդորեց բավարարվել իր տիրույթներով և այլոց տիրույթներին չհավակնել[353]: Հ. Բարթիկյանը կարծում է, որ Հովհաննես Սկիլիցեսը շփոթում է, քանի որ Գեորոգին իրականում Բագրատ Գ-ի որդին ու հաջորդն էր, իսկ կայսերը հանդիպելու համար Բագրատ Գ-ի հետ մեկնել էր նրա հայր Գուրգենը: Նա կարծում է, որ խոսքն իրականում վերաբերում է հետագա իրադարձություններին, երբ Բագրատ Գ-ի մահից հետո կայսրությունը փորձեց հետ ստանալ նրան հանձնված տիրույթները[354]: Առավել հավանական է թվում, որ խոսքն իրականում Բագրատ Գ-ի հայր Գուրգենի մասին է, որը կայսրից մագիստրոսի տիտղոս էր ստացել:

Խնդիրն այն է, որ Գուրգենը մեծ հավակնություններ ուներ: Հարկ է այստեղ պարզաբանել մի կարևոր իրողություն ևս, որը լույս է սփռում տեղի ունեցած իրադարձությունների վրա: Փաստորեն՝

---

[351] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 73:

[352] Տե՛ս Ասողիկ, էջ 823, Արիստակես Լաստիվերտցի, էջ 24:

[353] Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Բյուզանդական աղբյուրներ», Գ, Հովհաննես Սկիլիցես, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Ե., 1979, էջ 75:

[354] Տե՛ս նույն տեղում, էջ 320-321, ծանոթ. 312:

Կղարջքի Բագրատունիների այն ճյուղը, որի ներկայացուցիչն էր Բագրատ Խևը, կրում էր «վրաց թագավոր» տիտղոսը, քանի որ համարվում էր Կղարջքի առաջին թագավոր Ատրներսեհի ժառանգորդը: Քանի դեռ կենդանի էր Բագրատ Խևը, նրա որդի Գուրգենը «վրաց թագավոր» չէր կոչվում: Ասողիկը, օրինակ, նրան առաջին անգամ այդ տիտղոսով է կոչում Բագրատ Խևի մահից հետո[355]: Փաստորեն, եթե «վրաց թագավոր» տիտղոսը պատկանում էր Բագրատ Խևին, իսկ նրանից հետո՝ նրա որդի Գուրգենին, ապա աբխազաց թագավոր Բագրատ Գ-ն աբխազաց և վրաց թագավոր կարող էր դառնալ միայն հոր՝ Գուրգենի մահից հետո: Մինչ այդ նա միայն աբխազաց թագավոր էր, ինչպես և հիշատակված է աղբյուրներում: Ի դեպ, վերևում հիշատակված երկու իրադարձությունների ժամանակ հայոց թագավորի և Տայքի կուրապաղատի դաշնակիցը առաջին դեպքում Բագրատ Խևն էր, իսկ երկրորդ դեպքում՝ նրա որդի Գուրգենը: Ստացվում է, որ 994 թ. հետո վրաց թագավոր տիտղոսը կրող Գուրգենը ևս փորձ է կատարել միանալու Գագիկ Ա թագավորի և Դավիթ կուրապաղատի դաշինքին, թեև նախկինում դրան մասնակցում էր նրա հիմնական թշնամու վերածված հայրը՝ Բագրատ Խևը: Թերևս գլխավոր պատճառն այն էր, որ Բագրատ Գ-ն անշեղորեն բռնել էր Կղարջքի Բագրատունիների տիրույթներն իր թագավորությանը միացնելու ճանապարհը, ուստի նրա պապ Բագրատ Խևն ու հայրը՝ Գուրգենը, գոյատևելու համար ունեին միայն մեկ հնարավորություն՝ դաշինքը երկու հզոր տիրակալների հետ: Վերջին իրողության ապացույցն է այն, որ, երբ Դավիթ կուրապաղատի մահից հետո Բագրատ Գ-ն ու նրա հայր Գուրգենը մեկնեցին կայսեր հետ հանդիպման, վերջինս Բագրատ Գ-ին շնորհեց կուրապաղատի, իսկ Գուրգենին՝ մագիստրոսի տիտղոս[356]: Դրանից խիստ դժգոհ մնաց վրաց թագավոր Գուրգենը, և այդ իրողությունն իր արձագանքն է գտել վրացական աղբյուրում: Ըստ «Քարթլիի մա-

[355] Տե՛ս Ասողիկ, էջ 818:
[356] Տե՛ս նույն տեղում, էջ 824-825:

տյանի»՝ կայսրը հորը և որդուն տարբեր տիտղոսներ է շնորհել՝ նրանց թշնամացնելու նպատակով, թեև հավելվում է, որ կայսրն իր նպատակին չի հասել[357]: Այդ մասին մանրամասնություններ է հաղորդում Ասողիկը: Ըստ պատմիչի՝ 1001 թ. վրաց թագավոր Գուրգենը, իր համար անարգանք համարելով մագիստրոսի տիտղոսը, ներխուժում է Տայք և տիրում նախկինում Դավիթ կուրապաղատին պատկանած, իսկ այնուհետև՝ Բյուզանդիային անցած հողերին: Միայն Ուղթիսը (Օլթի) և մի քանի բերդեր նա գրավել չի կարողանում[358]: Առաջանում է երկու հարց: Ինչո՞ւ է մագիստրոսի տիտղոսից դժգոհ Գուրգենը ներխուժել Տայք, և ինչո՞ւ պետք է թշնամանային Բագրատ Գ-ն ու նրա հայր Գուրգենը կայսեր կողմից ստացված տիտղոսների պատճառով: Անկասկած, խնդիրն այստեղ այն էր, թե ում էին անցնելու Դավիթ կուրապաղատի այն տիրույթները, որոնք Բյուզանդիան ի վերջո զիջեց Բագրատ Գ-ին և, ինչպես կտեսնենք, հետ պահանջեց նրա որդի Գեորգի Ա թագավորից (914-927): Հոր և որդու թշնամանալու, ինչպես նաև Գուրգենի՝ Տայք ներխուժելու պատճառն այն էր, որ կուրապաղատի տիտղոսը հանձնելով Բագրատ Գ-ին՝ կայսրը, փաստորեն, ճանաչում էր նրա իրավունքները Դավիթ կուրապաղատի տիրույթների մի զգալի մասի վրա: Սակայն Տայք ներխուժած Գուրգենը որոշ հաջողության, թերևս, հասել է, որը կարելի է բխեցնել Ասողիկի հետագա տեղեկություններից: Նա հաղորդում է, որ կայսեր ուղարկած զորավարը դիմում է Գուրգենին՝ «որպէս թէ առնել թագաւորին զկամս նորա, զոր խնդրիցէ»[359], այսինքն՝ կարծես թե համաձայնելով նրան հանձնել այն, ինչ պահանջում էր: Կայսեր զորավարն ու Գուրգենը հանդիպեցին Մեծրաց լեռների շրջանում գտնվող Սուրբ Աստվածածին գյուղում, խաղաղություն կնքեցին ու բաժանվեցին[360]: Դատելով Արիստակես

---

[357] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 73:
[358] Տե՛ս Ասողիկ, էջ 824-825:
[359] Նույն տեղում, էջ 825:
[360] Տե՛ս նույն տեղում:

Լաստիվերտցու մի հաղորդումից՝ նախկինում Դավիթ կուրապաղատին պատկանող երեք բերդ անցել են Գուրգենին։ Ըստ պատմիչի՝ կայսրը «երիս բերդս իւրեանց դաստակերտօքն խնդրէր ի Գէորգէ (իմա՛ Բագրատ Գ-ի որդի Գեորգի – Ա. Ե.), զոր Գուրգինայ տարեալ էր ի բաժնէն կիւրապաղատէն»՝ ավելացնելով, թե «զոր քո ո՛չ է հայրենի ժառանգութիւն, թո՛ղ, և կա՛ց խաղաղութեամբ ի քո բաժինդ»[361]։ Այս իրադարձությունների վերաբերյալ վրացական աղբյուրները լռում են։ Ամենայն հավանականությամբ Գուրգենին հաջողվել որոշ տիրույթներ ձեռք բերել Դավիթ կուրապաղատի ժառանգությունից, որոնք նրա մահից հետո անցել են որդուն, իսկ այնուհետև՝ թոռանը։ Դատելով այն իրողությունից, որ Գուրգենը Ճակք գավառի Իշխանի եկեղեցու կողքին փոքր եկեղեցի է կառուցել 1006 թ.[362], կարելի է եզրակացնել, որ նրա տիրույթները գտնվել են հենց Ճակք գավառում կամ դրա հարևանությամբ։ Դավթի որդի Սմբատի տեղեկություններով՝ հենց Գուրգենի մահից հետո է, որ Բագրատ Գ-ն տիրեց Տայքին[363]։

Ս. Ջանաշիան գտնում է, որ կուրապաղատի տիտղոսը, որ ստացավ Բագրատ Գ-ն, նախկինում Տայքի Բագրատունիների մենաշնորհն էր, և այժմ Բագրատ Գ-ին հաջողվեց «աբխազաց և վրաց թագավոր» տիտղոսին զումարել նաև Տայքի կուրապաղատի տիտղոսը[364]։ Դա հնարավորություն էր տալիս հավակնելու կուրապաղատի ընդարձակ տիրույթներին, որով կաճեր նրա թագավորության ներուժը։ Դատելով Արիստակես Լաստիվերտցու տեղեկություններից՝ մինչև Տայքի ռազմակալումը բյուզանդական զորքի կողմից կայսրը Դավիթ կուրապա-

---

[361] Արիստակես Լաստիվերտցի, էջ 25։

[362] Տե՛ս Е. Такайшвили, նշվ. աշխ., էջ 42։

[363] Տե՛ս Сумбат Давитис-дзе, с. 37։

[364] Տե՛ս Ս. Ջանաշիա, Կոստանդին Ծիրանածինի վկայությունները Տաո-Կլարջեթիի Բագրատիոնիների մասին, «Թբիլիսիի պետական համալսարանի աշխատություններ», պատմություն, հնագիտություն, արվեստագիտություն, ազգագրություն, 18, 1941, էջ 79-85 (վրացերեն)։

ղատի տիրույթների մի մասը նվիրել էր Բագրատ Գ-ին: Դրանք կայսրը հետ պահանջեց նրա որդի և հաջորդ Գեորգի Ա թագավորից[365]:

Ի. Ջավախիշվիլին կարծում է, որ Դավիթ կուրապաղատի մահից հետո բյուզանդացիները տիրեցին նրա գրեթե բոլոր տիրույթներին[366]: Այդ հաստատում է նաև Ասողիկի տեղեկությունը, ըստ որի՝ բյուզանդացիները գրավեցին Դավիթ կուրապաղատի բոլոր հողերը, իսկ մեծամեծերին տեղափոխեցին Բյուզանդիա[367]: Սակայն առավել ճիշտ է այն տեսակետը, որ կուրապաղատի ոչ բոլոր տիրույթներն են անցել կայսրությանը, այլ դրանց մի մասն ամենայն հավանականությամբ անցել է Բագրատ Գ-ին[368]: «Քարթլիի մատյանը», խոսելով այն մասին, որ Բագրատ Գ-ի մահից հետո կայսրը ցանկացավ տիրել այն երկրամասերին, որոնք նախկինում պատկանում էին Դավիթ կուրապաղատին և անցել էին Բագրատ Գ-ին, դրանց թվում, Տայքի հարավային հատվածից բացի, հիշատակում է Տայքի հյուսիսային Կող և Գուգարքի Արտահան ու Ջավախք գավառները[369]: Դավթի որդի Սմբատը դրանց հավելում է նաև Գուգարքի Կղարջք գավառի մաս կազմող Շավշքը[370]: Այն, որ հիշյալ տեղեկությունները համապատասխանում են իրականությանը, հաստատվում է Ասողիկի և «Քարթլիի մատյանի» այն հաղորդումներով, որ Դավիթ կուրապաղատը հայոց Սմբատ Բ թագավորի հետ միասին Բագրատ Գ-ի դեմ պատերազմելու համար շարժվեց դեպի Ջավախք և կանգ առավ Դլիվեկ (Դլիվ) գյուղում[371], այսինքն՝ հա-

---

[365] Տե՛ս Արիստակես Լաստիվերտցի, էջ 25:
[366] Տե՛ս Ի. Ջավախիշվիլի, նշվ. աշխ., էջ 123-133:
[367] Տե՛ս Ասողիկ, էջ 824:
[368] Տե՛ս E. Honigmann, Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363, bis 1071, Bruxelles, 1935, p. 165, Ի. Ջավախիշվիլի, նշվ. աշխ., էջ 61, Сумбат Давитис-дзе, с. 57, прим. 132, В. Арутюнова, Из истории северо-восточных пограничных областей Византийской империи в XI веке, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, N 1, էջ 92-95:
[369] Տե՛ս Քարթլիի մատյան, մաս Բ, թարգմ. Վ. Մարտիրոսյանի և Հ. Մկրտումյանի, «Լրաբեր (հաս. գիտ.)», 1989, N 11, էջ 81:
[370] Տե՛ս Сумбат Давитис-дзе, с. 40:
[371] Տե՛ս Ասողիկ, էջ 806, Քարթլիի մատյան, Ա, էջ 73:

վանաբար, իր տիրույթների սահմանին։ Մյուս կողմից, երբ բյուզանդական զորքը Բագրատ Գ-ի մահից հետո արշավեց նրա հաջորդի՝ Գեորգի Ա թագավորի դեմ, գրավեց հենց Կողը, Արտահանն ու Ջավախքը[372]։ Մինչ այդ, կայսրը Գեորգի Ա-ին առաջարկել էր, որ վերջինս հեռանա այն տիրույթներից, որոնք պատկանել էին Դավիթ կուրապաղատին, իսկ վերջինիս մահից հետո իր կողմից հանձնվել էին Բագրատ Գ-ին[373]։ Այսպիսով՝ կարելի է վստահորեն ասել, որ Դավիթ կուրապաղատին էին պատկանում, Տայքից բացի, Գուգարքի Արտահան ու Ջավախք գավառների հատվածներ, ինչպես նաև Շավշքը։ Նման ընդարձակ տարածքների և ներուժի տիրապետումով էլ հիմնավորվում է Դավիթ կուրապաղատի մեծ ազդեցությունն ու հեղինակությունը տարածաշրջանում։

Բագրատ Գ-ի հայր Գուրգենի և պապ Բագրատ Խնի տիրույթները, փաստորեն, գտնվում էին Տայքից հյուսիս և Արտահանից հյուսիս-արևելք, այսինքն՝ Կղարջքում և Սամցխեում։ Ինչպես տեսանք, արդեն 1011-1012 թթ. դրությամբ Բագրատ Գ-ի տիրույթների մեջ էր մտնում Տայքի Ճակք գավառում գտնվող Փանասկերտ բերդավանը, որից կարելի է բխեցնել, որ Դավիթ կուրապաղատի՝ Տայքի տիրույթների հյուսիսային հատվածը, այն, որ վրացական աղբյուրներում կոչվում է Հայսկույս (Ամիեր) Տայք[374], անցել էր Բագրատ Գ-ին։ Իսկ մյուս հատվածը՝ Հայնկույս (Իմիեր) Տայքը կամ Տայքի հարավային մասը, որը Հայսկույս Տայքից բաժանված էր Ուղթիս (Օլթի) գետով[375], ըստ «Քարթլիի մատյանի»՝ նվաճվեց Բյուզանդիայի կողմից[376]։ Ի դեպ, հարկ է նշել, որ Փանասկերտը, հավանաբար, որոշ ժամանակ պատկանել է

---

[372] Տե՛ս Քարթլիի մատյան, Բ, էջ 80-81։
[373] Տե՛ս Արիստակես Լաստիվերտցի, էջ 25։
[374] Տե՛ս Ի. Ջավախիշվիլի, նշվ. աշխ., էջ 61։
[375] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, ծանոթ. 101։
[376] Տե՛ս նույն տեղում, էջ 73։

994 թ. վախճանված Բագրատ Խնին[377]: Ըստ երևույթին, Բագրատ Գ-ի հայր Գուրգենի տիրույթների հենց այդ հատվածն է, որ խլել էր Բագրատ Խնը, և որի պատճառով Բագրատ Գ-ն արշավանքի էր դուրս եկել Դավիթ կուրապաղատի դեմ: Այն, անկասկած, նրա մահից հետո անցավ Դավիթ կուրապաղատին, իսկ վերջինիս մահից հետո՝ դարձյալ աբխազաց Բագրատ Գ-ի հայր, «վրաց թագավոր» տիտղոսը ժառանգած Գուրգենին, որն այնտեղ եկեղեցի է կառուցել 1006 թ.: Կարելի է կարծել, որ իր տիրույթները վերադարձնելու համար է, որ Դավիթ կուրապաղատի մահից հետո Գուրգենը ներխուժել է Տայք: 1008 թ.՝ Գուրգենի մահից հետո, նրա տիրույթները Տայքում անցել են Բագրատ Գ թագավորին[378]: Արիստակես Լաստիվերտցին պատմում է այն մասին, որ Բագրատ Գ-ին հաջորդած Գեորգի թագավորին Բյուզանդիայի կայսրը ասում է. «Զոր ի Կիւրապաղատին (իմա՛ Դավիթ կուրապաղատ – Ա. Ե.) բաժնէ ետու հօր քում ի պարգև՝ թո՛ղ, և քո հայրենեացն միայն լեր իշխան»[379]: Այսինքն, երբ Դավիթ կուրապաղատի մահից հետո Բագրատ Գ-ն իր հայր Գուրգենի հետ այցելեց կայսրին և ստացավ կուրապաղատի տիտղոս, ստացավ նաև որոշ հատվածներ Դավիթ կուրապաղատի տիրույթներից, մասնավորապես Կող, Շավշք, Արտահան ու Ջավախք գավառները: Երբ նրա հայր Գուրգենը ներխուժեց Տայք ու տիրեց վերջինիս զգալի մասին, կայսրը նրան զիջեց որոշ տարածքներ, որոնց թվում, ամենայն հավանականությամբ, Ճակք գավառը՝ Փանասկերտ բերդավանով: Գուրգենի մահից հետո Ճակք գավառն անցավ Բագրատ Գ-ին, որն էլ, ի վերջո, վախճանվեց Փանասկերտում 1014 թ.[380]:

Բագրատ Գ-ի հայր Գուրգենը մահացավ 1008 թ., որից հետո, ըստ «Քարթլիի մատյանի», Բագրատ Գ-ն արդեն հանդես է գալիս որպես

---

[377] Տե՛ս "Очерки истории Грузии", т. II, с. 327:
[378] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 73:
[379] Արիստակես Լաստիվերտցի, էջ 25:
[380] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 76, Сумбат Давитис-дзе, с. 38:

«աբխազաց և վրաց» թագավոր[381]: Բագրատ Գ-ն տիրեց նրա ժառանգությանը[382], իսկ 1008-1010 թթ.[383] ձեռնարկեց Այսրկովկասի քաղկեդոնականների միավորման գործընթացը՝ մեկը մյուսի հետևից տիրելով Վիրքին, Կղարջքին, Կախքին և հավակնելով Հերքին[384]:

Ուստի Վրաց Բագրատունիների կամ Այսրկովկասի քաղկեդոնականների միասնական թագավորության հիմնադրումը պետք է հաշվարկել հենց 1008-1010 թվականներից[385], քանի որ Բագրատ Գ-ի հայր Գուրգենը վախճանվել է 1008 թ., իսկ նա կրում էր «վրաց թագավոր» և «արքայից արքա» տիտղոսներն[386] ու տիրում Կղարջքի կուրապաղատության և Տայքի հողերի մի մասին, որոնք միայն նրա մահից հետո անցան որդուն[387]:

Հարկ է անդրադառնալ նաև նորաստեղծ թագավորության անվանման խնդրին: Վերը տեսանք, որ գիտական գրականության մեջ այն հիմնականում կոչվել է համավրացական և կամ աբխազավրացական թագավորություն: Սույն հետազոտության մեջ մենք այն պայմանականորեն անվանեցինք Այսրկովկասի քաղկեդոնականների թագավորություն, որը, մեր կարծիքով, առավել բնորոշիչ էր այդ թագավորության համար: Խնդիրն այն է, որ «Համավրացական թագավորություն» անվանումը խիստ թեական է, քանի որ աբխազական և հայկա-

---

[381] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 73:

[382] Տե՛ս M. Brosset, Histoire de la Georgie, I, St.-Petersbourg, 1849, p. 297, В. Степаненко, Политическая обстановка в Закавказье в первой половине XI в., с. 126 :

[383] Տե՛ս Թ. Պապուաշվիլի, Հերեթի պատմության հարցեր, Թբ., 1970, էջ 215 (վրացերեն):

[384] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 73-74, Տե՛ս Сумбат Давитис-дзе, с. 57, прим. 139. 1010 թ. Կախքում ավարտվեց քորեպիսկոպոս-իշխանների ժամանակաշրջանը: Տե՛ս Г. Мкртумян, Грузинское феодальное княжество Кахетии в VIII-XI вв. и его взаимоотношения с Арменией, Е., 1983, с. 107:

[385] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, ծանոթ. 96: Տե՛ս նաև Ի. Ջավախիշվիլի, նշվ. աշխ., էջ 129, C. Toumanoff, Armenia and Georgia, The Cambridge Medieval History, Vol. IV, The Byzantine Empire, part I, Cambridge, 1966, p. 618, Д. Мусхелишвили, Из исторической географии Восточной Грузии (Шаки и Гогарена), Тб., 1982, с. 41:

[386] Տե՛ս Ասողիկ, էջ 818, Քարթլիի մատյան, Ա, էջ 71:

[387] Տե՛ս З. Анчабадзе, նշվ. աշխ., էջ 169:

կան տարածքների առկայությունն այդ թագավորության մեջ վերջինիս զրկում էր էթնիկ առումով զուտ վրացական բովանդակությունից: Այդ թագավորության ձևավորման գործընթացը ևս բխում էր ոչ թե Վիրքից, այլ գլխավորապես Կղարջքի Բագրատունիներից: Գործընթացի առաջին փուլում հայոց թագավորի գերիշխանությունը ճանաչող Կղարջքի Բագրատունիների ներկայացուցիչ Ատրներսեհը 899 թ. հռչակվեց որպես «վրաց թագավոր», այնուհետև՝ երկրորդ փուլում, Վիրքը հայտնվեց Աբխազաց թագավորության գերիշխանության ներքո: Իրավիճակը հանգուցալուծվեց, երբ վերոհիշյալ գործընթացի երրորդ փուլում Տայքի կուրապաղատ Դավիթը և հայոց թագավոր Սմբատ Բ-ն համատեղ ուժերով Բագրատ Բագրատունուն բազմեցրեցին աբխազաց գահին: Դրանից հետո՝ արդեն չորրորդ փուլում, Բագրատ Գ թագավորի կողմից Աբխազաց թագավորության ներուժը ներդրվեց Այսրկովկասի քաղկեդոնական երկրների ու երկրամասերի միավորման գործընթացում: Մինչև 1008 թ. «Աբխազաց, Քարթլիի (իմա՛ վրաց – Ա. Ե.) և Տայքի գահաժառանգ» հռչակված Բագրատ Գ-ն զուտ աբխազաց թագավոր էր և միայն Դավիթ կուրապաղատի և իր հայր Գուգենի մահից հետո, իր թագավորությանը կցելով նրանց տիրույթների զգալի մասը և ժառանգելով «վրաց թագավոր» տիտղոսը, թագավորությանը հաղորդեց այլ բնույթ: Դատելով այն իրողությունից, որ թագավորության կազմում, բացի աբխազական հողերից, ընդգրկված էին նաև Վիրքը, ինչպես նաև Գուգարքի ու Տայքի որոշ հատվածներ, մենք գործ ունենք մի միջավայրի հետ, որը նաև զուտ աբխազավրացական դիմագծով ներկայացնելն անհնար է: Ավելին, թագավորության ձևավորողները ծագում էին այդ միջավայրի երրորդ բաղադրիչից՝ Կղարջքից: Միակ ընդհանրությունը Բագրատ Գ-ի թագավորության երեք բաղադրիչների միջև ընդհանուր դավանանքի՝ քաղկեդոնականության առկայությունն էր: Սակայն, եթե Վիրքում ու Կղարջքում, դեռևս Գրիգոր Խանձթեցու գործունեության շրջանից սկսած, ձևավորվել էր եկեղեցական-դավանական ընդհանրություն, Աբխազաց թագավորության եկեղեցին նույնիսկ 10-րդ դարում և 11-րդ դարի

սկզբին շարունակում էր մնալ Կոստանդնուպոլսի պատրիարքի ուղղակի ենթակայության ներքո[388]: Այդ իսկ պատճառով Բագրատ Գ-ն շուտով սկսում է եպիսկոպոսություններ հիմնել Աբխազաց թագավորության բուն տարածքում, որպեսզի փոփոխի իրավիճակը՝ միասնական դիմագիծ հաղորդելով իր թագավորությանը եկեղեցական-դավանական առումով: 10-րդ դարի վերջին տարիներին նա կառուցել է տալիս Բեդիայի կաթողիկե եկեղեցին և այն դարձնում եպիսկոպոսարան, իսկ այնուհետև՝ 1003 թ., հիմնում է Քութայիսի եկեղեցին[389]: Այդ շրջանից սկսած՝ աբխազաց եկեղեցին աստիճանաբար սկսում է ենթարկվել վրացական եկեղեցուն[390]: Ի դեպ, փորձ է կատարվել ցույց տալու, թե իբր այդ իրադարձությունից հետո «վրացի» հասկացության սահմաններն ընդլայնվում են՝ էթնիկ բովանդակությունից բացի՝ ձեռք բերելով նաև դավանանքային նշանակություն, ուստի Այսրկովկասում և նաև Կովկասում որպես վրացի սկսում են ընկալվել բոլոր քաղկեդոնականները[391]: Այդ վարկածի հիմնական նպատակը Բագրատ Գ-ի հիմնած թագավորության վերաբերյալ վրացական պատմագիտության մեջ օգտագործվող «Համավրացական թագավորություն» անվանման հիմնավորումն էր: Հայտնի է, որ հայկական իրականության մեջ, իրոք, երբեմն վրացի էին կոչվում վրացադավանները՝ անկախ էթնիկ պատկանելիությունից[392], սակայն հայկական և նաև վրացական աղբյուրներում, ինչպես տեսանք, Աբխազաց թագավորության և

---

[388] Տե՛ս Ի. Ջավախիշվիլի, նշվ. աշխ., էջ 120, Կ. Կեկելիձե, Էտյուդներ հին վրացական գրականության պատմության, հ. IV, Թբ., 1956, էջ 357 (վրացերեն):

[389] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 74-75:

[390] Տե՛ս Ի. Ջավախիշվիլի, նշվ. աշխ., էջ 119-120:

[391] Տե՛ս Ն. Բերձենիշվիլի, Ռուսաստանին Վրաստանի միացման պատմական նշանակության շուրջ, «Մնատոբի», N 6, 1954, էջ 121 (վրացերեն):

[392] Տե՛ս Պ. Մուրադյան, Գրիգոր Բակուրյանի «Սահմանք»-ի հունարեն և վրացերեն խմբագրությունների գնահատման հարցի շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, N 1, էջ 103, Վ. Հարությունովա, Գրիգոր Պակուրյանը (Բակուրյանը) և Պետրիծոնում վանք հիմնելու նրա նպատակները, «Մառը և հայագիտության հարցերը», Ե., 1968, էջ 170-173 և այլն:

նրա ներկայացուցիչների վերաբերյալ «վրաց աշխարհ» կամ «վրացի» անվանումները չեն կիրառվել՝ «վրաց» և «աբխազաց» աշխարհների միջև պահպանելով հստակ տարանջատում:

Այսպիսով՝ Բագրատ Գ-ի թագավորությունը, առաջին հերթին, 899 թ. «վրաց թագավոր» հռչակված Բագրատունիների թագավորությունն էր: Վերջիններիս ներկայացուցիչը դարձել էր աբխազաց թագավոր, իսկ հետո՝ տիրել Վիրքին, Կախքին ու Կղարջքի կուրապաղատության որոշ հատվածների, այսինքն՝ Այսրկովկասի քաղկեդոնական երկրներին ու երկրամասերին: 1008 թ. հետո Բագրատ Գ-ի թագավորությունն Այսրկովկասում ձեռք էր բերել բացառապես քաղկեդոնական երկրներն ու երկրամասերը միավորող պետության բնույթ: Ուստի Բագրատ Գ-ի թագավորության բնորոշումը, ելնելով ձևավորման գործընթացի յուրահատկությունից և կազմի դավանանքային ընդհանրությունից, պետք է հիմնված լինի վերոհիշյալի վրա: Լավագույն բնորոշիչը, որը բխում է կատարված քննությունից, «Այսրկովկասի քաղկեդոնականների թագավորություն» անվանումն է, որին որպես հոմանիշ կարելի է կիրառել «Աբխազավրացական թագավորություն», «Բագրատունիների վրացական թագավորություն», «Վրաց Բագրատունիների թագավորություն» և կամ «Բագրատունիների այսրկովկասյան թագավորություն» անվանումները, քանի որ գոյություն ուներ նաև Բագրատունիների գլխավոր՝ Հայոց թագավորությունը:

Վերջում հարկ ենք համարում դարձյալ անդրադառնալ Բագրատ Գ-ի հարաբերություններին Հայոց թագավորության հետ, առավել ևս, որ այնտեղ թագավորում էր տարածաշրջանի հզորագույն տիրակալներից մեկը՝ Հայոց և Վրաց շահնշահ Գագիկ Ա-ն: 10-րդ դարի վերջին Հայոց թագավորության և Տայքի կուրապաղատության դաշինքը տարածաշրջանում տեղի ունեցող կարևոր իրադարձություններից դուրս էր մղել Բագրատ Գ-ին: Այժմ, երբ արդեն չկար Դավիթ կուրապաղատը, իրավիճակը փոխվեց: Գանձակի ամիրա Փադլունը կարողացել էր ծանր վիճակի մեջ դնել Կախքի և Հերքի իշխաններին, որի պատճա-

ռով Բագրատ Գ-ն մոտ 1010 թ. արշավանքի դուրս եկավ դեպի Գանձակ։ Նա օգնության խնդրանքով դիմեց Հայոց և Վրաց շահնշահ Գագիկ Ա-ին։ Վերջինս հավաքեց ողջ զորքն ու շարժվեց Փադլունի դեմ։ Հայ-աբխազական միացյալ բանակը սարսափեցրեց Փադլունին, որը հաշտություն խնդրեց[393]։ Այդ իրողությունը ցույց է տալիս, որ սեփական տիրույթները պահպանելու և թշնամիներին հակահարված հասցնելու համար Բագրատ Գ-ն դեռևս կարիք ուներ Հայոց թագավորության աջակցության։

Գագիկ Ա-ի մահից հետո Հայոց թագավորությունը տրոհվեց և զգալիորեն թուլացավ։ Մինչդեռ Այսրկովկասում նորանոր երկրամասերի տիրացած Բագրատ Գ-ն տարիների ընթացքում բազմապատկեց իր հնարավորությունները և, ի վերջո, կարողացավ կուտակել բավարար տնտեսական ու մարդկային ներուժ՝ թե՛ իր թագավորության պաշտպանության և թե՛ թշնամիներին հակահարվածելու համար։ Այսրկովկասում փոխվեց ուժերի հարաբերակցությունը։ Այնուհետև՝ արդեն Բագրատ Գ-ից և Գագիկ Ա-ից հետո, Այսրկովկասի քաղկեդոնականների թագավորությունն էր, որ դառնում էր գլխավոր դերակատարը Հայոց թագավորության փոխարեն։

[393] Տե՛ս Քարթլիի մատյան, Ա, էջ 74։

ՎԵՐՋԱԲԱՆ

Վրաց Բագրատունիների թագավորության ձևավորումը ունեցավ դժվարին ընթացք: Թագավորության ձևավորման առաջին փուլում՝ 774-775 թթ. ապստամբությունից հետո, Կղարջքում հաստատված Բագրատունիները սկսեցին աստիճանաբար ինտեգրվել նոր՝ մեծ մասամբ հայերով բնակեցված, բայց քաղկեդոնական միջավայրում: Սկզբում նրանք տիրում էին միայն Կղարջքին ու հարևան որոշ շրջանների՝ Վիրքից բաժանված լինելով մի կողմից Սամցխեով, իսկ մյուս կողմից՝ Արտահանով:

Ինչ վերաբերում է Վիրքին, ապա այն 9-րդ դարում գտնվում էր Տփղիսի ամիրայության կազմում: Սկսած Աշոտ կուրապաղատից՝ Կղարջքի Բագրատունիները փորձեր էին կատարում տարածվելու դեպի Տփղիս՝ երբեմն Շիրակի Բագրատունիների, երբեմն արաբների, իսկ երբեմն էլ՝ Բյուզանդիայի օգնությամբ: Սակայն 9-րդ դարում նրանց գրեթե չէր հաջողվել սեփական տիրույթներն ընդարձակել դեպի արևելք, ուստի քաղաքական իշխանության տարածման հարցում կրած անհաջողությունները Կղարջքի Բագրատունիներին մղում էր դեպի Կղարջքի հոգևոր իշխանության տարածման քաղաքականությունը, ինչը 9-րդ դարում թեև զգալի հաջողություններ չարձանագրեց, սակայն եղավ ավելի արդյունավետ:

9-րդ դարի առաջին կեսին՝ Աշոտ կուրապաղատի և նրա որդի Բագարատի օրոք, Կղարջքի քաղկեդոնականների միջավայրում սկսում է ձևավորվել «Վիրք/Վրաստան» հասկացության նոր՝ դավանաբանական էությունը, որը հիմք է դառնում վրացական թագավորության ձևավորման համար: Ինչ վերաբերում է Կղարջքի Բագրատունիներին «վրաց իշխան/թագավոր» անվանմանը, ապա այն նրանք ստացել են Շիրակի Բագրատունիներից: Այդ անվանումը Վիրքի հետ մինչև 9-րդ դարի կեսերը որևէ առնչություն չուներ և պայմանավորված էր նրանց՝ Կղարջքի և հարևան երկրամասերի վրացադավան

բնակչության շրջանում իշխելու իրողությամբ: Փաստորեն՝ Կղարջքում ձևավորված «Վիրք/Վրաստան» հասկացությունն ուներ հոգևորկրոնական բովանդակություն և ընդգրկում էր վրացադավան շրջանները:

Հայոց Սմբատ Ա թագավորի մահից հետո Այսրկովկասում զգալի դերակատարություն է ձեռք բերում Աբխազաց թագավորությունը, որի գահակալները նույնիսկ ձեռնոց են նետում հայոց Աբաս թագավորին: Չնայած պարտությանը՝ Աբխազաց թագավորությունն անշեղորեն շարունակում է Վիրքին տիրանալու քաղաքականությունը: Աբաս թագավորի օրոք այսրկովկասյան գործերում Հայոց թագավորությունը էական քայլեր չի ձեռնարկում, որը նպաստում է աբխազաց թագավորների նկրտումների իրականացմանը: Հայոց թագավորները թեև դեռևս Աշոտ Բ-ի ժամանակներից, երբ նա վերականգնեց Սմբատ Ա-ի տիրապետության սահմանները, կրում էին շահնշահ կամ թագավորների թագավոր տիտղոսը, սակայն 10-րդ դարի երկրորդ կեսից բավարարվում էին՝ Այսրկովկասում գործունեություն ծավալող այս կամ այն գործիչին աջակցելով: Ի վերջո հայոց թագավոր Սմբատ Բ-ն և Տայքի տիրակալ Դավիթ կուրապաղատը աբխազաց գահին են բազմեցնում Կղարջքի Բագրատունիներից Բագրատ Բագրատունուն, որը մոր կողմից սերում էր աբխազաց թագավորների տոհմից:

Տիրանալով աբխազաց գահին՝ Բագրատ Գ-ն սկզբում որդեգրում է այդ գահին հիմնավորապես հաստատվելու քաղաքականություն, իսկ այնուհետև փորձում է տիրել Վիրքին ու Կախքին՝ ոտնձգություն կատարելով նույնիսկ Տայքի կուրապաղատության դեմ:

Այսրկովկասի քաղկեդոնականներին միավորելու ճանապարհին Բագրատ Գ-ն հետևում է «նպատակն արդարացնում է միջոցները» սկզբունքին՝ ճանապարհից հեռացնելով բոլոր հնարավոր և անհնարին հակառակորդներին, այդ թվում՝ Կղարջքի տերերին և Տայքի Դավիթ կուրապաղատին: Հաջողության հասնելով նման գործելաոճում՝ նա 11-րդ դարի սկզբին դաշնակցում է Հայոց և Վրաց շահնշահ Գագիկ

Ա-ի հետ, որի օրոք վերականգնվել էր Հայոց թագավորության հզորությունը։ Վերջինիս մասնատումը և թուլացումը Գագիկ Ա-ի մահից հետո հնարավորություն տվեց Բագրատունիների վրացական թագավորության գահակալներին՝ կարևոր դերակատարություն ստանձնելու տարածաշրջանում։

Summary

At the end of VIII century after suppression of the antiarabian revolt of Armenians in 774-775 Bagratunies participating in it settled in Kghardjk the western area of province of Gugark of the Great Armenia. Having appeared in mostly armenian-chalkedonian environment, Bagratids have gradually integrated in it to which promoted beginning during rule of Curopalate Ashot Bagratid (the beginning of IX century) extensive church reconstruction and building in Kgharjk.

During the first half of IX century curopalates of Kgharjk tried to extend their political domination to Georgia, but failed. Then has been made the state idea of Georgian kingdom which proclaimed that: "**Georgia includes all lands where church service and all prayers are creating in Georgian language**". After that the spiritual power of "the Prince of Georgians (from 899 - "King of Georgians")" has gradually extended to the east to Georgia (Kartli).

At the end of IX century the Curopalacity of Kgharjk was a part of the Kingdom of Armenian Bagratids, and Atrnerseh Bagratid the Curopalate of Kgarjk at the end of the century obtained the title of "the King of Georgians" from Armenian king Smbat I, i.e. of population of georgian (chalkedonian) confession.

In the 9th century, the tendency of the spread of superiority of the Curopalacity of Kgharjk over Georgia was emphasized.

The main goal of curopalate of Kgharjk Atrnerseh Bagratuni was to achieve the dominant position among the South Caucasus Chalcedonians with the perspective to include them in a joint kingdom led by the Kgharjian Bagratunis. At the same time Atrnerseh tried to seize the throne of Armenian King Smbat I, but failed.

In the last years of Smbat I, the weakening of the Armenian kingdom led to broad perspectives for the Kingdom of Abkhazia and the Curopalacity of Kgharjk. The Abkhazats kingdom, which was far from the dynamic

events of those days, became gradually stronger and took over Georgia after a couple of years.

During the reign of Atrnerseh in the Curopalacity of Kgharjk, there was one more reputable prince by the name of Gurgen Bagratuni, who successfully withstood the Abkhazian king, conquered the lands neighboring his principality also spread the Chalcedonian faith in the Albanian kingdom.

In the second half of the X century the Armenian kingdom of Bagratunis gradually separated to some lesser kingdoms and lost the control over Transcaucasus countries. That was a great opportunity for the Abkhazian kingdom, which tried to unit all chalcedonian provinces in Transcaucasus. Abkhazian king Georgi (929-957) could conquer Georgia. His army was defeated by Armenians near the Kur River, but Armenian king Abas (929-953) did not develop the success. After Georgi died Abkhazian kings have lost their chance to keep Georgia under their control.

In the second half of the X century in Transcaucasus was acting powerful David the Curopalate of Taik. He called for help Smbat II the king of Armenia (977-989) and they jointly could overthrow Theodos the Abkhazian king (975-978) and put on the Abkhazian throne Bagrat III Bagratuni (978-1014) son of daughter of Georgi the Abkhazian king and Gurgen Bagratuni from Kgharjk.

During two decades Bagrat could liquidate all Kgharjian Bagratunis and David the Curopalate of Taik. The main goal of this policy was to overcome the feudal separatism and form a united kingdom of chalcedonians.

When Gagik I the Armenian king (989-1020) could strengthen the Armenian kingdom again, Bagrat III used its authority and power in confrontation with the Gandzak emirate.

On the first decade of XI century Bagrat III could consolidate Transcaucasus chalcedonian provinces and found the united kingdom of chalcedonians.

ՑԱՆԿԵՐ

Ա. ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբաս թագավոր – 50, 51, 67, 69, 71, 76-80, 118
Աբլղարիբ Պահլավունի – 99
Աբուլաձե Ի. – 19, 82
Ադոնց Ն. – 9-10, 13, 24, 78, 80, 102
Ալիշան Ղ. – 87
Ակինեան Ն. – 82
Անանուն Զրուցագիր – 56
Անչաբաձե Զ. – 70, 73, 85, 91-93
Աշոտ Ա Բագրատունի, հայոց թագավոր – 12-13, 23-25, 39-40, 42, 46-47, 50-52, 74-76
Աշոտ Բ Երկաթ, հայոց թագավոր – 61, 65-67, 69-71, 73, 75, 80, 82, 118
Աշոտ Բագրատունի, հայոց իշխան – 8
Աշոտ Գ Ողորմած, հայոց թագավոր – 84-85, 89
Աշոտ Կիսկաս – 71-72, 77
Աշոտ կուրապաղատ – 8-12, 20, 22, 28-29, 37-38, 40-41, 43-44, 47, 117
Աշոտ Մսակեր Բագրատունի, հայոց իշխան – 9-10, 12, 36-38, 42-43
Աշոտ, իշխանաց իշխան, տե՛ս Աշոտ Ա Բագրատունի, հայոց թագավոր
Աշոտ, որդի Շապուհի, Բռնավոր – 69
Աշութ իբն ալ-Աբբաս, տե՛ս Աշոտ Գ Ողորմած, հայոց թագավոր
Ասողիկ – 10, 18, 60-62, 77-79, 92, 95-97, 101, 105-108, 109
Ատրներսեհ Զամեցի – 86
Ատրներսեհ, Բագրատ մագիստրոսի հայր – 106, 115
Ատրներսեհ Բագրատունի, Ատրներսեհ, Դավիթ իշխանի որդի, Ատրներսեհ, Կղարջքի տեր – 24-26, 32-33, 38-40, 44, 47, 50-71, 73, 75, 81-82, 87, 103
Ատրներսեհ, Վասակի որդի – 8-13, 21, 48
Արիստակես Լաստիվերտցի – 100, 102, 105, 107-108, 111
Արսեն, վրաց կաթողիկոս – 31, 48-49
Արտաշես Ա, հայոց թագավոր – 14

Աֆշին, Ատրպատականի
ամիրա– 51-55, 59-61

Բագարատ, Աշոտ
կուրապաղատի որդի – 12-
13, 20, 22, 30, 43, 45, 47-49,
117
Բագրատ Գ Բագրատունի – 88-
89, 92- 116, 118
Բագրատ Խև – 87, 90, 95-99,
103-106, 111-113
Բագրատ մագիստրոս – 82, 90,
103
Բագրատ, Ատրներսեհի որդի –
105
Բագրատ, Կոստանդին Գ-ի
որդի – 70
Բարաթով Ս. – 100
Բարթիկյան Հ. – 54, 101, 105
Բարսեղ (Վասիլ) Բ,
Բյուզանդիայի կայսր – 101,
105
Բարսեղ (Վասիլ) եպիսկոպոս –
81
Բեր, աբխազաց իշխան – 77–79
Բուղա, Խալիֆայության
զորավար – 22

Գագիկ Ա, Հայոց թագավոր –
18, 90, 96-98, 106, 115-116,
118-119
Գագիկ Արծրունի – 60-61
Գագիկ, Վասպուրականի
իշխան – 61
Գեորգի Մերչուլ – 9, 17, 28, 43,
44
Գեորգի Չորչանեցի– 30, 48
Գեորգի, Աձղուրի վանքի
առաջնորդ – 31
Գեորգի Ա, աբխազաց
թագավոր – 23, 70, 80, 84-85,
89, 105, 107-112
Գրիգոր Բակուրյան – 17, 114
Գրիգոր Խանձթեցի – 9, 17, 20,
28-31, 41-43, 45-46, 49, 115
Գվարամ Բագրատունի – 12-
13, 20, 30-31, 38, 39-40,46, 47-
50
Գուրանդուխտ – 89, 95
Գուրգեն, Ատրներսեհի որդի –40
Գուրգեն, Բագրատ
Արտանուջեցու որդի – 99-
100, 106
Գուրգեն, վրաց իշխան – 56, 65-
66, 68, 70-71, 77-78
Գուրգեն, վրաց թագավոր – 66,
68, 83, 89, 104-106, 109-113
Գուրգենիձե Ն. – 52
Գևորգ կաթողիկոս – 53

Դավիթ կուրապաղատ – 82, 87,
87-92, 94-98, 100-113, 117-
118

Դավիթ, Ատրներսեհի որդի – 71
Դավիթ, Բագարատի որդի – 43
Դավիթ, Բագրատ մագիստրոսի որդի – 82-83
Դավիթ, Սմբատի որդի – 71, 83
Դավիթ, վրաց թագավոր – 71
Դեմետրե, աբխազաց թագավոր – 78, 85-86
Դինար, աղվանից թագուհի – 70

Երեմյան Ս. – 14, 21, 24, 39
Եվստաթիոս Բոյիլաս– 17

Թաղայշվիլի Ե. – 25, 92, 103
Թելավի – 64
Թեոդոս, աբխազաց թագավոր – 86-87, 89, 92
Թովմա Մեծոփեցի – 8
Թումանով Կ. – 100
Թևտաս (Թեոդոս) – 89

Իլարիոն, եպիսկոպոս – 101
Իսհակ (Սահակ), Տփղիսի ամիրա – 22, 29
Իվանե, Մարուշի որդի – 87-91, 104

Լանկ-Թամուր – 8
Լիպարիտ Բաղվաշ, իշխան – 21, 39-40
Լորդկիպանիձե Մ. – 19, 25, 98
Լևոն, Գեորգիի որդի – 80, 83, 85-86

Ծուլայա Գ. – 15, 23, 27

Կեկելիձեի Կ. – 6
Կյուրիկե (Կվիրիկե) – 63-65, 83-84, 86
Կոստանդին Գ, աբխազաց թագավոր – 26, 32, 55-59, 63-65, 70
Կոստանդին Ծիրանածին, Բյուզանդիայի կայսր – 65-67, 71
Կոստանդին, Գեորգիի որդի – 81

Համան, աղվանից թագավոր – 52, 60-61
Հասան, հայ իշխան – 57-58
Հարությունյան Վ. – 17
Հյուբշմանը Հ. – 14
Հովհաննես Դրասխանակերտցի – 25-26, 39, 44, 50-60, 65-67, 70, 78
Հովհաննես Սկիլիցես – 105
Հավնունի, իշխան– 58

Մալխասյանց Ստ. – 10

Մամլան ամիրա – 96-98
Մանանդյան Հ. – 104
Մաշտոց, կաթողիկոս – 53
Մառ Ն. – 15-16, 21, 33, 39, 97, 116
Մասուդի – 22, 50, 65
Մատթեոս Ուռհայեցի – 100-102
Մարկվարտ Յո. – 14
Մելիքիշվիլի Գ. – 32, 90, 92
Մխիթար Անեցի – 87
Մխիթար Այրիվանեցի – 42, 87-89
Մովսես Խորենացի – 14, 18
Մութավաքիլ, խալիֆա – 22
Մուհամմադ իբն Խալիդ – 22
Մունաջջիմ-Բաշի – 84
Մուշեղ, Սմբատ Ա-ի որդի – 56
Մուրադյան Պ. – 17

Յահիա Անտիոքցի – 104
Յուսուֆ, Ատրպատականի ամիրա – 28, 32, 53, 58-64, 69-70

Նասր Բագրատունի – 13, 24, 38-40, 46, 49-50
Ներսես Մեծոփեցի – 20-21
Նիկողայոս պատրիարք – 68
Նիկոն Սևսարեցի – 16

Շապուհ Բագրատունի, Աշոտ Մսակերի եղբայր – 10
Շապուհ Բագրատունի, պատմիչ – 56

Չամչյանց Մ. – 84

Պտղոմեոս – 14

Զանաշիա Ս. – 10, 90, 108
Զավախիշվիլի Ի. – 57, 79, 81, 85, 90, 109
Զուրջին, տե՛ս Գուրգեն, վրաց թագավոր

Ռատ Լիպարիտյան – 94-95

Սաբան – 45
Սահակ Մռութ – 42
Սերապիոն Զարզմեցի – 6, 30, 47, 49
Սմբատ, Ատրներսեհ թագավորի որդի – 83
Սմբատ, Բագրատ Արտանուջելու որդի – 101-102
Սմբատ, Բագրատի հայր – 87
Սմբատ, Գուրգենի որդի – 94
Սմբատ, Դավթի որդի – 8, 19, 25, 39, 40, 44, 52, 64, 71, 110-111

Սմբատ Ա, հայոց թագավոր – 13, 21, 24-26, 28, 32, 42, 50-53-61, 63-69, 70-71, 73-76, 80-82, 103, 118
Սմբատ Բ, հայոց թագավոր – 89, 90, 92-96, 109, 113
Սմբատ Խոստովանող, տե՛ս Սմբատ Ա, Հայոց թագավոր
Սմբատ կուրապաղատ – 90
Սմբատ սպարապետ – 100-103
Ստեփանոս Մեծոփեցի – 20-21
Ստեփանոս Տարոնեցի – 10
Ստեփանոս Օրբելյան – 52, 59, 60

Վախուշտ Բագրատիոն – 11-13, 39, 47
Վաչնաձե Ն. – 6
Վասակ, Աշոտ Բագրատունու որդի – 8-11
Վասակ, Սյունյաց իշխան – 61
Վասիլ Զարզմեցի – 30, 49
Վարդան վարդապետ – 8, 10-11, 24, 37-38, 42, 62, 78, 89-90

Տեր-Ղևոնդյան Ա. – 9, 10

Ցագարեիշվիլի Ե. – 44
Ցլիկ Ամրամ – 69
Ցկիր – 29

Ուխտանես – 18, 85

Փաղլուն – 80, 115-116
Փավստոս Բուզանդ –14

Բ. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Աբխազավրացական թագավորություն –88, 114, 115
Աբխազաց թագավորություն – 5, 9, 12, 22-23, 26, 32-33, 43, 46-48, 56-57, 59-61, 63-65, 72, 74-77, 79,-80, 83-88, 90- 95, 99, 101-102, 113-116, 118
Աբխազք, տե՛ս Աբխազաց թագավորություն
Ագար (Էգր կամ Աճարա) – 8, 13, 26, 44, 65, 72, 77, 92
Ագվեթ գավառ-95
Ալազան, գետ – 63-64
Ալանաց Դրունք – 55
Ախլցխա – 30
Ածղուրի վանք – 30-31
Աղվանից աշխարհ, տե՛ս Աղվանք
Աղվանից թագավորություն, տե՛ս Աղվանք
Աղվանք – 54, 59-61, 63-66, 68, 70, 72, 74-76, 78
Աղվանք (իմա՛ Հայոց Արևելից կողմեր) – 28, 32, 52, 71, 87
Այսրկովկաս – 5, 23, 36-37, 41, 50, 55, 58-59, 63, 65-66, 71-80, 84, 88-89, 90-92, 99-100, 102, 112, 114-118
Այրարատ – 80
Անի – 58, 97
Անչայի վանք – 29
Աշոցք – 10, 12-13, 37
Աշունք (Օշկ) եկեղեցի – 42
Աջարա-64, 71, 76, 90
Ասիսփորի (իմա՛ Արսեաց փոր), գավառ – 8
Ատրպատական – 26, 28, 32, 52, 59, 63-64, 71, 96-98
Արաբական խալիֆայություն – 10, 12, 24, 36, 58, 73
Արգվեթ, գավառ – 95
Արմինիա վարչական շրջան – 10-12, 22
Արշարունիք, գավառ – 37
Արսեաց փոր, գավառ – 9
Արտահան, գավառ – 12-14, 38-40, 44, 56, 90, 109-111, 117
Արտանուջ – 11, 17, 71, 78-79

Բագրատունիների թագավորություն – 36, 89, 106, 117
Բագրատունիների վրացական թագավորություն – 5, 117, 119
Բագրատունյաց Հայաստան – 74

Բեդիայի եկեղեցի – 114
Բյուզանդական կայսրություն, տե՛ս Բյուզանդիա
Բյուզանդիա – 6, 8, 15, 24, 37, 52, 54, 58, 65, 68, 72, 98, 101-102, 107, 110-113, 117

Գանձակ – 86, 115-117
Գավազ, ավան – 64
Գարդաբան – 84
Գարդման, գավառ – 81
Գեղամա ծով – 80
Գոգարենե – 14
Գոգշեն, գավառ – 56
Գուգարք – 5, 11, 14, 26- 27, 37-40, 50-52, 55, 67-68, 109-110, 113
Գուրիա (Վուրի աշխարհ) – 55-57

Դարյալի լեռնանցք – 80
Դարյունից բերդ – 37
Դլվեկ (Դլիվ) գյուղ – 109
Դվին – 71, 84-85

Եգերք, տե՛ս Աբխազք
Երազգավորս – 50, 54
Երկրորդ Արմինիա – 11

Զարզմայի վանք – 30

Թելավ-63
Թբիլիսի, տե՛ս Տփղիս
Թմոգվ բերդ (Թմբկաբերդ) – 99
Թորթոմ, գետ – 16
Թռեղք – 12-13, 40, 85-86, 95

Իշխանի եկեղեցի – 45, 82, 103, 108

Լոմսիանթա բերդ – 12
Լիխի լեռնաձղթա-95

Խանձթա վանք – 43
Խորձենե – 14

Ծաղկոտն, գավառ – 96
Ծանարաց քորեպիսկոպոսություն – 22, 85-86

Կալմախ – 40
Կախք – 5, 63-65, 68, 74-75, 80, 83-90, 100, 112, 115, 120
Կանգարք, գավառ – 56
Կատարզենե – 14
Կարին, գավառ – 81
Կարնի-Տայս (Տաոս-Կարի) – 10
Կարս – 78-79
Կղարջք – 5-52, 54-57, 59, 61, 63-67, 70-77, 80-83, 89-95, 98-101, 105, 108, 111-115, 117-118

Կղարջի թագավորություն – 76, 80-81
Կող, գավառ – 10-11, 56, 109-111
Կոստանդնապոլիս – 68, 114
Կովկաս – 114
Կովկասյան լեռներ – 50, 77, 86, 95
Կվել, բերդ, տե՛ս Ղվել, բերդ
Կուր, գետ – 18, 30, 66, 78-80, 95

Համավրացական թագավորություն –63, 112, 114
Հայաստան – 5, 9-10, 12, 14, 17, 19-20, 37, 42, 49, 53, 56, 59, 62, 64-68, 73-78, 80, 85, 97, 103, 106-107
Հայոց աշխարհ, տե՛ս Հայաստան
Հայոց Արևելից կողմանք – 95
Հայոց թագավորություն – 51, 61, 73-79, 82, 84-85, 91-93, 98, 115-119
Հարավային Վիրք – 19
Հերք – 112, 115

Զամ – 86
Զայլցեղ, գավառ – 56
Զորագետ – 81
Ղադո լեռներ – 9, 43
Ղվել բերդ – 64, 71, 76
Ղվիրիլա գետ – 95

Ճակք, գավառ – 108, 110-112

Մանազկերտ – 96
Մանգլեաց փոր, գավառ – 94
Մեծ Հայք – 5, 14-15, 27, 34, 35
Մեծրաց լեռներ – 107
Միջագետք – 42
Միջնաձոր – 43
Մոսքական լեռներ – 30, 43

Նավհանաց աշխարհ – 56
Ներքին Ջավախք, գավառ – 14
Նիգալ, գավառ – 8, 9, 26, 44,

Շամշուլդե, ամրոց – 18
Շավշք, գավառ – 8, 9, 13-14, 26, 40, 44, 90, 96, 109-111
Շատբերդ – 29, 41, 43
Շիրակ, գավառ – 5, 10, 23, 32, 37, 42, 45-46, 81, 117

Պարխարյան լեռներ – 10
Պետրիծոնի վանք – 16, 18, 114

Ջավախք – 12-13, 38-39, 44, 47, 85-86, 90, 95, 109-112
Ջվարիսցխե, բերդ – 12

Ջուրզան – 49

Ռուսաստան – 5

Սակուրք (Սկվիրեթ, Սակուրեթ), բերդ – 95-96
Սամշուլդեի – 18, 65, 69
Սամցխե – 6, 8, 11-13, 26, 30-31, 39, 44, 47-49, 64, 87, 90, 99, 110, 117
Սիսական, տե՛ս Սյունիք
Սյունիք – 53, 60-62, 74, 81, 97
Սոմխեթ (Հայք) – 18-19
Սպեր, գավառ – 90
Ստորին Տայք – 8, 10
Սուրբ Առաքելոց եկեղեցի – 78
Սուրբ Աստվածածին գյուղ – 107
Սուրբ Կաթողիկե-97

Վասպուրական – 56, 61-62, 81, 95
Վասպուրականի թագավորություն – 59-61, 76
Վանանդ, գավառ – 51
Վեժին, բերդ – 64
Վերին Քարթլի – 13
Վիհիկ, գյուղ – 16
Վիրք – 5-7, 10-11, 13, 15, 17-20, 21-25, 27-28, 31-33, 37, 39, 44, 46-48, 52- 56, 64, 66-68, 71-72, 74-76, 80-81, 83-85, 87-96, 98, 100, 103-105, 113-114, 117-118
Վրաց աշխարհ, տե՛ս Վիրք
Վրաց դաշտ – 18
Վրացական թագավորություն – 5, 7, 28, 54, 61, 119

Տայք – 5, 9-10, 12-13, 17, 26-27, 37, 40, 42, 44-45, 58, 80-82, 87-93, 95-108, 110-115, 117-118
Տանձոտ – 17
Տաշիրք, գավառ – 12-13, 18, 38, 58
Տարոն, գավառ – 37
Տփղիս – 6, 11, 18, 22, 29, 37-39, 54, 67, 86, 110, 117
Տփղիսի ամիրայություն – 22

Ուղթիս (Օլթի) – 81, 107, 110
Ուտիք – 69
Ուփլիսցխե – 22, 56, 87-90

Փանասկերտ – 99-101, 110-112

Քարթլի – 12, 23, 88, 99, 113
Քսան, գետ – 11, 22
Քութայսի եկեղեցի – 114

Օձրխե, բերդ – 12
Օպիզա, վանք – 17, 28, 43, 45
Օրճոբ, բերդ – 64

Գ. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ, ՑԵՂԵՐԻ ԵՎ ՏՈՀՄԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ

Աբխազներ – 24, 84
Ալաններ – 24
Ամատունիներ – 10
Առանշահիկներ – 74
Արաբներ – 6, 37, 50
Արծրունիներ– 52, 74
Արշակունիներ– 8

Բագրատունիներ – 5, 7-10, 12-13, 19-20, 23-24, 28-29, 31-32, 36-37, 40-42, 44-47, 49-51, 55, 66-67, 73-75, 78, 80-82, 89-95, 101-102, 104, 108, 110, 112, 114-115, 117, 119

Ծանարներ – 80

Կամսարականներ – 10, 37

Հայ, հայեր – 6-7, 12-14, 16-20, 23-25, 35, 38, 40, 43-44, 53-56, 58, 60-61, 64-69, 74, 78-79, 83-85, 98-99, 103, 106-107, 118
Հույն – 14, 18

Մամիկոնյաններ – 9, 10, 37

Շադդադյաններ – 86

Սալարյաններ – 70
Սասանյաններ – 19
Սարմատացիներ – 77-79, 95

Վրացի – 5, 18-19, 23, 25, 36, 69

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՎՐԱՑ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Ստորագրված է տպագրության՝ 31.07.2018:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 8.25:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am